

24

ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

63
4-29



ԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ



4863



Կապ 1 թիվ II



087.1
U-25

1934
ՍՈՒՆԻԿԻ

23 JUN 2009



03
4-29

№ 7 «ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 7

087.1
4-25

ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

80

4863

ՄԱՍ I

- 1. Սոյա
- 2. Գեհնանուռ (արախիս)
- 3. Կաուչուկ յեվ գուսսապերչ

ՄԱՍ II

- 1. Շերամ
- 2. ձագար



ՍԱՆԵԼԳԱՄԻ 1934 թ. ԹԻՖԼԻՍ



793
41

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1. Սոյն
2. Գեղանույն (արախիս)
3. Կապույտ լեվ գույնի



493
41

Ս Ո Յ Ա

ՔԵ ԻՆՉԵՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՊԱՏՐԱՍԵԼ ՍՈՅԱՅԻՑ

Յերեկ շատերդ կարծում եք, թե կաթը կարելի չէ
 առանձաղ միայն կաթնատու կենդանիներից, որինակ, կո-
 վից, վոչխարից, այծից, գոմեշից և այլն, բայց բարորո-
 վին իզուր. կա մի բույս, վոր նույնպես կաթ է տալիս
 մեզ. այն էս շատ համեղ ու անդարար կաթ: Այդ բույսը
 սոյան է: Սոյայից կաթն ստանում են այսպես. վերցնում
 են նրա հատիկները, վոր շատ նման են լոբու հատիկնե-
 րին, ածում են ժաբուր ջրի մեջ և պահում մի ամբողջ
 օր: Ջրի մեջ այդ հատիկները հեռոցհեռու ուռչում, մեծա-
 նում են և փափկում: Այնուհետև փափկած հատիկները
 ջարդում, արտում են սանդի մեջ և կամ աղում են մսի
 մեքենայով և ստանում թանձր շփոթի նման մի բան:
 Դրանից հետո նրա ամեն մի բաժակի վրա ածում յեն յե-
 րեք բաժակ ջուր, լավ խառնում և սպա սաքացնելով
 թեթև կերպով յեփ տալիս: Այսպես ստացված հեղուկը
 փոքր ինչ սառեցնելուց հետո քաժում են քաթանի շորի
 միջով և կաթն արդեն պատրաստ է:

Քամելու ժամանակ քաթանի վրա մեռւմ են հատիկ-
 ների կեղևը և սլինդ մասերը: Մեծ անտեսությունների
 մեջ, վորտեղ սոյայի հատիկներից մեծ չափով կաթ են

պատրաստում, այդ մասերը դեն չեն ածում, այլ կենդանու-
կրում են նրանով հավերին, հորթերին և գոճիներին:

Սոյայի կաթը միայն տեսքով չի նման իսկական մու-
թին. նա ունի կաթի բոլոր սննդարար հատկութիւնները:
Բժիշկների կարծիքով այդ կաթը փոքրիկ յերեխաների հա-
մար ավելի ոգտակար է, քան նույն իսկ կովի կաթը: Եւ
ոգտակար է և այն հիվանդների համար, վորոնց մաշակու-
ղութիւնը խանգարված է, զրա համար ել վորոշ հիվան-
դութիւնների ժամանակ բժիշկները խորհուրդ են տալիս
գործածել սոյայի կաթ: Սոյայի կաթը յեփելու ժամանակ
յերեսին սեր է բռնում և բարձրանում է այնպէս, ինչ-
պէս կովի կաթը:

Ամերիկայում այժմ ահագին քանակութեամբ գործա-
բաններ կան, վորոնք սոյայի հատիկներից կաթ են պատ-
րաստում, ապա յեփ տալով թանձրացնում և ածելով տու-
փերի մեջ՝ վաճառքի յեն հանում իբրև խտացրած կաթի
կոնսերվ (պահածո):

Սոյայի կաթից պատրաստում են շոռ, պանիր և կա-
րագ: Շոռ պատրաստելու համար նրա մեջ ածում են քիչ
քանակութեամբ կիր կամ դաճ, վորոնց ազդեցութեամբ
կաթը շուտով մակարդվում է. այնուհետև մակարդված
կաթը քսում են քաթանի շորի միջով և ապա մաքուր
ջրով լավ լվալով՝ հեռացնում են կիրը կամ դաճը: Սոյա-
յից պատրաստված շոռը շատ շուտով փչանում է, զրա
համար ել յերկար չի կարելի պահել. պետք է առհասա-
րակ պատրաստել այնքան, ինչքան անհրաժեշտ է մի որ-
վա համար: Բացի շոռից, ինչպէս ասացինք սոյայի կաթից
պատրաստում են և պանիր ու կարագ: Վերջիններս նույն-
պէս իրենց համով ու հատկութիւններով շատ նման են
սովորական մթերքներին:

Սոյայից ստանում են և բալական լավ ձեթ: Փոր-
ձերը ցույց են տվել, վոր սոյայի հատիկները պարունա-
կում են իրենց մեջ 18 տոկոս ձեթ: Այս ձեթը շատ նը-
ման է արևածաղկի, կտավատի և այլ բույսերից ստաց-
ված ձեթին և գործ է ածվում ճիշտ նույն նպատակնե-
րով, ինչ վոր այդ բույսերից ստացված ձեթը:

Սոյայից ստանում են և ալյուր. զրա համար հարկա-
վոր է սոյայի հատիկները ազալ սովորական աղացներում:
Բայց վորովհետև սոյայի հատիկներն իրենց մեջ, ինչպէս
տեսանք, պարունակում են առատ չափով յուղ, ուստի
նրա ալյուրը շատ անհարմար է հաց թխելու համար: Սա-
կայն յերբ նրա մի բաժնի հետ խառնում են յերեք բա-
ժին ցորենի ալյուր, ստացվում է միայնպիսի խառնուրդ,
վորից կարելի յե պատրաստել բալական սննդարար հաց:
Լավ հաց է տալիս սոյայի ալյուրը և հաճարի ալյուրի հետ,
բայց այս դեպքում սոյայի ալյուրը պետք է խառնվի հա-
վասար չափով հաճարի ալյուրի հետ:

Ահա թե ինչեր են պատրաստում սոյայից. բայց այդ
դեռ բոլորը չէ: Սոյայից ստանում են և մսի ու ձվի նը-
ման նյութեր, վորոնցից պատրաստում են արդեն զա-
նազան տեսակ կերակուրներ: Այս կերակուրներն իրենց
թե համով և թե սննդարարութեամբ շատ նման են սովո-
րական մսեղեն և ձվեղեն կերակուրներին:

Չինաստանում սոյայից պատրաստում են 200-ից ա-
վելի զանազան տեսակի կերակուրներ: Պետք է ասել, վոր
այնտեղ կան հատուկ ճաշարաններ, վորտեղ բոլոր կերա-
կուրները պատրաստում են միայն և կամ զխափորապէս
սոյայից: Այդ ճաշարաններում գործածվող մսեղենը, ձուն,
յուղը, կարագը, պանիրը, կաթը, թխվածքները, սալաթը,
անուշեղենները բոլորը պատրաստում են սոյայից: Այն-
տեղ ճաշից հետո հրամցվող սուրճը նույնպէս սոյայից են

պատրաստում, վորի համար սոյայի հատիկները բովում են և ապա աղում: Լավ սուրճ ստանալու համար սոյայի հատիկները նախ թեթև կերպով յեփ են տալիս, չորացնում և ապա բովում ու աղում:

Սոյան վորոշ դեր է կատարում և արդյունաբերութեան մեջ. նրա յուղից գործարաններում պատրաստում են սապոն, ներկեր, լակեր և այլն: Սոյայի յուղը գործ են ածում լինոլիումի և մի շարք քիմիական նյութերի արդյունաբերութեան մեջ: Վերջին ժամանակներս գիտնականները սոյայի յուղից ստացել են և կերոսինի նման մի նյութ:

Այս բոլորից հետո կարծում ենք, վոր միանգամայն իրավացի յեն այն մարդիկ, վոր սոյային տվել են «գարմանալի բույս» անունը: Ծանոթանանք այդ գարմանալի բույսի հետ:

ՍՈՅԱՆ ԻՐԻՆՎ ԲՈՒՅՍ

Սոյայի հայրենիքը Չինաստանն է: Այստեղ նա համարվում է ամենահին մշակովի բույսերից մեկը. տեղեկություններ կան, վոր չինացիք սկսել են մշակել այդ բույսը մեզնից դեռևս 4000, վոմանց կարծիքով նույնիսկ 6000 տարի առաջ և իզուր չի, վոր նրան շատերը անվանում են չինական յրբի: Չինաստանից մուտք է գործել նա Յապոնիա, Մանջուրիա, Կորեյա և Հեռավոր արևելքի այլ յերկրները: Հազարավոր տարիներ շարունակ բրնձի հետ միասին կերակրել է նա Չինաստանի և նրա հարևան յերկրների բազմամիլիոն բնակիչներին: Մինչև այժմ Մանջուրիայում և Միուկեյան մեջ Մանջուրիային սահմանակից մասերում սոյան վայրի վիճակում աճում է դեռ բույսերի լանջերին, մարգագետիններում և դետերի հովիտներում:

Վայրի սոյան ընդհանուր առմամբ շատ նման է մշակովի սոյային. միայն նրա տերևներն տվելի փոքր են, քան մշակովի սոյայի տերևները. փոքր են նույնպես և նրա հատիկները: Տեղական աղբասները հավաքում են նրա այդ հատիկները և գործ ածում իրեն սնունդ:




Մշակովի սոյան, վոր հազարավոր տարիներ զտնվել է մարդու խնամքի տակ, յենթարկվել է բավական մեծ փոփոխությունների. մեծացել է նրա թուփը, շառացել են պտուղները և խոշորացել ու ավելի սննդարար դարձել հատիկները:

Մշակովի սոյայի արմատը բավական յերկար է և շատ խորն է մտնում հողի մեջ. ցողունը ճյուղավոր է և հասնում է մոտավորապես 60—70 սանտիմետր բարձ-

րութեան: Տերևները յերեքնուկ են. առանձին-առանձին մանրատերևների ձևը բազմազան է. նրանք լինում են կլոր, ձվաձև, նշտարաձև, անգամ միևնույն թփի վրա կարելի յե գտնել բազմազան ձևի տերևներ, նայած տեղին ու հանգամանքներին: Բազմազան են և տերևների գույնը, որինակ, լինում են կանաչ, մուգ-կանաչ, կանաչ-սպիտակավուն յերանգով և վերջապես դեղնավանաչ տերևներ: Ամբողջ թուփը, պատած է մանրիկ սպիտակավուն կամ չիկավուն ծաղիկներով: Ծաղիկները շատ մանր են, նախակաձև և ունեն սպիտակ և կամ մանիշակի գույն: Պրտուղները պատիճավոր են, ունեն զանազան մեծություն

ու ձև և պարունակում են իրենց մեջ 2—3 հատիկ: Պատիճ-ները լինում են սև, բաց շագանակագույն, շեկ և այլն մերկ կամ մազիկներով պատած: Սերմերը՝ կլոր ձվաձև և տափակ, իսկ ըստ գույ-նի, գեղին, կանաչ, շա-գանակագույն, կարմրա-փսե, յերբեմն ել սև:




Սոյան միամյա բույս է. տարվա տաք շրջա-նում նա ծրում է, մե-ծանում, տալիս պտուղ-ներ և չորանում: Հասու-նության շրջանին նու-յաժ, նա լինում է վա-ղահաս և ուշահաս: Ու-շահասներն իրենց գար-

գաղման համար պահանջում են 180—200 օր, այսինքն 6—7 ամիս, իսկ վաղահասները՝ 80—85 օր, ասել է, հա-զիվ յերեք ամիս:


Սոյան ընդհանուր առմամբ հարավային բույս է և իր զարգացման համար պահանջում է բավական մեծ ջերմու-թյուն: Նրա սերմերը ծրում են միայն այն ժամանակ, երբ հողի, նույնպես և սղի բարեխառնությունը հասնում է 15 աստիճանի: Գյուղատնտեսների դիտողությունները ցույց են տվել, վոր նրա լրիվ զարգացման համար ան-հրաժեշտ է 1500-ից մինչև 3000 աստիճան: Այս ջերմու-թյունը հանդիսանում է որակյան միջին բարեխառնություն-ների գուժարը: Յեթե վորևե վայրում այդ գուժարը չի հասնում մեր հիշած թվերին, նշանակում է, այնպեղ չի կարելի զբաղվել սոյայի մշակութամբ: Իսկ որվա միջին բարեխառնությունը գտնելու համար պետք է չափել բա-

բեխառնությունը որվա մեջ յերեք անգամ՝ տափուր-կեսորին և յերեկոյան և ապա գուժարելով ստացված ջեր-մաստիճանները՝ բաժանել յերեքի վրա: Այսպես որինակ-յեթե ջերմաստիճանն առավուր յեղել է 8, կեսորին՝ 15, յերեկոյան՝ 10, ապա ուրեմն միջին բարեխառնությունը կլինի՝ $(8 + 15 + 10) : 3 = 11$:



Ուշադրության արժանի յե սոյայի արմատի մի ա-ռանձնահատկությունը. յեթե սոյայի թուփը հանենք գեա-նից և խնամքով լվանք նրա արմատները, վերջիններիս վրա կնկատենք բազմաթիվ փոքրիկ ուռուցքներ կամ պալարներ: Իմանալու համար թե ինչ բաներ են այդ պալարները՝ դիտնականները կարել են այդ պալարները և

ուշադրութեամբ դիտել միկրոսկոպի տակ: Դիտողութունը ցույց է տվել, վոր նրանց բջիջները լիքն են փոքրիկ բակտերիաներով: Բակտերիաներն, ինչպես զիտեք, առաջ են բերում տարափոխիկ հիվանդութիւններ, սակայն սոյաջի արմատների պալարների մեջ ապրող բակտերիաները քիս-



սակար չեն, նրանք, ընդհակառակը, շատ մեծ ոգուտ են տալիս նրան: Բանից դուրս է գալիս, վոր այդ բակտերիաներն ընդունակ են ողից անմիջապես ազոտ վերցնելու և պատրաստելու իրենց մեջ ազոտային նյութեր, այսինքն այնպիսի նյութեր, վորոնց կարիքը շատ են զգում բույսերը: Յե՛վ իսկապես, յերբ հողի մեջ բացակայում են այդ նյութերը, բույսերը չեն զարգանում, այլ հետզհետե հյուծվում են և վերջն ել մեռնում: Ուրեմն, սոյան ոգավում է իր պալարներից: Բայց այդ դեռ բազմական չէ. նրա պալարներից ոգավում են նաև նրանից հետո մշակվող բույսերը: Յե՛վ միանգամայն հասկանալի պատճառով. բերքը հավաքելուց հետո սոյայի արմատները

մեռնում են հողում և իրենց պալարների մեջ ունեցած ազոտային նյութերն ամբողջովին տալիս են հողին, ասել է, կատարում են ճիշտ նույն գործողութիւնը, ինչ վոր մենք անում ենք հողը պարարտացնելու ժամանակ:

Բայց սոյայի արմատների վրա միշտ պալարներ չեն լինում. յեթե հողի մեջ բակտերիաներ չկան, պարզ է, վոր

սոյայի արմատները պալարներ տալ չեն կարող: Հարց է առաջանում, ինչպես անել, վոր հողը վարակվի բակտերիաներով: Ամենապարզ միջոցն այս է: Յեթե հարևան արտի մեջ բննող սոյայի արմատների վրա կան պալարներ, նշանակում է, այնտեղի հողն ունի իր մեջ արդեն բակտերիաներ. հարկավոր է, վերցնել այդ արտի հողից մի քիչ և շաղ տալ այն հողամասի վրա, վորտեղ պետք է սոյա ցանել և ապա լավ ցաքանել: Մեկ հեկտարի համար պետք է վերցնել ընդամենը մի պարկ հող:

Կա և մի այլ միջոց: Մոսկվայում Ռ.Ս.Ֆեժ-ի Հողփողկոմատի բակտերիոլոգիական—գյուղատնտեսական կայանը պատրաստում է մի տեսակի հող, վոր շատ հարուստ է բակտերիաներով: Այդ հողը կոչվում է նիքրագին: Նիքրագինով վարակում են սոյայի սերմացուն և վոչ հողը: Վարակումը կատարում են այսպես. մի ամանի մեջ ածում են 3 բաժակ տաք ջուր, ապա բաց են անում նիքրագին պարունակող բանկան և ամբողջ նիքրագինը թափում ամանի մեջ և լավ խառնում ջրի հետ, ստացվում է մի պղտոր հեղուկ: Այնուհետև սոյայի սերմացու հատիկները փռում են հատակի վրա և հետզհետե թափում են նրանց վրա պղտոր հեղուկը և լավ խառնում, վոր բոլոր հատիկները հավասարաչափ կերպով թրջվեն նրանով: Դրանով վարակումը վերջացած է համարվում: Այս ձևով վարակված հատիկներն անմիջապես ածում են պարկերի մեջ և տանում արտը ցանելու: Պետք է ասել, վոր վարակված սերմերը յերկար չի կարելի պահել, վորովհետև բակտերիաները կարող են վոչնչանալ: Բակտերիաները վոչնչանում են նաև արևի ճառագայթների տակ, դրա համար ել վարակումը պիտի կատարել ստվերի տակ, իսկ ցանքը առավոտյան կամ յերեկոյան և կամ ամպոտ որերին:

Մի բանկա նիւրապինով կարելի չե վարակել 40 - 50 կիլոգրամ սոյայի հատիկներ, այսինքն այնքան, ինչքան հարկավոր է մի հեկտար սերմելու համար:

ՍՈՅԱՅԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոյան կարող է աճել բոլոր տեսակի հողերի մեջ, բացի աղտո, ճահճային ու տորֆային հողերից, բայց պետք է հողը լավ մշակել: Սոյայի համար վարը պետք է անել աշնանը, փորովհետև այդպիսի վարից հետո հողը ձմեռվա ընթացքում թե առատ քանակութեամբ խոնավութուն է կուտակում իր մեջ և թե փխրացման է յենթարկվում: Բացի դրանից, այդպիսի վարից հետո մոլախոտերը քչանում են: Գարնանը նախ քան ցանելը հողը պետք է լավ ապիանել, հարթել, կոշտերը մանրացնել և խնամքով հեռացնել բոլոր մոլախոտերը:

Ցանքը կատարում են ձեռքով կամ սերմացան մեքենայով, վերջին դեպքում ցանում են շարքերով՝ թողնելով շարքերի միջև 50 - 60 սանտիմետր, իսկ միևնույն շարքի բույսերի միջև 10 - 15 սանտիմետր տարածութուն: Շարքերի միջև լայն արանքներ պահելն անհրաժեշտ է մեքենաներով քաղհան և հողի փխրացումն կատարելու համար: Որտեղ ցանքի դեպքում պետք է նուսրացումն կատարել՝ հանելով համեմատաբար թույլ ու վտիտ բույսերը: Սերմը պետք է ցանել չոր հողերի մեջ 7 սանտիմետր, իսկ խոնավ հողերի մեջ՝ 5 սանտիմետր խորութեան մեջ: Յուրաքանչյուր հեկտարի վրա ցանում են մոտ 50 - 55 կիլոգրամ սերմ:

Ծլերը յերևան են գալիս 7-11-րդ սրբ, իսկ ցուրտ յեղանակներին ել ավելի ուշ: Ծլերի յերևան գալուն կարող է խանգարել անձրևներից հետո հողի մակերևույթին կազմվող կեղևը, դրա համար ել յեթե գետնի յերեսը ծածկված է կեղևով, պետք է թեթև տափանով փշրել այդ կե-

ղիւ, այլապես՝ ծլերը փոշ միայն զժվարութեամբ դուրս կգան գետնի յերեսը, այլ և կարող են խիտ կերպով վնասվել: Սոյան սկզբում աճում է շատ զանդաղ, բայց հետո նրա աճումը գնալով հետզհետե արագանում է: Առաջին քաղհանը կատարում են այն ժամանակ, յերբ յե-



րևան են գալիս սոյայի առաջին յերեք տերևները, իսկ յերկրորդ քաղհանը՝ ծաղկելուց առաջ: Քաղհանի ժամանակ շարքերի միջև յեղած հողը պետք է լավ փխրացնել:

Քաղհանի ուշացումը բավական իջեցնում է բերքը: Սովորաբար սոյայի բուկը չեն տալիս, փորոշ դեպքերում դա նույն իսկ վնասակար արդյունքներ է տալիս:

Բերքը հավաքում են այն ժամանակ, յերբ ներքևի պատիճները զեղնում են: Բերքահավաքը կատարում են գերանդիով, մանգաղով և կամ հնձող մեքենաներով: Հրն-

ձած սոյան պետք է հավաքել և կազմել փոքրիկ դեզեր։
Անձրևներից պաշտպանելու համար պետք է այդ դեզերը
ծածկել ծղոտով և կամ փոխադրել ծածկերի տակ։ Սոյան
կասում են հատուկ կասիչ մեքենաներով, իսկ յեթե չկան
այդպիսի մեքենաներ, պիտի կասել սովորական հացա-
բույսերի կասիչ մեքենաներով, նրանց մեջ վորոշ փոփո-
խութիւններ մտցնելով։ Կասելուց հետո հատիկները պի-
տի չորացնել և պահել չոր շտեմարաններում։

Վրաստանում սոյան մասամբ ցանում են յեզիպտա-
ցորենի հետ միասին. այս դեպքում բերքահավաքի ժամա-
նակ պետք է նախ ձեռքով հանել յեզիպտացորենը և ապա
հնձել սոյան։ Սոյայի և յեզիպտացորենի խառը մշակու-
թյան ժամանակ պետք է պահել նրանց արանքներում
25—30 սանտիմետր տարածութիւն, իսկ ինչ վերաբե-
րում է քաղհանին և հողի փխրացման՝ պիտի կատարել
նույն ձևով, ինչպես վոր սոյայի մաքուր մշակութայն ժա-
մանակ են կատարում։

Սոյան յուրաքանչյուր հեկտարից տալիս է մեկ ու կես
տոնն բերք, իսկ լավ մշակութայն դեպքում՝ եւ ավելի։
Ամերիկայում տալիս է նա հաճախ մոտ յերեք տոնն բերք։
Նշանակում է, համեմայն դեպս, միջին բերքատվութայն
ժամանակ ճնգամ նա տալիս է յերկու տնգամ ավելի բերք,
քան ցորենը։ Բացի դրանից, նա աղոտալին պարարտացում
չի պահանջում և բարձրացնում է իրենից հետո աճող
բույսի բերքատվութիւնը։ Ահա այս է պատճառը, վոր
շատերը սիրով են անցնում սոյայի մշակութին։

Վրաստանում տարածված է սոյայի յերկու սորտ՝
իմերեթիականը և գուրիականը։

Իմերեթիականը ուշահաս է, տալիս է միջին մեծու-
թյամբ, ձվածև և բաց դեղին գույնի հատիկներ, վորոնց

սաղմի մոտ գտնվում է շագանակագույն մի բիծ, նրա
այդ հատիկներից ստացվում է լավորակ յուղ։

Գուրիականը ցանվում է դիտավորապես Գուրիայում՝
Ողուրգեթի շրջանում. տալիս է խոշոր, կլոր յեզերով
տափակ սերմեր, վորոնք փոքր ինչ նման են վոսպին. հա-
տիկները դարձյալ ունեն բաց դեղին գույն, բայց առանց
շագանակագույն բծի։

ՍՈՅԱՅԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոյան ունի բազմաթիւ վնասատուներ, վորոնց մեջ
առանձին ուշադրութայն արժանի յեն սարդի նմանութիւն
ունեցող մի փոքրիկ տիգ, ապա լարավորը և ակացիայի
թիթեռնիկը։ Սարդանման տիգը բուն և դնում սոյայի տերևի
վրա և սկսում է խածել տերևը. նրա խածած տեղը տե-
րևի վրա առաջանում է մի սպիտակ բիծ։ Յերը նրանց
թիվը չափազանց շատ է լինում, տերևը համարյա ամ-
բողջովն սպիտակում է, ապա չորանում և թափվում,
վորի հետևանքով և բույսն սկսում է հյուժմել և մեռնել։
Սյդ ալ չի դեմ պայքարում են բույսի տերևների վրա
ծծմբափոշի շող տալով։

Լարավորըն իր անունը ստացել է շտորիկով այն հանգա-
մանքի, վոր իր տեսքով նման է դեղնավուն լարի մի
փոքրիկ կտորի, մոտավորապես յերկու սանտիմետր յեր-
կարությամբ։

Նա վնասում է մեծ մասամբ սոյայի
արմատային պարանոցը։ Ինչ վերա-
բերում է ակացիայի թիթեռնիկին, ապա պետք է տանք,
վոր սոյային վնասում է վոշ թե ինքը թիթեռնիկը, այլ
նրա թրթուրը, վոր յերկու սանտիմետր յերկարութիւն
ունեցող մի թրթուր է անաչավուն գույնով. ստործում
է սոյայի պատիճները և ուտում նրանց մեջ յեղած հա-

4863

493



տիկները: Այս վնասատուի դեմ պայքարելու միջոցներ դեռ
չեն հայտնագործված: Բացի մեր հիշածներից, խիստ վնասա-
կար վնասատու յե համարվում նաև իշխառանչը, վոր
փչացնում է սոյայի արմատները: Պետք է ասել, վոր մինչ-



չև այժմ հայտնի յեն 57 զանազան տե-
սակի միջատներ, վորոնք փչացնում են
սոյայի կամ տերեւները կամ ծաղիկները
կամ պտուղները, սերմերը և կամ ցո-
ղունն ու արմատները: Մակայն սոյան

մեզ մոտ նոր բույս է և նրա վնասատուները մեզ մոտ
դեռ լավ չեն ուսումնասիրված, դրա համար էլ շատ հա-
վանական է, վոր նրանց թիվն ապագայում էլ ավելի շա-
տանա:

Վնասատուներից զատ, սոյան յենթակա յե և բազ-
մազան հիվանդությունների, վորոնց թիվն առայժմ հաս-
նում է 40-ի: Իրանց մեծ մասն առաջանում է զանազան
տեսակի մակաբույծ սունկերից և չափազանց վարակիչ է:
Ինչպես վնասատուներից մի քանիսի դեմ մենք դեռ պայ-
քարի միջոցներ չունենք, այնպես էլ այդ հիվանդություն-
ների մեծ մասի դեմ մենք չգիտենք դեռևս, թե ինչպես
պիտի կռվել: Այդ տեսակետից գիտությունը դեռևս շատ
քան ունի անելու ապագայում:

ՍՈՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Սոյան իր ուղտակար հաճությունները շատ շատ
տարածված բույս է Չինաստանում և նրա հարևան յեր-
կրներում: Բավական է ասել, վոր Չինաստանում սոյայի
դաշտերը դրավում են 9 միլիոն հեկտարից ավելի տարա-
ծություն, Մանջուրիայում՝ 4 միլիոն 300 հազար, Կորե-
այում՝ 600 հազար և Յապոնիայում էլ 400 հազարից ա-

վելի հեկտար տարածություն: Մի քանի տասնյակ տա-
րիներ առաջ սոյան մուտք է գործել և Ամերիկա և Հնա-
րյոժ գրան՝ այժմ համարվում է նա այնտեղ լայն մշա-
կումն ունեցող բույսերից մեկը: Յեվրոպա բերվել է
միայն 1908 թվին, բայց այստեղ ևս նա կարողացել է
արդեն բավական ընդարձակ ծավալումն ստանալ: Ինչվե-
րաբերում է Սորերդային Միության, այստեղ նա, ճիշտ
է, շատ վաղուց է մշակվում Չինաստանի սահմանամոտ
մասերում, բայց յերբեք առանձին ուշադրության նյութ
չի յեղել: Մակայն վերջին ժամանակներս Սորերդային
Միության զանազան մասերում ևս նա սկսել է լայն տա-
րածումն ստանալ:

Իերենք մի քանի թվական տվյալներ, վորոնք պարզ
ցույց կտան, թե ինչ արագությամբ է զարգանում սո-
յայի մշակութի Սորերդային Միության մեջ:

1927 թվին սոյան դրաված է յեղել ընդամենը 30
հազար հեկտար տարածություն, 1928 թվին՝ 48,500 հեկ-
տար, 1929 թվին՝ 71,250 հեկտար, 1930 թվին 331 հա-
զար հեկտար, իսկ 1931 թվին սոյայի դրաված տարածու-
թյունը հասել է մոտ 600 հազարի: Նշանակում է, չորս
տարվա ընթացքում նրա դրաված տարածությունն ավե-
լացել է ուղիղ 20 անգամ: Գալով Անդրկովկասին՝ պիտի
տեսնք, վոր այստեղ ևս սոյան դառնում է սովորական
մշակութի բույսերից մեկը: Բավական է ասել, վոր 1930
թվին Անդրկովկասում ցանված է յեղել ընդամենը 22 հա-
զար հեկտար, իսկ 1931 թվին 84 հազար, վորից 40 հա-
զարը յեղել է մաքուր սոյայի ցանք, իսկ 44 հազարը
խառը ցանք՝ յեզիպտացորենի հետ միասին: 1932 թվի
պլանով սոյան պիտի մշակվեր միայն Վրաստանում, այն
ևս գլխավորապես արևմտյան Վրաստանում և յեզիպտա-
ցորենի հետ միասին: Նրա դրաված տարածությունը պի-

տի հասնի մոտավորապես 180—200 հազար հեկտարի։
Յեթե ընդունենք, վոր սոյայի մաքուր ցանքի մի հեկտարը
հավասար է խառը ցանքի 3 և կեսից մինչև 4 հեկտարին,
սոյայի ցանքի ամբողջ տարածութունը հավասար կլինի
մոտ 50 հազար հեկտարի։ Աճուժը շատ պարզ է։

Իրատուութունները ցույց են տվել, վոր յեզիպտա-
ցորենի հետ խառը ցանքը վոչ միայն չի իջեցնում բերքի
քանակը, այլ նույն իսկ բարձրացնում է, միայն յեզիպ-
տացորենի բերքը վորը ինչ թուլացնելով։ Այս իսկ պատ-
ճառով ել վճուժած է 1932 թվին . կատարել միայն խառը
ցանք։ Մոտք չկա, վոր մսի և ճարպի ներկա դժվարու-
թյունների շրջանում սոյան շատ խոշոր դեր ունի կատա-
րելու մեր ժողովրդական տնտեսության մեջ։

«Բաղդավոր է չինական ժողովուրդը, վոր ունի սո-
յա» — ասել է մի անգամ չինական հեղափոխության հայր
Սուն Յատ-սենը։ Մեծ հեղափոխականի այս խոսքը իրա-
վացի կարող է համարվել և այլ շատ ժողովուրդների հա-
մար։ Վոմանք սոյան համարում են մեր դաշնակիցը և
հնգամյակի խոշոր ու գորեղ լճակներից մեկը . և այդ
միանգամայն ճիշտ է, վորովհետև նա պետք է բարելավի
տասնյակ միլիոնավոր աշխատավորների սնունդը։

ԳԵՏՆԱՆՈՒՇ (ԱՐԱԽԻՍ)

ՔԵ ԻՆՁԻ ՀԱՄԱՐ Ե ԳՈՐԾԱԾՎՈՒՄ ԳԵՏՆԱՆՈՒՇԸ

Գետնանշի հատիկները պարունակում են իրենց մեջ
35-ից մինչև 60 տոկ. յուղ, դրա համար ել գետնանշի
մշակության գլխավոր նպատակն է ստանալ գետնանշի յուղ։
Այդ յուղը բարձրորակ յուղ է և իր հատկութուններով
հիշեցնում է ձիթապտղի յուղը։ Տաքության սովորական
ստախճանների վրա նա ունի բաց դեղին գույն, իսկ ցածր
ստախճանների վրա նա նախ պղտորվում է, ապա ամրա-
նում և վերջն ել բոլորովին պնդանում։ Պինդ վիճակում
նա շատ նման է կարագ յուղին և կարող է հեշտությամբ
նրան փոխարինել։ Գետնանշի յուղը գործ է ածվում զըլ-
խավորապես պահածոների (կոնսերվների), մանավանդ
ձկնային պահածոների, իսկ ցածր տեսակը՝ թանգարժեք
ոճառներէ պատրաստության համար։

Գետնանշի յուղը հատիկներից հանում են մամլելու
միջոցով, այսպես, ինչպես հանում են բամբակի հունդե-
րի յուղը։ Յուղը հանելուց հետո տակը մնացած քուսպը,
վոր պարունակում է իր մեջ առատ քանակությամբ սպի-
տակուցային նյութեր, գործ է ածվում զանազան տեսա-
կի հրուշակային նյութեր, գլխավորապես հարվա պատ-
րաստելու համար, իսկ ցորենի ալյուրի հետ խառը վիճա-
կում գործ է ածվում զանազան տեսակի համեղ թխվածք-
ների համար։ Ել տվելի ցածր տեսակի քուսպը տալիս են
պաթնատու կովերին իրրև խիստ արժեքավոր կեր։ Նրա

բոված հատիկները աղալուց հետո խառնելով կաթի և շաքարի հետ, պատրաստում են բավական համեղ ըմպելիք, վոր շատ նման է կակոյին: Ի դուր չեն կորչում նաև պատիճների պատերը. սրանք պարունակում են իրենց մեջ մեծ քանակությամբ փայտանյութ, դրս՝ համար ել գործ են անվում վորպես վառելանյութ:

Գետնանշի հատիկները խիստ սննդարար լինելով ամեն տեղ գործ են անվում նաև իբրև համեղ ուտելիք, ինչպես նուշը, ախիլը և այլն: Նախապատերազմյան շրջանում գետնանուշը մեղ մոտ գործ է անվել գլխավորապես այդ նպատակով:

Վերջապես գետնանշի կանաչ մասերը չափազանց սննդարար են, դրա համար ել շատ տեղերում գործ են անվում իբրև անասունների կեր:

Ամերիկայում գետնանուշը հաճախ ցանում են յեգիպտացորենի շարքերի արանքներում և յերբ հավաքում են յեգիպտացորենը, անասուններին բաց են թողնում դաշտի մեջ, վորտեղ նրանք արածում են թե յեգիպտացորենի ցողուններն ու տերևները և թե գետնանուշը: Իրանից հետո բաց են թողնում դաշտի մեջ խոզերին, վորոնք վորփրելով գետինը՝ հանում են այնտեղից գետնանշի պատիճները և ուտում նրանց մեջ գտնված հունգերը կամ հատիկները:

Այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս, վոր գետնանուշը չափազանց արժեքավոր բույս է. նա կարող է հումուլթ մատակարարել մեր թե պահածոների, թե ռճառի և թե հրուշակային արդյունաբերության և բացի դրանից, կարող է սննդարար կերանյութային բազա կազմել մեր կաթնատու անասնապահության և մսատու խոզաբուծության համար:

Ահա այս հանգամանքներն են պատճառը, վոր ամեն տեղ արագ կերպով աճում ու զարգանում է նրա մշակությունը: Այսպես որինակ, Հնդկաստանում 1912-13 թվին նրա ցանքերը գրաված են յեղել 554.750 հեկտար տարածություն, իսկ 1927-28 թվերին 1.713. 784 հեկտար. սակ է, ընդամենը 15 տարվա ընթացքում նրա գրաված տարածությունն աճել է 3 և կես անգամով: Շատ ուժեղ տարածումն է ստանում նրա մշակությունը և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այժմ գետնանուշը սովորական և տարածված բույսերի շարքին և պատկանում բացի վերոհիշյալ յերկրներից, նաև Աֆրիկայում, Չինաստանում: Յեվրոպայում գետնանուշ մշակվում է Ապանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Բուլղարիայում:

ԳԵՏՆԱՆՈՒՇԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԻՈՒԹՅԱՆ ՍԵՁ

Գետնանուշը Խորհրդային Միության համար միանգամայն նոր բույս է. և քանի վոր նրա լրիվ աճման համար անհրաժեշտ է, վոր 6 ամիս շարունակ սառնամանիքներից ազատ յեղանակներ անեն և բացի դրանից, նրա աճման շրջանում որերի միջին բարեխառնությունների գումարը հավասար պիտի լինի մոտ 3000 աստիճանի, ուրեմն, Խորհրդային Միության մեջ գետնանշի մշակությունը հնարավոր է զբաղվել միայն տաք շրջաններում:

Միության տաք շրջանների կարգին է պատկանում և Անդրկովկասը: Այստեղ գետնանշի մշակության համար հարմար շրջաններ են համարվում. Վրաստանում՝ Արևմտյան Վրաստանը և Ալազանի հովիտը, Ադրբեջանում՝ Զաքաթալի, Կախի, Ալիարբադի, Նուխպես և Ղուբայի շրջանները, իսկ Հայաստանում՝ Մեղրու շրջանը:

Անդրկովկասում գետնանուշն առաջին անգամ սկսել են մշակել միայն 1930 թվին և մինչև 1931 թիվը նրա դրաված տարածութունը հավասար է յեղել 1700 հեկտարի: Սակայն 1932 թվի պլանով պետք է հատկացվի գետնանուշին 7000 հեկտար, վորից 4000 հեկտարը Վրաստանում, 3000 հեկտարը Ադրբեջանում: Այս թվերը պարզ կերպով ցույց են տալիս, վոր Անդրկովկասում գետնանուշի մշակույթը բավական ուժեղ կերպով է զարգանում:

Գետնանուշի մշակույթի հետագա զարգացումն ապահովելու համար կան և գիտական հետազոտական կայաններ: մեկը Ադրբեջանում, Զաքաթալում, մյուսը Վրաստանում: Այս կայաններում աշխատում են ստանալ մեր պայմաններին հարմար սորտեր:

ԳԵՏՆԱՆՈՒՇՆ ԻՐԻՇՎ ԲՈՒՅՍ

Գետնանուշը պատկանում է թիթեռնածաղիկների ընտանիքին, այսինքն այն ընտանիքին, վորին պատկանում են նաև յոբին, սոյան, առվույտը, սիսեռը և այլն:

Նրա ցողունը լինում է կամ կանգուն և կամ դեռնատարած. տերևները գուլգավոր փետրավոր են, այսինքն մի ընդհանուր տերևակոթի վրա նստած են մանրատերևներ, այն ևս գուլգ-գուլգ: Մանրատերևները լինում են ընդհանրապես չորս հատ: Ցողունը քառակող է և խիստ ճյուղավոր, վորի համար և շատ դժվար է տարբերել կենտրոնական ցողունը յերկրորդականներից: Արմատը ժամանակի ընթացքում հետզհետե կարճանում է և ցողունի ներքևի մասը մտցնում հողի մեջ: Մաղիկներն ունեն դեղին գույն և թեպետ ընդհանուր առմամբ նման են մնացած թիթեռնածաղիկ բույսերի ծաղիկներին, բայց մի բանով խիստ կերպով տարբերվում են նրանցից. նրա բաժակի խողովակը

չափազանց յերկար է, հասնում է 2—3, յերբեմն ելավելի սանտիմետրի և բավական ամուր է ու ծածկված մաղիկներով: Բաժակի այդ խողովակը սրակի միացման տեղում փոքր ինչ հաստանում է և արձակում է հինգ հատ բաժակատերևիկներ, վորոնցից չորսը վերևում միանում են միմյանց հետ, իսկ հինգերորդ բաժակատերևիկը ներքևում կազմում է ստորին շրթունքը: Բաժակի թե խողովակը և թե տերևիկներն ունեն կանաչ գույն:



Առեչները ծաղկի մեջ թաքնված են բոլորովին, մի հանգամանք, վոր դժվարացնում է խաչածե փոշոտումը: Մաղիկներն հոտից գուրկ լինելը և դժգույն դեղին գույն ունենալը ևս արգելք են հանդիսանում խաչածե փոշոտման, վորովհետև առանց հոտի և առանց աչքի զարնվող

գույնների ծաղիկները չեն կարող գրավել այն միջատներին, վորոնց միջոցով տեղի յե ունենում խաչածե փոշոտումը: Յեվ իսկապես, դիտողությունները ցույց են տվել, վոր միջատները սովորաբար չեն այցելում գեանանուշի ծաղիկները, վերջիններս վորոտվում են իրենք իրենց: Յերբեմն ծաղիկը փոշոտվում է գեուս չբացված վիճակում: Ծաղիկը բեղմնավորվելուց հետո տեղի յե ունենում մի վերին աստիճանի հետաքրքիր յերևույթ:

Սերմնարանը, վոր մինչև այդ նստած եր բաժակի հիմքի վրա, ճիշտ է, չի մեծանում, բայց դրա փոխարեն սկսում է նրա կոթը արագ կերպով աճել և յերկարել: Շուտով նրա յերկարությունը հասնում է մի քանի սանտիմետրի, վորից հետո թեքվում է նա դեպի ցած և հասնելով գետնին՝ ծակում է հողը և մտնում նրա մեջ: Այնուհետև սերմնարանի կոթի աճումը կանգ է առնում, իսկ սերմնարանն ինքն սկսում է մեծանալ, ուռճանալ: Սերմնարանի սուր ծայրը, վորով նա ծակել էր հողը և ներս մտել, ծուլած է դեպի ցած և կազմում մի տեսակ կոցանման յելուստ, վոր մենք տեսնում ենք հասունացած պատիճների վրա: Պատիճների մեջ գտնվում են հատիկները շարված իրար կողք-կողքի: Հատիկները լինում են մեկից մինչև շորս հատ: Նրանք հասունանում են հերթով. ամենից առաջ հասունանում են պողակոթի մոտ գտնվողը և ապա մնացածները, ամենից ուշ հասունանում է պատիճի ծայրին գտնվող հատիկը: Տարբեր ժամանակներում են հասունանում և իրենք պատիճները: Պատիճների թիվը ամեն մի թփի տակ կարող է հասնել մի քանի տասնյակների: Պատիճներն իրենց ձևով նման են շերամի կոկոններին, ունեն 2—6 սանտիմետր յերկարություն և 1—2 սանտիմետր հաստություն:

Գեանանուշն ունի բազմաթիվ սորտեր, վորոնց կարելի յե բաժանել յերկու գլխավոր խմբերի. մեկը՝ կաշվում է գեանաաարած, վոր վորունգի նման փոփում է գետնի յերեսին, իսկ մյուսը՝ թփավոր: Մեր յերկրի պայմանների տեսակետից արժեքավոր համարվում են միայն թփավորները, վորովհետև սրանք ավելի շուտ են հասունանում և կարող են մշակվել մեքենաների միջոցով: Թրփավորների մեջ հայտնի յեն սպիտակ սպանականը, ազնվացրած սպանականը և վարկեսիան:

ԳԵՏՆԱՆՇԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գեանանուշից առատ բերք ստանալու համար անհրաժեշտ է շատ լուրջ ուշադրություն դարձնել նրա մշակության վրա:

Նախ և առաջ նրա հողը պետք է փափուկ լինի և վորովհետև նրա պտուղները զարգանում են հողի տակ մինչև յերեք կամ չորս սանտիմետր խորության մեջ, ուստի պիտի աշխատել, ինչքան կարելի յե, հողը լավ փրկաքնել և ազատել ամեն տեսակի կոշտերից: Իրա համարել վարը պետք է անել աշունը, վորովհետև այդպիսի վարի ժամանակ հողը ձմեռային ամիսների ընթացքում փխրացման է յենթարկվում. վարը պիտի անել 18 սանտիմետրից վոչ պակաս խորության մեջ: Բացի փխրանալուց, այդպիսի վարի ժամանակ հողի մեջ հավաքվում է առատ քանակությամբ խոնավություն և գետնից ազատվում է մոլախոտերից, վորոնց գեանանուշը տանել չի կարող:

Աշնանը կատարած վարը զարնանը պետք է միայն մակերևույթային մշակման յենթարկել կուլտիվատորների միջոցով, վորոնք փխրացնում են հողը 3—4 սանտիմետր

խորութեամբ և փշրուած են հողի յերեսին կազմված կեղևն
ու կոշտերը:

Յանքը կատարում են ձեռքով կամ շարքացան մե-
քենաներով: Շարքերի միջև յեղած տարածութիւնները
պետք է ունենան մոտ 60 սանտիմետր լայնութիւն,
վորպէսզի հնարավոր լինի ձիաքարչ կուլտիվատորներով
նրանց մշակման յենթարկել, իսկ յեթե տրակտորով պիտի
աշխատե կուլտիվատորը, այդ դեպքում շարքերի արանք-
ներն ել ավելի լայն պիտի լինեն՝ համապատասխան մե-
քենայի մեծութեան:

Սերմերը ցանում են կեղևահանված վիճակում: Կե-
ղևով պատած սերմերի ծլունակութիւնն ավելի ցածր է,
զրա համար ել այդպիսի սերմեր ցանելու ժամանակ պետք
է 25 տոկոսով ավելի վերցնել: Բացի դրանից, վերջին
տեսակի սերմերը միաժամանակ չեն ծլում, մինչդեռ յերբ
նրանք կեղևած են լինում թե արագ են ծլում և թե բո-
լորը միաժամանակ են ծլում: Չկեղևած սերմերը ցանքի
տեսակետից միայն մի օր ավելութիւն ունեն, այն, վոր շատ
քիչ են փչանում փաստատուներից, զրա համար ել այդ-
պիսի սերմեր պիտի ցանել այնտեղ, վորտեղ հողի մեջ
փաստատուները խիստ շատ են:

Գետնանշի մշակութեան տեսակետից մեծ նշանակու-
թիւն ունի ցանքի ժամանակի ընտրութիւնը: Բանն այն
է, վոր նրա սերմերը ծլում են 14 աստիճանից վոչ պա-
կաս բարեխառնութեան մեջ, զրա համար ել բոլորովին
միաք չունի ցանել ցուրտ ժամանակներին, վորովհետև
միևնույն է, նրանք չեն ծլի, բայց կարող են փտել և կամ
փչանալ փաստատուներից:

Մեզ մոտ, Անդրկովկասում ցանքը կատարում են
մայիսի սկզբներին և կամ ապրիլի վերջերին, յեթե յեղա-
նակները շատ են տաքանում:

Յանքից հետո ծլերը սկսում են յերևան գալ մտա յեր-
կու շարքից հետո: Իրանից հետո առաջին աշխատանքը
համարվ ւմ է նոսրացումն, այսինքն ավելորդ ծլերի հե-
ռացումը: Նոսրացման ժամանակ պիտի պահել առողջ ու
ուժեղ բույսերը և հեռացնել թուլերն ու ցածրահասակ-
ները: Նոսրացումը վերջացնելուց հետո այնտեղ, վորտեղ



վորտումն անհրաժեշտ է, պետք է ջրել: Այնուհետև յերբ
հողը փոքր ինչ չորանա, պիտի կատարել առաջին քաղ-
հանք և շարքերի արանքների փխրացումը կուլտիվատոր-
ների և կամ հողաշարժների միջոցով:

Երբ և կսեն յերևալ առաջին ծաղիկները պետք է
կրկին ջրել և ապա կատարել յերբ րորդ քաղհանք ու փրխ-
րացումն և հետո, յերբ յերևան սերմնարանները և պտղա-
կոթերը յերկարանալով ծովեն դեպի դեպիներ, պետք է
բուկը տալ, վորով հնարավորութիւն կտրվի պտուղներին
ավելի հեշտութեամբ մտնել հողի մեջ:

Գետնանշի պտուղները միաժամանակ չեն հասունա-
նում, զրա համար ել շատ դժվար է վորոշել բերքահա-
վաքի ժամանակը: Յողունի ներքևի մասից առաջացած

պտուղները մի քանի շաբաթով ավելի շուտ են հասունանում, քան վերևի մասից առաջացածները: Յեթե սպասեն մինչև վերջինների հասունանալը, ապա առաջիններն արդեն գերհասունացման գրության մեջ կմանեն, իսկ յեթե շտապեն, ապա պտուղների մի մասը չի հասնի լրիվ հասունության: Դրա համար ել բերքը պիտի հավաքել այն ժամանակ, յերբ պտուղների մեծ մասը հասունացած է լինում, իսկ այդ կարելի չե իմանալ 5—7 օրը մի անգամ



արտի զանազան մասերից թփեր հանելով և հասունացած պտուղների քանակությունը վորոշելով:

Բերքը մի-չև համարյա վերջին ժամանակներս հավաքում եյին ձեռքով, վորի համար ձգելով դուրս եյին հանում թփերը գետնից, բայց դա մեծ կորուստներ երտալիս, վորովհետև պտուղները մի մասը մնում եր հողի տակ:

Մակաչն այժմ կան արդեն հատուկ մեքենաներ, վորոնցով թուփն իր ամբողջ արմատով ու պտուղներով դուրս է հանվում գետնի յերեսը:

Պտուղները հանելուց հետո պետք է չորացնել, վորովհետև նրանք պարունակում են իրենց մեջ մեծ քանակությամբ խոնավություն և խոնավ տեղում պահվելու դեպքում կարող են փչանալ: Չոր յեղանակներին պտուղները կարելի չե չորացնել արևի տակ, իսկ խոնավ յեղանակներին՝ առանձին չորանոցներում: Վերջիններիս մեջ չորացնելու ժամանակ բարեխառնությունը յերբեք չպիտի թողնել շատ բարձրանա, վորովհետև Յ5 աստիճանից բարձր տաքության մեջ սերմերը կորցնում են իրենց ծլունակությունը:

Պեանանջի պտուղները չորացնելուց հետո պիտի պահեն չոր տեղում և յեթե դեռ լավ չեն չորացած, մեծ կույտեր չպիտի շինել նրանցից, վորովհետև այդպիսի կույտերի մեջ նրանք հեշտությամբ փչանում են:

ՊԵՏԱՆՃԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պեանանջի համար փաստատուներ են համարվում լարավորդը, յերկարաբթիկը, իշխառանչը և մի քանի այլ միջատներ: Սրանցից լարավորդը մեծ մասամբ փաստում է մատաղ ծիլերը, իսկ մյուսները ծիլերի հետ միասին փաստում են և հասունացած պատիճները: Կրծողներից շատ մեծ փաս են հասցնում գետնանշին դաշտային մկները, բայց սրանց դեմ համեմատաբար ավելի հեշա է պայքարել, հարկավոր է միայն թղճնավոր նյութեր ամել նրանց բները, միայն թե այդ պայքարը պիտի սկսել առաջին մկնաբները նկատելուց անմիջապես հետո, վորպեսզի նրանք չկարողանան բազմանալ:

Խիստ մեծ վրաս են պատճառում գետնանշին և սերմ-
նաքաղ ազոնավները, սրաւք իրենց կաուցով փորփրելով
հողը՝ հանում են գետնանշի պտուղները և ուտում: Ա-
ռանձնապես ուժեղ հարձակում են գործում նրանք գեա-
նանշի պտուղների վրա անձրևներից հետո, յերբ հողի վե-
րևի շերտը փափկած է լինում: Յերբեմն նրանք այնպիսի
խնամքով են կատարում իրենց գործը, վոր շատ թփերի
տակ վոչ մի հատ պտուղ չի մնում:

Գետնանուշը ունի և հիվանդություններ, վոր առա-
ջանում են զանազան տեսակի սոււնկերից: Այդ հիվանդու-
թյունների ժամանակ գետնանշի տերևները հետզհետե
գեղնում, թառամում են, վորից հետո թուփը սկսում է
մեռնել: Նման հիվանդությունների դեմ պայքարելու մի-
ջոցներից մեկն այն է, վոր նույն հողամասում չորս տա-
րուց ավելի վաղ չպետք է նորից գետնանուշ ցանել, վո-
րովհետև ախտաբեր սոււնկելը մնում են հողի մեջ միայն
յերեք տարի:

ԿԱՌԻՉՈՒԿ ՅԵՎ ԳՈՒՏՏԱՊԵՐԸ

ԿԱՌԻՉՈՒԿ

Մեզնից հարյուրավոր տարիներ առաջ Կոլումբոսի
յերկրորդ ճանապարհորդությունը նկարագրող մի սպանա-
ցի հեղինակ զարմանքով պատմում է, վոր Հայտի կղզ-
զում բնակիչները ծառերից դուրս ծորող մի հյութից պա-
րաստում են շատ լավ խաղաղնդակներ: Մի այլ հեղինակ
էլ պատմում է, վոր բայի խաղաղնդակներ շինելուց,
հնդիկներն այդ հյութով պատում են իրենց շորերը և զարձ-
նում են նրանց անշրանցիկ:

Ոոսք չկա, ի հարկե, վոր այդ հեղինակները յերբեք
չեյին կարող մտածել այն ժամանակ, վոր ծառերից դուրս
ծորող այդ հյութը, վորին հնդիկները կաուչուկ են ան-
վանում, մի քանի դար հետո պետք է դառնա մարդկու-
թյան համար այնպիսի անհրաժեշտ մի բան, ինչպիսին
յերկաթն է, փայտը, ապակին:

Բայց կաուչուկը միանգամից չի կատարել իր նվա-
ճումները: Ամենից առաջ նա գործ է ածվել մատիտով
զրածները ջնջելու համար: Կաուչուկի այդ հատկությունը
հայտնագործվել է 1700 թվին և այն ժամանակից սկսած
մինչև այսօր համարվում է նա զպրօցներում և զրասե-
նյակներում առենաանհրաժեշտ պիտույքներից մեկը: Այ-
նուհետև 1823 թվին Մալիսե անունով մի անգլիացի
հնարում է գործվածքները կաուչուկով ծծեցնելու միջոցը

և սկսում է պատրաստել նման գործվածքներից վերաբ-
կունքը՝ անձրևներից պաշտպանվելու համար: Բայց նա
առանձին հաջողութուն չի ունենում, վորովհետև գործ է
ածում հում կաուչուկ, վորն ունի մի շարք թերութուն-
ներ: Ամենից տաղ այդպիսի կաուչուկը ցրտից ամրա-
նում, պնդանում է և հեշտությամբ փշրվում ապակուպես,
իսկ տաքությունից փափկում է և կաշուն հատկություն
ստանում, այնպես վոր Մակինտոշի վերաբրկունքին ամա-
ռը չէր կարելի ձևոք տալ:

Այդ անհաջողությունից հետո կաուչուկի նկատմամբ
յեղած հետաքրքրությունը չի կորչում. նրան գործածելի
դարձնելու համար կատարվում են բազմաթիվ նոր փոր-
ձեր, մինչև վոր հաջողվում է, վերջապես, տալ նրան այն
հատկությունները, ինչ վոր ունի այժմ մշակման յենթարկված
կաուչուկը: Այդ կատարվում է շնորհիվ այսպես կոչվող վուլ-
կանացման: Վերջինս մի գործողություն է, վորի ժամա-
նակ հում կաուչուկը միանում է ծծմբի հետ և նայած
ծծմբի քանակության և տեղի ունեցող գործողության
տևողության՝ կաուչուկը ստանում է կամ փափուկ ու-
ղինի հատկություններ և կամ պնդանում է այնքան, վոր
դանում է երոնիս կոչվող պինդ նյութը: Ահա այդ ժա-
մանակից սկսած կաուչուկը ստանում է արդյունաբերա-
կան նշանակություն: Առանձին թափ է ստանում նրա ար-
դյունաբերությունը շնորհիվ ելեկտրատեխնիկայի և ավտո-
մոբիլային արդյունաբերության զարգացման:

ՔԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԿԱՌԻՉՈՒԿԸ

Կաուչուկը ստանում են մի շարք ծառերից, վորոնք
բանում են՝ Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի տաք ու
խոնավ մասերում. այդ ծառերը կոչվում են կաուչուկա-
տու ծառեր. նրանց մեջ ամենահայտնին բրազիլիական

հեվեյան է: Հեվեյան բանում է Ամազոն գետի ափագա-
նում խիտ, համարյա անանցանելի անտառներում. դա մի
մեծ ու գեղեցիկ ծառ է:

Յերբ նրա վրա կտրվածքներ են առաջ բերում, կրտ-
ված տեղերից սկսում է հեղուկ հոսել, այնպես, ինչպես
հոսում է կեչի ծառի վրա արված կտրվածքներից: Հեվեյա
ծառի այդ հեղուկը կոչվում է լատեքս, վոր պարունա-
կում է իր մեջ կաուչուկ: Լատեքսը հավաքելու համար
մարդիկ հեվեյայի վրա անում են հոռմեական V թվանշանի



նման կտրվածքներ և նրանց տակ կախում փոքրիկ աման-
ներ: Մի որվա ընթացքում այդ ամանները սովորաբար
լցվում են կտրվածքներից հոսող հյութով, վորից հետո հավա-
քում են և նրանց մեջ յեղած հյութը թափում դուլլերի

կամ մեծ անութների մեջ և կրկին կախում իրենց տեղը՝ Այսպես, կարծեք ոչ-ական մի անգամ կթում են այդ ծառերը: Այնուհետև հավաքած լատեքսը հենց տեղում քամում են մաղով կեղտոտություններից մաքրելու. համար և ապա յենթարկում նախնական մշակման և ստանում նրանից պինդ կաուչուկ: Այդ գործողությունը կոչվում է կոագուլացիա: Դրա համար լատեքսն ածում են փայտի վրա և պահում ծխի մեջ: Տաքության շնորհիվ լատեքսի մեջ յեղած շուրը գոլորշիանում է, իսկ կաուչուկը ծխի ազդեցության տակ մակարդվում է և պնդանում: Ահա այսպիսի կաուչուկն է, վոր ուղարկում են գործարանները հետագայ մշակման յենթարկելու համար:

Հեփեյան, ինչպես տեսանք, ածում է Բրազիլիայի տաք և խոնավ անտառներում, այնտեղ տարածված է արևազարձային շերտ կոչվող ծանր հիփանդությունը, վորին ամեն տարի գոհ են գնում տասնյակ հազարավոր աշխատավորներ: Կապիտալիստները շահագործելով այդ աշխատավորներին՝ բնավ չեն հոգում նրանց մասին, չնչին վարձատրությամբ քամում են նրանց արյունը և յերբ նրանք աշխատանքի անընդունակ են դառնում, նետում են նրանց մահվան ութշվառության զիրկը և վերցնում նրանց փոխարեն նորերին:

ՔԵ ԻՆՉՊԵՍ ԱՆԳԼԻԱՅԻՔ ԳՈՂԱՑԱՆ ՇԵՎԵՅԱՆ ԲՐԱԶԻԼԻԱՅԻՆԵՐԻՑ

Բրազիլիական կառավարությունը շահագործման ազբուր է դարձնում կաուչուկը: Նա հսկայական մաքս է նշանակում արտահանվող կաուչուկի վրա. և ստարերկրացի գործարանատերերը կամա-ակամա ստիպված տալիս են այդ մաքսը, վորովհետև այն ժամանակ կարծում էյին, թե կաուչուկ կարելի չէ ստանալ միայն Բրազիլիայի կաուչուկատու ծառերից: Մաքսից ամենից շատ տուժում էյին

անգլիացիները, վորովհետև կաուչուկի սպառողները մեծ մասամբ նրանց գործարաններն էյին: Կաուչուկի տեսակետից, ուրեմն Անգլիան կատարյալ կախման մեջ էր գտնվում Բրազիլիայից:


Ահա այս է պատճառը, վոր ամենից առաջ անգլիացիներն են մտածում ազատվել Բրազիլիայի կախումից, այսինքն ամենից առաջ նրանք են մտածում ունենալ իրենց սեփական կաուչուկը:

Բայց ինչպես:

Հնարը գտնում է անգլիացի Ալիսհալը: Նա կաշառքների միջոցով ձեռք է բերում ահագին քանակությամբ հեփեյա ծառի սերմեր, բարձում մի ամբողջ նալ և այլ տալրանքի անվան տակ ուղարկում Անգլիա: Տեղափոխությունը բավական ձգձգվում է. ճանապարհին սերմերի մեծ մասը փչանում է: Յեվ միանգամայն հասկանալի պատճառով այդ սերմերը պարունակում են իրենց մեջ առատ քանակությամբ յուղ, վորը հեշտությամբ կծվում, փչանում է: Ծլունակ վիճակի մեջ տեղ են հասնում միայն 2800 սերմ, վոր ցանում են Լոնդոնի բուսաբանական այգում, առանձին ջերմոցներում: Այդ սերմերը ծլում են և առաջ բերում փոքրիկ թիեր: Այժմ հարկավոր է նրանց աճեցնել, մեծացնել, չե վսր նրանք իրենց հայրենիքում հսկայական ծառեր են: Բայց վերտեղ: Ահա մի շատ կարևոր հարց: Բրազիլիայի այն ծառերը, վորտեղ ածում է հեփեյան, ամենացուրտ ժամանակը նստն է մեր շոգ ամառին, և բացի դրանից, այնտեղ գալիս են շատ առատ ու հորդ անձրևներ. նշանակում է, պետք է գտնել հենց այդպիսի յերկիր, այլապես հեփեյան աճել, մեծանալ չի կարող: Այդպիսի յերկրներ ունի Անգլիան Ասիայի հարավարևելյան մասերում: Այդպես են, որինակ, Յեյլոն կղզին է: Մարտիկա թերակղզու հարավային ծայրը: Յեվ հեփեյայի

փոքրիկ տնկիները Լոնդոնի բուսաբանական այգուց տեղափոխված են հենց այդ յերկրները, վորտեղ նրանք հրաշալի կերպով աճում, մեծանում են: Շատ շուտով անգլիացիները հսկայական տնկարաններ են հիմնում այնտեղ:

Անգլիային հեռուում են Ֆրանսիան և Հոլլանդիան, վորովհետև սրանք ևս Անգլիայի նման ունեյին հեղեղայի համար հարմարավոր վայրեր: Այժմ արդեն տասնյակ հազարավոր հեղեղայի տնկարաններ են տարածված այդ




պետութունների տաք և խոնավ կլիմա ունեցող գաղութներում: Բայց չնայած դրան, կաուչուկի կարիքը գնալով մեծանում է, վորովհետև նրա գործածութունը ժամերով է աճում: Կաուչուկի կարիքն ամենից շատ զգում է մի այլ կապիտալիստական յերկիր՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այստեղ շատ փորձեր են կատարել հեղեղայն աճեցնելու, բայց իզուր, վորովհետև այնտեղ չկան հարմարավոր տաք ու խոնավ վայրեր: Մյուս կողմից կաուչուկի սլանանջը զարգանում է այնտեղ հսկայական շափերով, բավական է ասել, վոր այնտեղ ամեն շտաբարգու վրա մի ավտոմոբիլ է ընկնում, իսկ ավտոմո-

բիլները համար անհրաժեշտ են ակոնե շիներ: Պարզ է, վոր Միացյալ Նահանգները ևս պիտի մտածեն իրենց համար սեփական կաուչուկի աղբյուր ստեղծել: Յե՛վ այդ ուղղությամբ այնտեղ բավական մեծ աշխատանք է կատարվել: Նրանք, պարզ է, վոր պետք է կամ հեղեղային հարկադրելին աճել իրենց յերկրում և կամ պետք է գրանեյին վորևե այլ կաուչուկատու բույս: Այս յերկրորդ ճանապարհն ավելի գործնական էր, գրա համար էլ նրանք ընտրում են այս ճանապարհը: Հնչակավոր գյուտարար Եղիստնն այդ տեսակետից հետազոտության է յենթարկում Միացյալ Նահանգների և կլիմայով նրանց հարմարվող յերկրների բուսականությունը: Նա քննությաննյութ է զարնում 18000 զանազան տեսակի բույսեր և վերջը կանգ է առնում յերկու բուսական տեսակների վրա, վորոնցից մեկը աճում է հենց Միացյալ Նահանգներում, իսկ մյուսը Մազազակար կղզու վրա: Բացի Եղիստնի հայտնագործած այս յերկու տեսակի բույսերից, Միացյալ Նահանգներում իրրև կաուչուկատու բույս ուղադրության նյութ է զանում և մի այլ բույս, վոր աճում է Մեկսիկայում և կոչվում է գվայուլա: Այժմ արդեն այդ բույսի ընդարձակ տնկարաններ կան Միացյալ Նահանգների շատ ու շատ տեղերում:

Գ Վ Ա Յ Ո Ւ Լ Ա

Գվայուլան հեղեղայի և այլ շատ կաուչուկատուների նման ծառ չէ. նա մի թուփ է, վոր աճում է Մեկսիկայի բարձրավանդակի բլուրների լանջերին և հասնում է մտափորապես յերեք քառորդ մետր բարձրության: Մեկսիկայի այդ բարձրավանդակն ունի չոր ու ցուրտ կլիմա, և պատճառը հասկանալի չէ. նա թե արևելյան և թե արևմտյան

կողմից շրջապատված և բարձր լեռներով, վորոնք թույլ
չեն տալիս, վոր ովկիանոսներից յեկող խոնավ քամիները
մտնեն յերկրի ներսը, իսկ հյուսիսից բաց և, վորտեղից
փչում են շարունակ սառը քամիներ: Այդտեղ ձմեռը սառ-
նամանիքները հասնում են մինչև—15՝-ի, իսկ ամառը բա-
վական շոգ և լինում. նման տարբերություն նկատվում և և
ցերեկվա ու գիշերվա մեջ. այսինքն ցերեկը խիստ տաք և



լինում, իսկ գիշերը՝ խիստ ցուրտ: Անձրևներ այնտեղ
գալիս են միայն ամառը, իսկ ձմեռը համարյա թե ձյուն
չի գալիս: Գվալուլան ապրելով այդպիսի կլիմա ունեցող
լեռերում՝ միանգամայն հարմարվել և նրա պայմաններին.
նա շատ լավ դիմանում և թե տաքության արագ փոփո-
խություններին և թե յերաշտներին:

Ճանապարհորդները նկատել են, վոր տեղական բնա-
կիչները կտրտելով այդ թփերը՝ ծամում են և պատրաստում
խաղաղնդիկներ, վորոնք իրենց առաձգականությամբ նման
են մեր օւզիկնե զնգակներին: Յեղ պարզ և, թե ինչու.
գվալուլան ևս պարունակում և իր մեջ կտոչուկ: Բայց
յեթե հեվեյայի մեջ կաուչուկը գտնվում և առանձին խո-
ղովակներում կամ անոթներում, գվալուլայի մեջ նա
գտնվում և բջիջների մեջ: Հայտնի յե, վոր բջիջը բազ-
կացած և կորիզից և պրոտոպլազմայից. ահա կաուչուկը
փոքրիկ կաթիլներով ցոված և հենց պրոտոպլազմայի մեջ:
Եշանակում և, կաուչուկը դուրս հանելու համար պեճք և
պատուտել բջիջների թաղանթները: Մեկսիկայի բնակիչ-
ները ծամելու ժամանակ այդպես ել անում են: Նույնն
են անում և տեխնիկայի մեջ: Գվալուլան քաղելուց հետո
չորացնում են, ազում և ամելով կլոր բարեր պարունակող
և ջրով լցված տակաոսների մեջ տրորում են. այդ ժամա-
նակ բջիջների թաղանթները պատուտվում են և բջիջների
մեջ յեղած կաուչուկի կաթիլները դուրս գալով՝ կպչում
են իրար և կազմում վսլորուն թելերի նման բաներ, վո-
րոնց անվանում են կաուչուկի «փուղեք»: Այնուհետև ամ-
բողջ գանգվածը ամում են փայտյա յերկար տաշտերի մեջ
և վրան ջուր լցնում: Կաուչուկը ջրից թեթև և, դրա հա-
մար, ել բարձրանում և վերև, իսկ փայտային մասերը ջուր
ծծելով իրենց մեջ՝ ծանրանում են և ցած իջնում: Ջրի
յերեսին լողացող կաուչուկը հավաքում են շերտիներով,
ինչպես կերակրի յերեսից քաշում են քափը, ամում ա-
ռանձին տաշտերի մեջ, վորտեղ յենթարկում են հատուկ
մշակման:

Փորձերը ցույց են տվել, վար այս ձևով գվալուլի
ամեն մի թփից բավական կաուչուկ և ստացվում: Ստաց-

ված կառուչուէն իր քաշով կազմում ե մշակման յենթարկ-
վող գվայուլի չոր քաշի մոտավորապես տասը տոկոսը:

ԿԱՌԻՉՈՒԿԻ ՊԱՀԱՆՁ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մորհրդային Միութեան ժողովրդական անտեսութեան
մեջ ահագին և վճռական դեր ունեն կատարելու ելեկ-
տրոֆիկացիան և ավտոմոբիլային արդյունաբերութեանը:

Մինչև այժմ ելեկտրոֆիկացիան մեզ մաս առաջ է
գնացել հսկայական քայլերով. Զագեսը, Զորագեսը, Ռիոն-
գեսը, Քանաքեռգեսը, Յերևանգեսը, Լենգեսը և այլն, վո-
րոնք կամ գործում են և կամ շուտով պիտի գործարկ-
վեն՝ դրա ամենայնով ապացույցներն են: Բայց ստորագ-
յում ելեկտրոֆիկացիայի զարգացման թափը փոշ թե պի-
տի թուլանա, այլ ընդհակառակը՝ ել ավելի մեծ շափեր
պիտի ընդունի: Յերկրորդ հնդամյակով նախատեսվում են
այնպիսի հսկա հիդրոէլեկտրակայաններ կամ սիւտեմներ,
ինչպես որինակ՝ Զանգի-Սևան կասկազն ե, փոր պետք է
բաղկացած լինի տասը առանձին ելեկտրակայաններից, կամ
Սրածգեսը, Տապարավանգեսը և այլն: Այդ միայն Անդր-
կովկասում. նման հսկաներ նախատեսվում են կառուցել
և Միութեան այլ մասերում:

Ելեկտրոֆիկացիայի հետ ուժեղ թափով զարգանում
է մեզ մոտ և ավտոմոբիլային արդյունաբերութեանը:
Միութեան մեջ այժմ կառուցվում են հսկա ավտոմոբի-
լային գործարաններ և ընդարձակվում են յեղածները: Ար-
գեն աշխատում է առաջին հսկա ավտոմոբիլային գործա-
րանը Նիժնի Նովոորոսում: Մոտակա ժամանակներում այդ
գործարանը յերկրին պետք է տա տարեկան 300 հազար
հատ ավտոմոբիլ: Բայց դա պետք է սկիզբ համարել ա-

պագայի ել ավելի ուժեղ ավտոմոբիլային արդյունաբե-
րութեան:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում
կան այժմ 25 միլիոն ավտոմոբիլներ. այդ թիվը Միու-
թեան համար անհասանելի մեծութուն չի. մեր արդյու-
նաբերութեան զարգացման ուժեղ տեմպը մեզ հիմք ե տա-
լիս ասելու, փոր «Համնել և անցնել» արդյունաբերական
տեսակետից առաջափոր կապիտալիստական յերկրներին»
լոզունգը պիտի իրագործվի և շատ շուտով Միութեան սահ-
մաններում գործող ավտոմոբիլների թիվը պետք է տաս-
նյակ միլիոնների հասնի:

Թե ելեկտրոֆիկացիան և թե ավտոմոբիլային ար-
դյունաբերութեանը սերտ կերպով կապված են կառուչուկի
հետ: Յեթե մենք ի նկատի չունենանք ժողովրդական տրն-
տեսութեան այլ ստպարեզներում պահանջվող կառուչուկի
քանակը, հենց միայն մեր հիշած այդ յերկու բնագավա-
ններում մեզ անհրաժեշտ կլինի հարյուր հազարավոր տոնն
կառուչուկ, որինակ, յեթե մենք ամեն հողու վրա գործ
ածենք այնքան կառուչուկ, ինչքան գործ է անվում այժմ
Միացյալ Նահանգներում, այդ դեպքում մենք պետք է ու-
նենանք տարեկան ամենաքիչը 500 հազար տոնն կառուչուկ:

Բայց վճրատեղից վերցնել այդ կառուչուկը: Յեթե ար-
տասահմանից, սպա պետք է մենք տարեկան տասնյակ-
անգամ հարյուրավոր միլիոն րուբլներ վճարենք փոսկով
Այդ դեռ բավական չէ. մենք պետք է շարունակ անտե-
սական կախման մեջ լինենք արտասահմանից: Մի բան, փոր
անհանդուրժելի յե սոցիալիստական յերկրի համար: Ահա
այս իսկ պատճառով ել մեզ մոտ հրամայական պահանջ է
ունենալ մեր սեփական կառուչուկը: Ընկ. Ստալինն ասել
է. «Մենք ունենք ամեն բան, բացի միայն կառուչուկից»:

բայց մի յերկու տարուց հետո մեր տրամադրութեան տակ կունենանք մենք և կառուցուիք:

Սեփական կառուցուել ունենալու համար մենք պետք է ունենանք կառուցուելու բույսեր: Հարկավոր է, ուրեմն, վորոնումներ կատարել մեր լայնածավալ յերկրի զանազան մասերում աճող բուսական աշխարհների մեջ և գտնել կառուցուել պարունակող նոր բույսեր և կամ նման բույսեր բերել տալ այլ յերկրներէից և բազմացնել մեզ մոտ: Բացի դրանից, կա և մի այլ ճանապարհ. այն է՝ քիմիական միջոցներով պատրաստել այլ նյութերից կառուցուել: Այս բոլոր միջոցներին ել դիմել ենք մենք: Կարճ ժամանակում մենք գտել ենք մեր յերկրում բազմաթիվ բույսեր, վոր բավական առատ քանակութեամբ կառուցուել են պարունակում իրենց մեջ: Այդ ուղղութեամբ կատարվող աշխատանքները վերջացած չեն համարվում և շարունակ նորանոր բույսեր են հայտնադործվում այս ու այն տեղի: Իրա հետ միասին Խորհրդային յերկրի գիտական աշխարհը մի շարք միջոցներ է գտել զանազան տեսակի նյութերից, որինակ, քարածուխից, նավթից և կամ նույն իսկ կարտոֆելից կառուցուել պատրաստելու: Նման աշխատանքները դուրս են յեկել արդեն լաբորատորական սահմաններից և ստացել են արդեն գործարանային բնույթ: Իրա ապացույցն այն է, վոր այժմ Միութեան զանազան մասերում գործում են արհեստական կառուցուելի յերեք գործարաններ, իսկ չորրորդ խոշոր գործարանը կառուցվում է Յերևանում:

Վերջապես մենք բերել ենք տվել և այլ յերկրներից ոտար բույսեր, և լուրջ կերպով դիմել ենք նրանց մշակութով զբաղվելու գործին: Այդ ոտար բույսերի մեջ առաջին տեղը զբաղում է գվայուլան:

ԳՎԱՅՈՒԼԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մրանից մի քանի տարի առաջ Մեկսիկայից ստացվում է մի բուռը գվայուլի սերմեր, վոր հավաքել էյին այնտեղ վայրի դրութեան մեջ աճող գվայուլի թփերից: Այդ սերմերը ցանում են Սուխումի բուսաբանական այգիում, վորտեղ նրանցից մի տարվա ընթացքում առաջանում են բավական մեծ-մեծ թփեր, սակայն, ինչպես պարզում է հետազոտութեանը, Սուխումում աճած գվայուլան իր մեջ բավականաչափ կառուցուել չի պարունակում: Նշանակում է, Սուխումի խոնավ կլիման նպաստավոր չէ գվայուլի համար: Հարկավոր է, ուրեմն, վերցնել այլ վայրեր: Հասկանալի չէ, վոր այդ վայրերն իրենց կլիմայով վորոշ չափով նման պիտի լինեն գվայուլի հայրենիքի Մեկսիկայի բարձրավանդակի կլիմային: Փորձի համար ընտրում են Միջին Ասիայում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում կլիմայական տեսակետից հարմար մի քանի տեղեր: Հյուսիսային Կովկասը և Միջին Ասիայում՝ Տաշքենդի մոտերքը ընտրված վայրերը շատ անհարմար են դուրս գալիս: Իրան հակառակ՝ Մարգուշավանը Լեռնային Ղարաբաղում և Կարա-կալան Թուրքմենիայում գվայուլայի մշակութի տեսակետից տալիս են շատ լավ հետեվանքներ:

1930 թվին արդեն կային մի քանի հազար գվայուլի թփեր, վորոնցից և ստանում են մի քանի տասնյակ կիլոգրամ սերմեր: Այդ նույն թվին հիմք է դրվում գվայուլայի մշակութեամբ զբաղվող մի խորհանտեսութեան Մարգուշակամում: Առաջին տարին այդ խորհանտեսութեան մեջ ցանում են սիլայն մի քանի հեկտար տարածութեան: 1931 թվին ցանքաների տարածութեանը ընդարձակելով

հասցնում են 100—150 հեկտարի, իսկ 1932 թվին՝ 500 հեկտարի: Այդպես տարեց տարի ընդարձակելով ցանքերի տարածությունը՝ մի քանի տարուց հետո պիտի հասցնեն 15000 հեկտարի:

1931 թվին հիմք է դրվում կալա-կալայի խորհարանտեսութան. առաջին տարին այդտեղ ցանքերի տարածությունը յեղել է 500 հեկտար, իսկ 1932 թվին՝ 2000 հեկտար: Մի քանի տարուց հետո այդ խորհանտեսութան գվայուլայի ցանքերի տարածությունն էլ պիտի հասնի 10000 հեկտարի:

Այս խորհանտեսութուններին կից կան և հետագուտական կայաններ, փորակեղ շարունակ հետազոտություններ են կատարվում գվայուլայի զանազան տեսակների վրա այն մաքրով, փոր ստանան այդ տեսակներից մեր յերկրի պայմաններին ամենից շատ հարմարվող տեսակները և կամ սորտերը:

Այդպես որինակ, Մարգուշավանի խորհանտեսութան մեջ ցանված գվայուլայի տասն և հինգ զանազան տեսակներից 1931 թվի ձմեռվա ստանամանիքներին դիմացել են միայն յերկու տեսակ: Նշանակում է, այդ յերկու տեսակը ցրտակայուն տեսակներ են: Հետագայում պիտի աշխատել այդ տեսակներից ընտրություն միջոցով ստանալ էլ ավելի ցրտակայուն տեսակներ, փորպեղի միանգամայն անվտանգ լինի նրա մշակույթը ձմեռային անսպասելի ստանամանիքներին: Բացի դրանից, հաջողվել է ստանալ և այնպիսի սորտեր, փոր կարողանում են տծել առանց ջրելու և ապա փոր գլխավորն է, կարողացել են արհեստական կերպով բարձրացնել սերմերի ծլունակությունը 3—6 անգամով, մի հանգամանք, փոր համազոր է սերմերի քանակությունը նույնքան անգամով շատացնելուն: Այնուհետև հետազոտական կայանի նախաձեռնու-


թյամբ գվայուլային փորձնական ցանքեր են կատարվել Ադրբեջանի զանազան մասերում և շատ տեղերում ստացել են բավական զրական հետևանքներ: Այս փորձերը ցույց են տալիս, փոր հետագայում գվայուլայի մշակույթին միայն Ադրբեջանում կարելի չէ հատկացնել հարյուր հարավոր հեկտար տարածություն:

ՄՈՒՔԵՆԱԿԱՆ ԿԱՌՉՈՒԿԱՏՈՒՆԵՐ

1. Տաու-սագրը

Միութենական կառուցակառու բույսերի մեջ կարևոր տեղ է զբաղում Տաու-սագրը, փոր աճում է Միջին Ասիայում կարա-տաու լեռնաշղթայի լանջերին 300—1800 մետր բարձրության վրա: Տեղական բնակիչները նրանից պատրաստում են ծամոն կամ մաստակ, զրա համար էլ անվանել են նրան տաու-սագրը, փոր հայերեն նշանակում է լեռնային ծամոն: Տաու-սագրը բազմամյա բույս է. նրա թիփ բարձրությունը հասնում է ամենաշատը 40 սանտիմետրի: Ունի կարճ բուն, փոր ամբողջովին թաղված է լինում հողի մեջ. բնից դուրս են գալիս բազմաթիվ ճյուղեր, փորի շնորհիվ և ստացվում է բարձանման թուփ գետնի յերեսին: Ճյուղերն իրենց հերթին կրկին ճյուղափորված են և ապա վերջանում են տերևներով: Տերևներն ունեն մոտ 30 սանտիմետր յերկարություն և մոտ մի սանտիմետր լայնություն: Չմեղր տերևները չեն թափվում, այլ չորանում են, ճեղքճեղքվում և մեռնում: Մեռած տերևները մնալով տեղում՝ փառում են և պարարտացնում հողը: Թաղիկները նստած են յերկար ծաղկակոթերի վրա և կազմում են ծաղկակոթով, փորի մեջ լինում են 40—50 հաս առանձին-առանձին ծաղիկներ. սերմերը փոքր են, գլանաձև և վերջանում են փետրիկով, փորի շնորհիվ քա-

մուց հեշտությամբ տարվում են զանազան կողմեր: Աբ-
 մատը շատ մեծ է և խորը թաղված հողի մեջ, յերբեմն
 նրա յերկարությունը հասնում է 6 մետրի: Արմատը և
 ցողունը կտրելու ժամանակ պարզ կերպով նկատվում են
 նրանց մեջ բարակ ձգվող թելերը, փորձնք բաղկացած են



կաուչու կից: Վերջինիս քանակությունը կազմում է ողի
 մեջ չորացած արմատի քաշի 15 — 35, յերբեմն ել 40 տո-
 կոսը:

կարա-սաու լեռնաշղթայի լանջերին կան տաու-սա-
 գրզի տասնյակ միլիոնավոր թփեր: հարթություններում
 նա շատ հազվագյուտ է լինում: Շատերի կարծիքով ա-
 ուջները նա աճելիս է յեղել և հարթություններում, բայց
 այդտեղ չզիմանալով գոյության կովին, հետզհետե իր
 տեղը զիջել է այլ, ավելի ուժեղ բույսերին, իսկ ինքը
 բարձրացել է ավելի բարձր մասերը: Յեթե փորձերը ցույց
 տան, վոր նա կարող է աճել և հարթություններում, այս-
 ինքն այնպիսի վայրերում, ուր հողը կարելի չէ մեքենա-
 ների միջոցով մշակել, ապա տաու-սագրզը կգառնա ամե-
 նաձեռնտու կաուչուկատուներից մեկը, վորովհետև նրա
 կաուչուկից պատրաստված ռեզինը շատ լավ հասկություն
 ունի և այդ ռեզինից շինված ավտոմոբիլային շիները,
 կրկնակողմիկները և այլն յերևան են հանել մեծ դիմացկու-
 նություն: Բացի դրանից, տաու-սագրզի կաուչուկը խառը
 չի մեծ քանակությամբ խիժային նյութերի հետ, փորձնք
 անշատուժը կապված է դժվարությունների ու ծախքերի
 հետ:

Տաու-սագրզի փորձնական ցանքեր կատարվել են
 Միության շատ մասերում և մի քանի տեղերում նրանք
 տվել են շատ լավ արդյունք, որինակ, կազակստանում,
 Ուզբեկստանում, Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում
 և մեզ մոտ՝ Ասդրկովկասում: Ի նկատի առնելով այդ հան-
 դամանքը՝ 1932 թվից տաու-սագրզին հատկացվում են ըն-
 դարձակ տարածություններ: Պլանով նախագծված է նրա
 ցանքերի տարածությունը 1934 թվին հասցնել 90.000
 հեկտարի, իսկ 1935 թվին 300.000 հեկտարի:

Յեթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, վոր ա-
 մեն մի հեկտարից կարելի չէ ստանալ մոտ մի տոնն կաու-
 չուկ, ուրեմն, պլանը իրագործելու դեպքում, մենք ընդա-
 մենը մի քանի տարուց հետո կունենանք մոտ 300.000

տոնն կառուցուի, վորով և միանգամայն կապահովենք մեր արդյունաբերութեան կառուցուի պահանջը:

2. Ա Ո Ն Գ Ր Ի 1.

Մրանից մի քանի տարի առաջ կարիս անունով մի անձնավորութիւն, վոր ծառայում էր Ազրբեյջանի ձկնորսարաններում, նկատում է, վոր տեղական բնակիչները կասպից ծովի ափերին տարածված ավազների միջից հովաքում են ինչ վոր խողովականման բաներ և ծամելով ստանում սեղինանման մի նյութ: Թե ինչ են և ինչպէս են առաջանում այդ խողովականման բաները, նա չգիտեր, բայց յերբ լուծում է նրանց բենզինի մեջ և ստանում սեղինի ստախձ, պարզվում է, վոր նրանք պարունակում են իրենց մեջ իսկական կառուցուի, շուտով պարզվում է նաև այն, վոր այդ խողովակները գտնվում են մի բույսի ցողունի վրա: Այդ բույսը կոչվում է խոնդրիլ:

Մողովակները պարաստում են մի փոքրիկ թիթեռի թրթուռները. սրանք կերակրվում են խոնդրիլ բույսի կաթանման նյութով, վոր պարունակում է իր մեջ կառուցուի և խեժ: Բայց վորովհետև թե կառուցուի և թե խեժը անմարսելի յեն, դրա համար ել անփոփոխ միճակում դուրս են գալիս արտաթորութիւնների հետ միասին. ահա նենց այդ արտաթորութիւններից է, վոր մի տեսակի ցեցի թրթուռները պարաստում են իրենց համար փոքրիկ խողովականման բնիկներ, վորոնց մեջ թագնվելով պաշտպանվում են ջերմութիւնից և չորացումից:

Մոնդրիլի մի այլ տեսակի արմատների վրա կազակրտանում նկատել են ինչ վոր ուռուցքներ, վորոնք բազկացած են կառուցուից, խեժից և ավազից: Դիտողութիւնները ցույց են տվել, վոր այդ ուռուցքներն առաջանում

են շնորհիվ մի տեսակի միջատի, վոր կերակրվում է խոնդրիլի կեղևի բջիջներով և կաթանման հյութով: Յերբ այդ միջատը կրծում է կեղևը, կաթանման հեղուկը դուրս է գալիս և սնդանալով առաջ բերում մի փոքրիկ խուլ, վոր հետագայում հետզհետե մեծանում է, վորովհետև միջատը շարունակ կրծելով կեղևը, պատճառ է դառնում, վոր շարունակ հոսի կաթանման հեղուկը: Միջատը կարծեք մի տեսակ կթում է խոնդրիլի մեջ պարաստվող կաթանման հեղուկը: Մի ամառվա ընթացքում միջատն այդ ձևով կուտակում է մոտ մեկ և կես դրամ մարուք կառուցուի:

Հետաքննելով խոնդրիլի արմատների կամ ցողունի վրա գտնվող այդ խուլերի և կամ խողովականման բների մեջ գտնվող ավազը և ավելորդ բաները՝ ստանում են մի նյութ, վոր գեղամբոջովին կառուցուի չի, նա պարունակում է իր մեջ և բավական մեծ քանակութեամբ խեժ. դրա համար էլ նրանից կարելի յե պարաստել լոջ թե փափուկ սեղինի իրեր, այլ պինդ, այսպէս կոչվող երոնիտային իրեր: Փափուկ սեղինե իրեր պարաստելու համար պետք է կառուցուից հետո ցանել խիժային նյութերը. մի բան, վոր կասպած է չափազանց մեծ դժվարութիւնների հետ: Սակայն բանից դուրս է յեկել, վոր մորեխը, այդ խիտափափափար միջատը կարող է մեզ այդ դործում բավական մեծ ոգուտ տալ: Յեվ այդ ահա թե ինչպէս: Կառուցուի խոնդրիլի մեջ գտնվում է միայն կեղևի մեջ, իսկ մորեխն ունում է միայն բույսերի կեղևը և տերևները. նշանակում է, յեթե պարաստենք մեծ փանդակներ, ածենք այնտեղ մորեխներ և դենք փանդակների մեջ խոնդրիլի թփեր, մորեխները կուտեն միայն թփերի տերևները և կեղևը, տեղ է, նրանք կուտեն և կեղևի մեջ գտնվող կառուցուի, բայց քանի վոր կառուցուի անմարսելի յե, դրա համար ել անփոփոխ միճակում դուրս կգա մորեխների արտաթորութիւն-

տոնն կառուցուի, վորով և միանգամայն կապահովենք մեր արդյունաբերութեան կառուցուիլի պահանջը:

2. Խ Ո Ն Գ Ր Ի 1.

Մրանից մի քանի տարի առաջ Կարիս անունով մի անձնավորութիւն, վոր ծառայում էր Ազրբեջանի ձկնորսարաններում, նկատում է, վոր տեղական բնակիչները Կասպից ծովի ավերին տարածված ավազների միջից հավաքում են ինչ վոր խողովականման բաներ և ծամելով ստանում ռեզինանման մի նյութ: Թե ինչ են և ինչպես են առաջանում այդ խողովականման բաները, նա չգիտեր, բայց յերբ լուծում է նրանց բնույթնի մեջ և ստանում ռեզինի սոսինձ, պարզվում է, վոր նրանք պարունակում են իրենց մեջ խկական կառուցուի, շուտով պարզվում է նաև այն, վոր այդ խողովակները գտնվում են մի բույսի ցողունի վրա: Այդ բույսը կոչվում է խոնդրիլ:

Պողովակները պատրաստում են մի փոքրիկ թիթեռի թրթուռները. սրանք կերակրվում են խոնդրիլ բույսի կաթանման նյութով, վոր պարունակում է իր մեջ կառուցուի և խեժ: Բայց վորովհետև թե կառուցուի և թե խեժը անմարտելի յեն, դրա համար ել անփոփոխ վիճակում դուրս են գալիս արտաթորութիւնների հետ միասին. անս հենց այդ արտաթորութիւններից է, վոր մի տեսակի ցեցի թրթուռները պատրաստում են իրենց համար փոքրիկ խողովականման բնիկներ, վորոնց մեջ թագնովելով պաշտպանվում են ջերմութիւնից և չորացումից:

խոնդրիլի մի այլ տեսակի արմատների վրա Կազակրատանում նկատել են ինչ վոր ուռուցքներ, վորոնք բաղկացած են կառուցուից, խեժից և ավազից: Իրտողութիւնները ցույց են տվել, վոր այդ ուռուցքներն առաջանում

են շնորհիվ մի տեսակի միջատի, վոր կերակրվում է խոնդրիլի կեղևի բջիջներով և կաթանման նյութով: Յերբ այդ միջատը կրծում է կեղևը, կաթանման հեղուկը դուրս է գալիս և պնդանալով առաջ բերում մի փոքրիկ խուլ, վոր հետագայում հետզհետե մեծանում է, վորովհետև միջատը շարունակ կրծելով կեղևը, պատճառ է դառնում, վոր շարունակ հոսի կաթանման հեղուկը: Միջատը կարծեք մի տեսակ կթում է խոնդրիլի մեջ պատրաստվող կաթանման հեղուկը: Մի ամառվա ընթացքում միջատն այդ ձևով կուտակում է մոտ մեկ և կես դրամ մարտ: ր կառուցուի:

Հետաքննելով խոնդրիլի արմատների կամ ցողունի վրա գտնվող այդ խուլերի և կամ խողովականման բների մեջ գտնվող ավազը և ավելորդ բաները՝ ստանում են մի նյութ, վոր գեոամբոզովին կառուցուի չի, նա պարունակում է իր մեջ և բավական մեծ քանակութեամբ խեժ. դրա համար ել նրանից կարելի յե պատրաստել փոշ թե փափուկ ռեզինի իրեր, այլ պինդ, այսպես կոչվող երոնիաային իրեր: Փափուկ ռեզինե իրեր պատրաստելու համար պետք է կառուցուից հեռացնել խիժային նյութերը. մի բան, վոր կապված է շափազանց մեծ դժվարութիւնների հետ: Սակայն բանից դուրս և յեկել, վոր մորեխը, այդ խիստ փափափար միջատը կարող է մեզ այդ դործում բավական մեծ ոգուտ տալ: Յեվ այդ անս թե ինչպես կառուցուի խոնդրիլի մեջ գտնվում է միայն կեղևի մեջ, իսկ մորեխն ուտում է միայն բույսերի կեղևը և տերևները. նշանակում է, յեթե պատրաստենք մեծ վանդակներ, ածենք այնտեղ մորեխներ և դնենք վանդակների մեջ խոնդրիլի թփեր, մորեխները կուտեն միայն թփերի տերևները և կեղևը, ասել է, նրանք կուտեն և կեղևի մեջ գտնվող կառուցուի, բայց քանի վոր կառուցուիլը անմարտելի յե, դրա համար ել անփոփոխ վիճակում դուրս կգա մորեխների արտաթորութիւն-

ների հետ: Կառուցուին այդտեղ խառն չի լինի խիժային նյութերի հետ, վորովհետև այս նյութերը գտնվում են ցողունի փայտային նյութի մեջ, վոր մորեխները չեն ուտում: Այնուհետև յեթե հավաքվի մորեխների արտաթորությունները, նրանցից կարելի յե ստանալ մաքուր կառուցուկ:

Խոնդրիլը նույնպես բաղամայն խոտաբույս է սառուսազրդի նման, բայց առայժմ նրանից մեծ սպասելիքներ չունենք. նա կարող է Միության արդյունաբերության մեջ կատարել միայն ոժանդակ հումուլյի դեր: Այժմ Կազակաստանում կառուցված է խոնդրիլից կառուցուկ ստանալու առաջին գործարանը:

3. ՔԵՆԴԸՐ (ՊԱՐԱՆԱԲՈՒՅՍ)

Քենդրը վայրի վիճակում աճում է Կազակաստանում, գետերի ափերին, վորոնք զարնանը ծածկվում են ջրով: Նա առաջները համարվել է իբրև միայն թելատու բույս և նրանից տեղական բնակիչները հին ժամանակներից սկսած պատրաստում են ամուր թոկեր կամ պարաններ, հենց այդտեղից էլ առաջացել է նրա քենդր անունը, վոր հայերեն նշանակում է պարան: Թելերը գտնվում են նրա ցողունի մեջ, ցողունի մեջ կան և կաթնանոթներ, վորոնց միջով հոսող կաթնաման հեղուկը պարունակում է իր մեջ կառուցուկ, բայց շատ չնչին քանակությամբ: Կաթնանոթները գտնվում են նրա վոչ միայն կեղևի, այլ և ավելի խորը շերտերում, դրա համար էլ շատ զժվար է անջատել կառուցուկատու մասը մյուս մասերից:

Սակայն 1930 թվին մի յերիտասարդ գիտնական գտել է, վոր նրա տերևների բջիջները ևս պարունակում

են իրենց մեջ կառուցուկ, այն ևս զգալի քանակությամբ: Նշանակում է, տերևները, վորոնք առաջներն իբրև անպետք բաներ, դեն եյին շարտում, այժմ կարող են ոգտագործվել վորպես կառուցուկի հումուլյի:


Յեթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, վոր պլանով ներկա հնգամյակում քենդրի ցանքերը պիտի գրքավեն 300,000 հեկտար տարածություն, ապա պարզ պիտի լինի մեզ համար, թե ապագայում ինչքան մեծ նշանակություն պիտի ունենա այդ բույսը մեր կառուցուկի արդյունաբերության մեջ:

Գ Ո Ւ Տ Տ Ա Պ Ե Ր Չ

Կառուցուկին շատ նման է մի այլ նյութ, վոր կոչվում է գուտտապերչ. սա սառը վիճակում ձգվող չի, այլ պինդ է, իսկ յերբ տաքացնում են, փափկում է խմորի նման և այդ ժամանակ նրանից կարելի յե ծեփել զանազան իրեր, վորոնք սառելուց հետո պնդանում են և պահպանում իրենց ստացած ձևը: Բացի դրանից, գուտտապերչը մեծ զժվարությամբ է յենթարկվում թթուների, ջրի և ողի ներգործության, դրա համար էլ հաճախ նրանից պատրաստում են ատամների պլոմբ. բայց վոր ամենազրիտավորն է, նա շատ լավ մեկուսացնում է ելեքտրականությունը, այսինքն թույլ չի ապլիս, վոր նա հաղորդարներից անցնի հողին և կամ ջրին. այս իսկ պատճառով էլ յերբ պետք է լինում հողի և կամ ջրի միջով հաղորդարներ անցկացնել, մանավանդ ծովի հատակով, միշտ նրանց պատում են գուտտապերչի շերտով:

Գուտտապերչը նույնպես ստացվում է բույսերից. գուտտապերչատու բույսերն աճում են տաք և խոնավ

յերկրներում, մեծ մասամբ այնտեղ, վորտեղ անպիտանի-
ներն ու հողանդացիներն ունեն հեվեյա կաուչուկատու
ծառի խոշոր անկարաններ: Ամենահայտնի գուտտապե-
չատու բույսը եյկոմիան է, վորի տերևների մեջ գուտ-
տապերը գտնվում է այնպիսի բարակ թելերի ձևով, ինչ-



պիսի թելերի ձևով գտնվում է կաուչուկը տաու-սազրզի-
արմատների մեջ, միայն շատ ավելի չնչին քանակությամբ
եյկոմիայի հայրենիքը համարվում է Չինաստանի կենտ-
րոնական մասը և Յապոնիան: Մրանից յերեսուն տարի-
առաջ Չինաստանից մի քանի հատ եյկոմիայի անկիները

են փոխադրվել Բաթումի, Սուխումի և Սոչու շրջանները:
վորտեղ նրանք հարմարվելով տեղական կլիմային՝ շատ
լավ աճել են և այժմ հրաշալի հովասուն ծառեր են այն-
տեղ: Եյկոմիայի ծառ կա և Ուկրայնայում, վոր տեղա-
փոխվել է այնտեղ 1906 թվին Իտալիայից: Այդ ծառերից
մինչև այժմ սերմեր չեն ստացվել, վորովհետև դրանք բու-
լորն ել գուրս են յեկել արու ծառեր, դրա համար ել
հնարավոր չի յեղել շատացնել նրանց թիվը: Սակայն 1937
թվին շնորհիվ Մոսկվայի բուսաբանական այգու գերեկ-
տոր Տրեսպեյի, հաջողվել է մատների միջոցով նոր ծառեր
ստանալ: Այս միջոցով ծառեր բազմացնելով խոշոր անկա-
րաններ են հիմնվել Արխաղիայում և Աջարիստանում: Ար-
խաղիայում կա այժմ մի հատուկ խորհրտնտեսություն, վոր
500 հեկտարի վրա եյկոմիա յե մշակում, իսկ Աջարիստա-
նում Յիսիս-Չիրիում եյկոմիայի փորձակայանին կից կա
մի բուծարան: Պլանով նախատեսնված է հիմնել 4 — 5
պարկեր, վորոնցից ամեն մեկի մեջ 10 — 12 հազար եյ-
կոմիայի ծառ պետք է անկվի: Բայց մերձավոր մի քա-
նի տարիների ընթացքում եյկոմիայի ծառերի թիվը պի-
տի հասցնել մոտ 800.000-ի: Նրանց մոտ 25 — 40 տոկոսը
պիտի լինի հատուկ պարկերում, իսկ մնացածը պետք է
անկվեն զբոսավայրերի ծառուղիներում, փողոցների յեզ-
րերին, այգիներում և այլ նման տեղերում: Յեվ այդ
միանգամայն նպատակահարմար է, վորովհետև եյկոմիան
չափազանց զեղեցիկ և թավոտ, ուրեմն և լավ զարգաճա-
տ է, իսկ մյուս կողմից ել գուտտապեքը ստանում են վոչ
թե կանաչ տերևներից, այլ արդեն անպետքացած և թափ-
ված տերևներից: Նշանակում է, տերևաթափի ժամանակ
հավաքված տերևները կարելի յե զործածել այդ նպա-
տակով:

Մեզ մոտ դանվող եյկոմիայի տերէններից պատրաստ
վել և գուտտապերչ, վոր իր հատկութեամբ յետ չի մնում
բնավ արտասահմանյան գուտտապերչից: Այս բոլորը հիմք
են տալիս մեզ սպասելու, վոր մերձավոր ժամանակներում
մենք կազատվենք գուտտապերչի տեսակետից արտասահ-
մանյան կախումից և նույն իսկ հնարավորութիւնն կու-
նենանք գուտտապերչ արտահանելու:



ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Ճեքսմ
2. Նազար

Շ Ե Ր Ա Մ

Շ Ե Ր Ա Մ Ա Տ Ո Ւ Ն

Շերամապահութեամբ պարապելու համար ամենից առաջ պետք է հոգ տանել շերամատան մասին: Շերամատուներ պետք է լինի չոր, մաքուր և ողորտաւ, նրա հատակը պիտի լինի կամ փայտից և կամ ցեմենտից, փորպետքի սրբելու ժամանակ փոշի չբարձրանա, փորովհետև այդ փոշին նստելով տերևների վրա՝ վերջիններիս ներս միասին կարող է մտնել փորդի ստամոքսը և պատճառ դառնալ զանազան տեսակ հիվանդութիւնների: Աղափութեան համար շերամատուներ պիտի ունենա վորոշ հարմարութիւններ, բայց այնպէս, փոր շառայանան միջանցուկ քամիներ:

Յեթե շերամատան մեջ նախորդ տարին շերամ է պահվել, ապա պետք է անպայման ախտահանել: Ախտահանութիւն կատարելու համար պետք է շերամատան հատակը, պատերը և առաստաղը լվալ և կամ կրով սպիտակացնել, դարակները լվալ պղինձարջասպի լուծու թոյլ և շերամատան մեջ ծծուձք վառել: Ծծուձք վառելու համար պետք է շերամատան դռները, պատահանները և առհասարակ բոլոր անցքերը փակել և ապա մանղալների մեջ ամէլ մոտ մի կիլո ծծուձք և վառել: Յեթե նախորդ տարին շերամատան մեջ յերևացել է Ֆլաշրրիա հիվանդութիւն, այդ դեպքում ախտահանութիւնը պիտի կատարել բոլոր գաղով, փորովհետև ծծուձքային գաղը չի կարողանում փոր

չնչացնել այդ հիվանդութեան միկրոբներին: 24 ժամվա ընթացքում մեր հիշած գազերը կարողանում են իրենց գերը կատարել, զրա համար ել այդ ժամանակամիջոցը յրանալուց հետո կարելի յե արգեն բացել շերամատան գոններն ու պատուհանները:

Շերամատուներ պիտի ունենա և տաքացնելու հարմարութիւններ: Դիտողութիւնները ցույց են տվել, վոր ինչքան շերամատան շերմաստիճանը բարձր է, այնքան վորդերն ավելի արագ կերպով են աճում ու դարգանում: Միլինակ, յեթե շերամատան շերմութիւնը հասնում է 22 — 23 աստիճանի, վորդերի կյանքը տևում է ընդամենը 33 — 35 օր, իսկ յեթե շերմութիւնը պահվում է 15 — 16 աստիճանի վրա, այդ դեպքում վորդերի կյանքը տևում է 50 — 60 օր: Ինչպես տեսնում եք, տարբերութիւնը խիստ մեծ է: Վորդերի կյանքի տևողութիւնը կարճացնելը չափազանց մեծ նշանակութիւն ունի, վորովհետև ինչքան կարճ լինի այդ կյանքը, այնքան ավելի լավ շերամապահի համար. շերամապահն այնքան ավելի շուտ կազատվի վորդերի խնամքի հետ կապված աշխատանքներից: Բացի դրանից, ինչքան կարճ տևի վորդերի կյանքը, այնքան վորդերն ավելի մննդարար և գյուրամարս կերակուր կունենան, վորովհետև թթենիների տերևներն ինչքան հնանում են, այնքան կոշտանում, պնդանում են և դժվարամարս դառնում, իսկ ինչքան լավ ու մննդարար է վորդերի սրտունդն, այնքան նրանք ավելի լավ բոժոժներ են հյուսում: Վորդերի կյանքի կարճ տևողութիւնն ոգտակար է և թթենիներին համար, վորովհետև ինչքան նրանք շուտ կտրատվեն, այնքան նրանք նորից աճելու ու զարգանալու համար ավելի շատ ժամանակ կունենան: Կա ուշադրութեան արժանի և մի այլ հարգամանք. ինչքան վորդերի կյանքը կարճ է, այնքան նրանց դանազան հիվանդութիւններով

վարակվելու ժամանակամիջոցն ևս կարճ է տևում, հետևապես և հիվանդանալու հավանականութիւնները քչանում են:

Բայց ինչպես բարձրացնել շերամատան շերմաստիճանը: Դրա համար լավագույն միջոցը պատի վառարանն է: Այս վառարանը տաքութիւնը պահպանում է սովորաբար միատեսակ դրութեան մեջ, մի բան, վոր շատ կարևոր է, վորովհետև շերմաստիճանի խոշոր տատանումները շատ վատ ազդեցութիւն են ունենում վորդերի առողջութեան վրա: Իսկ յեթե պատի վառարան չունենալու պատճառով մարդ ստիպված է վառել թիթեղյա վառարան, այդ դեպքում պետք է վառարանի հաստակը, վերևի մասը և պատերը ծածկել աղյուսով, վորպեսզի վառած ժամանակնա շուտ չտաքանա և շուտ ել չսառի:

Նավթի վառարան չի կարելի գործածել, վորովհետև նավթի հոտը վնասակար է վորդերի համար: Լուս-վորութեան համար ևս չի կարելի նավթի ճրագ գործածել. յեթե չկա ելեկտրական ճրագ, այդ դեպքում պետք է մտ վառել:

Փոքր տնտեսութիւններն իհարկե այս հարմարութիւններն ունենալ չեն կարող, զրա համար ել անհրաժեշտ է, վոր նրանք միանալով կազմեն խոշոր կոլտնտեսութիւններ, և այդպիսով հնարավորութիւն ստեղծեն շերամապահութիւնը դնելու կանոնավոր հիմքերի վրա:

ԶՎԵՐԻ ԱՐՅՆԱՑՈՒՄԸ

Լավ բերք ստանալու համար ամենից առաջ անհրաժեշտ է վերցնել շերամապահական կայանում ստացված և քննութեան յենթարկված ձվեր կամ ինչպես ասում են, սերմեր: Այդպիսի ձվերը պահվում են սուսիների մեջ և

ունենում են իրենց վրա պետական կնիք: Չմեռ պետք է պահել նրանց չոր, հով և ուղառատ տեղում, իսկ գարնանը, թթենու տերևները բացվելուց 20—25 որ առաջ պետք է հանել աուվից և փռել մաքուր շորի վրա: Ավելի լավ է գրա համար վերցնել մաղ և փռել ձվերը նրա մեջ փոփած շորի վրա: Այս վերջին դեպքում ձվերն ազատ կերպով շունչ կառնեն, մի հանգամանք, փոր շատ կարևոր է ձվերի արթնացման համար: 10—15 որ ձվերն այդպես պահելուց հետո պետք է սկսել շերամատուներ աստիճանաբար տաքացնել: Յերթ թթենու տերևները բացվելու մոտ լինեն, շերամատան տաքությունը պետք է հետզհետե բարձրացնել և հասցնել 25 աստիճանի: Այդ աշխատանքները պետք է այնպես տանել, փոր ձվերից դուրս յեկած վորդերը կարողանան ուտել մատղաշ տերևներ:

Ձվերն արթնացնելու համար շատերը դիմում են յերբեմն մի շատ պարզ միջոցի: Ձվերն ածում են մի քսակի մեջ և կախում վերջինս մարդու պարանոցից այնպես, փոր քսակը կպած լինի մարմնին. յերբեմն ել ձվեր պարունակող քսակը պահում են թևի տակ: Եման դեպքերում ձվերը տաքանում են մարդու մարմնից ճիշտ այնպես, ինչպես հավի ձվերը տաքանում են հավի մարմնից և վորոշ ժամանակից հետո նրանցից դուրս են գալիս վորդեր: Այս ձևով ձվեր արթնացնելը լավ հետևանքներ չի տալիս, դրա համար ել յերբեք ել չպիտի դիմել այդ միջոցին:

Ձվերն արթնացնելու համար կա մի լավ գործիք, փոր կոչվում է ինկուբատոր: Մա մի թիթեղյա արկղ և կրկնակի պատերով: Պատերի արանքը շուր են լցնում և տաքացնում ճրագով. տաքացած շուրն իր հերթին տաքացնում է և գործիքի մեջ յեկած ուղը: Այդ գործիքով ձվերը տաքացնելու ժամանակ պետք է այնպես անել, փոր յերամատուներ չանցնի Յերսիուսի 27¹/₂ աստիճանից և

վոր ել իջնի 17 աստիճանից: Գործիքի վրա կան անցքեր, վորոնցով ուղը շարունակ փոփոխվում է: Չերմության աստիճանն իմանալու համար գործիքի մեջ մացրած է մի ջերմաչափ, վորի աստիճանները կարդալու համար գործիքի մի պատը յինում են ապակուց: Գործիքի տակ պիտի վառել յուղի ճրագ, վորովհետև նավթի ճրագի արձակած հոտը վնասակար ազդեցություն է ունենում արթնացող ձվերի վրա:

Բոլոր ձվերից վորդերը միանգամից չեն դուրս գալիս. առաջին որը դուրս են գալիս քիչ թվով վորդեր, վորոնց սովորաբար վոջնչացնում են, վոջնչացնում են նաև ուշ դուրս յեկողներին, վորովհետև վերջիններս առհասարակ շատ թույլ են լինում և հեշտությամբ հիվանդանում են: Խնամելու համար վերցնում են յերկրորդ, յերրորդ և չորրորդ որերին դուրս յեկածներին:

ՇԵՐԱՄԻ ՎՈՐԴԻ ԿՅԱՆՔԸ

Ձվերից դուրս յեկած վորդերն ամենից առաջ աշխատում են ազատվել ձվերի կեղևից. պետք է ասել, փոր դա այնքան ել հեշտ գործ չէ. պատահում է յերբեմն, փոր նրանք չեն կարողանում դուրս գալ կեղևից և մեռնում են նրա մեջ:

Մարդիկ այդ տեսակետից վորդերի գործը հեշտացնելու համար դնում են նորելուկ վորդերի վրա մանր ծակոտիներ ունեցող հաստ թուղթ և կամ քող: Վորդերը ծակոտիներին միջով լույս նկատելով՝ աշխատում են դուրս գալ նրանց միջից. դուրս գալու ժամանակ նրանք քսվում են ծակոտիների յեղրերին և այդ ճանապարհով հեշտությամբ ազատվում են կեղևից:

Ձվերից դուրս գալուց հետո վորդերը սկսում են կե-
րակուր ընդունել. մարդիկ տալիս են նրանց թթենու մատ-
ղաշ և մանր կտրտած տերևներ, վոր փռում են ծակոտի-
ներ ունեցող թղթի վրա և դնում դարակների վրա: Վոր-
դերն այդ տերևներն ուտում են մեծ ազահուլթյամբ և
արագ կերպով մեծանում: Մեծանում են, ինչպես ասում
են, վոչ թե որերի, այլ ժամերի ընթացքում: Բայց այդ
մեծանալը նրանց աժան չի նստում: Բանն այն է, վոր
նրանց մաշկը նրանց մարմնի հետ միասին չի մեծանում,
ճիշտ այնպես, ինչպես մեր շապիկը մեր մարմնի հետ միա-
սին չի մեծանում. այս իսկ պատճառով ել նրանք ստիպ-
ված են փոխելու իրենց մաշկը: Առաջին անգամ նրանք
շապիկ կամ խորիս փոխելու կարիքը զգում են 2—5 որից
հետո: Այդ ժամանակ նրանք դադարում են ուտելուց,
թմրում մի տեսակ և մնում անշարժ վիճակում: Պարզ
կերպով նկատելի յե, վոր վորդը ծանր դրուլթյուն է ապ-
րում: Այդպես մնում է նա 22—24 ժամ. շատերը կար-
ծում են, թե վորդը քնած է, բայց իհարկե նա քնած չէ,
այլ տարված է շապիկ փոխելու հոգսով: Վերջը մաշկը
պատռվում է և վորդը մեծ ճիգեր գործ դնելով դուրս է
գալիս նրա միջից նոր թարմ մաշկով:

Գա վորդի կյանքի առաջին շրջանն է: Այս շրջանում
մարդիկ նրանց որական վեց անգամ կեր են տալիս և ինչ
չափով մեծանում են նրանք, այն չափով ել նոսրացնում
են նրանց: Նոսրացնելու համար նրանց վրա դնում են
ծակոտիներ ունեցող թուղթ և վրան շարում մանր կտրտած
տերևներ: Վորդերը տերևների հոտն առնելով դուրս են
գալիս ծակոտիներից և բարձրանում տերևների վրա: Յերբ
բավականաչափ վորդեր են հավաքվում, նոր թուղթը տե-
րևների և վորդերի հետ միասին տեղափոխում են նոր

դարակ: Վորդի կյանքի այս շրջանում շերամատան տա-
քուլթյունը պիտի հասնի 23—24 աստիճանի:

Շապիկ փոխած վորդերի աակը պիտի մաքրել. դրա
համար վորդերի վրա դնում են ծակոտիներ ունեցող թուղթ
և վրան շարում տերևներ, այս անգամ արդեն ավելի մեծ
կտորների բաժանած և յերբ բոլոր վորդերը ներքևից բարձ-
րանում են վերև, զգուշությամբ հանում են ներքևի թուղթը՝
վրան յեղած չորացած տերևների կտորներով, վորդերի ծեր-
տով կամ ազրով և փոխած խորխերով: Այս բոլորը դուրս
են հանում և հեռացնում շերամատնից: Վորդերն այժմ ել
ավելի մեծ ազահուլթյամբ են ուտում: Նրանց տալիս են
դարձյալ որական վեց անգամ կեր: Յերեք որ անցնելուց
հետո նրանք նորից կարիք են զգում շապիկ փոխելու, կամ
ինչպես ասում են, նորից քուն մտնելու, վոր տևում է
20—24 ժամ:

Այս ել վորդի կյանքի յերկրորդ շրջանն է:

Յերբ վորդերը փոխում են իրենց շապիկը, նրանց
տեղափոխում են նոր թղթերի վրա, մաքրում տակները և
նոսրացնում: Այժմ նրանց կերակրում են որական դար-
ձյալ 5—6 անգամ, բայց տալիս են տերևներն առանց
կտրտելու, կարելի յե տալ նույն իսկ փոքրիկ ճյուղերով:
Վորդերն ազահուլթյամբ խժուում են կերը, մեծանում և
4—5 որից հետո կրկին քուն մտնում, այսինքն՝ նորից
կարիք են զգում խորիս փոխելու:

Այս արդեն վորդի կյանքի յերրորդ շրջանն է:

Նորից փոխած վորդերին նորից նույն ձևով տեղափո-
խում են նոր թղթերի վրա, մաքրում տակները և նոս-
րացնում:

Այս շրջանում նրանց կերակրում են որական 4—5
անգամ և տալիս են տերևները փոքրիկ ճյուղերով: 5—6
որից հետո վորդերը նորից քուն են մտնում. բայց այս

քունն արդեն վերջին քունն է, վոր տևում է 36—40 ժամ:
Սրանով վորդն անց է կացնում չորրորդ շրջանը:

Իրանից հետո վորդը մտնում է իր կյանքի հինգերորդ շրջանը: Այս անգամ ևս մարդիկ տեղափոխում են նրանց նոր թիվերի վրա, մաքրում տակները և նոսրացնում: Ինից արթնանալուց հետո, առաջին յերկու որը վորդերը շատ քիչ են ուտում, բայց հետզհետե բացվում է նրանց ախորժակը և նրանք սկսում են լափել կերը մեծ ազահությամբ, կարծես թե զգում են, վոր շուտով պետք է դադարեն ուտելուց: Այս շրջանում նրանք ուտում են մինչև այդ կերածի մոտ քառասուտիկը: Առատ կերակուր ընդունելով նրանք արագությամբ մեծանում են: Ինչքան մեծանում են, այնքան պետք է նրանց շատ նոսրացնել, վոր պեսզի նրանք կարողանան ազատ կերպով շարժումներ կատարել և հաջող կերպով զարգանալ: Հակառակ դեպքում նրանք թույլ կլինեն և հեշտությամբ կենթարկվին զանազան տեսակի հիվանդությունների: Սենյակի սաքությունն այդ ժամանակ պիտի լինի 21—22 սասիճան և ողն ել մաքուր ու չոր: Այս շրջանում շատ մեծ ուշադրություն պիտի դարձնել մաքրության վրա, վորի համար վորդերի տակը առնվազը պետք է յերկու անգամ մաքրել: 6—7 որ լավ ուտելուց հետո, վորդերն սկսում են հետզհետե ավելի և ավելի քիչ ուտել. նրանց ախորժակն սասիճանարար թուլանում է: Նրանք սկսում են մի տեսակ փոքրանալ և պեղնել:

Իրանով վերջանում է վորդի կյանքի հինգերորդ շրջանը:

Այս շրջանն անց կացնելուց հետո վորդն սկսում է բոժոժ հյուսել և մեջը կծկվել:

Տեսնենք թե ինչպես է նա բոժոժ շինում:

ԲՈՒՌԺ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Շերամի վորդի մարմնի մեջ ժամանակի ընթացքում հավաքվում, կուտակվում է մի տեսակ հեղուկ, վոր վորդի մարմնից դուրս գալուց հետո ողի ազդեցության տակ անմիջապես պնդանում է: Ահա հենց այդ հեղուկից է պատրաստում նա իր բոժոժը: Յեթե մենք դիտելու լինենք, կտեսնենք, վոր բոժոժ հյուսող վորդի ներքևի շրթոնքից դուրս է գալիս շարունակ հեղուկի յերկու շեթ, վորոնք անմիջապես միանալով միմյանց հետ, պնդանում են և կազմում այն թելը, վորից նա բոժոժ է հյուսում:

Բոժոժ հյուսելու համար վորդն ամենից առաջ հարմարավոր տեղ է վորոնում, վորի համար և սկսում է այս ու այն կողմը գնալ: Մարդիկ այդ ժամանակ նրան ողնելու համար նրա մոտ դնում են ցախ: Ցախի համար վերցնում են սովորաբար ավելանման բույսեր, կաղնու ճյուղեր և այլն: Ցախի ճյուղերը կապում են իրար հետ, բայց այնպես, վոր վորդերն ազատ կերպով կարողանան մտնել նրանց արանքները և բոժոժ հյուսել: Ամեն վորդ հյուսում է մի առանձին բոժոժ, բայց յերբ տեղները նեղվածք է յինում, պատահում է, վոր յերկու վորդ միասին մի հաս բոժոժ են հյուսում:

Բոժոժ հյուսելու ժամանակ վորդը նախ և առաջ թելը միացնում է հենարան ծառայող կետերի հետ և ապա պիտի միանման և համաչափ շարժումներ կատարելով հյուսում բոժոժը շերտ-շերտ: Յերբ բոժոժը դեռևս մի շերտից է բաղկացած, պարզ կերպով նկատվում է վորդի շարժումները բոժոժի մեջ: Նա իր աշխատանքն այնպես է առաջ տանում, վոր յերբեք թելը չի կտրվում. նշանակում է, նրա ամբողջ բոժոժը հյուսվում է մի հաս թելից, վոր

բի յերկարությունը հասնում ե մոտավորապես մի կիր-
մեարի: Հյուսելու աշխատանքը վերջացնում ե նա յերկու-
-յերեք, յերբեմն ել չորս կամ հինգ որում: Բոլոր վորդերը
միանգամից չեն ցախ բարձրանում, զրա համար ել պիտի
սպասել, վոր ամենավերջին ցախ բարձրացածները ևս
բոժոժներ հյուսեն և ապա պիտի սկսել հավաքել բոժոժ-
ները: Յեթե բերքը սերմացվի համար չե, բոժոժները կա-
րելի յե հավաքել վորդերից ցախ բարձրանալուց առա որ-
հետ: Իսկ յեթե սերմացվի համար ե, այդ դեպքում բո-
ժոժները պիտի մնան ցախի վրա ամենաքիչը 14—15 որ:

Բոժոժը հյուսելուց հետո վորդը կծկվում ե նրա մեջ
և փոխարկվում այսպես առած՝ հարսնյակի, վոր լր տես-
քով նման չե վորդին: Հարսնյակի վիճակում նա բոլորովին
չի շարժվում և մնում ե այդպես անշարժ յերկու-յերեք
շաբաթ: Այդ ժամանակի ընթացքում նա հետզհետե կեր-
պարանափոխվում ե և վերջը դառնում մի սիրուն թիթեռ:
Յեվ բոժոժը հյուսում ե նա հենց նրահամար, վոր նրա մեջ
կարողանա անվտանգ կերպով կատարել այդ կերպարանա-
փոխությունը: Թիթեռ դառնալուց հետո այլ ևս նա բո-
ժոժի կարիքը չի զգում, զրա համար ել դուրս ե գալիս
նրանից:

Բայց ինչպես ե նա դուրս գալիս բոժոժից: Չե վոր
բոժոժի պատերը բավական հաստ են ու պինդ, իսկ թի-
թեռը՝ գուրկ ե ուժեղ ծնոտներից:

Մի շատ հասարակ ձևով:

Յերբ պետք ե դուրս գալ բոժոժի միջից, նրա բերա-
նից արսազրվում ե մի շագանակագույն հեղուկ, վոր կա-
թելով բոժոժի սլափի վրա՝ փափկեցնում ե նրան այնպե-
տիճան, վոր այնուհետև մի թեթե ճնշման տակ անգամ
նա հեշտությամբ պատուվում ե: Ահա այս ձևով նա ծա-
կում ե իբ բանափ պատը և դուրս գալիս լույս աշխարհ:

Երամի թիթեռը, ճիշտ ե, ունի յերկու գույգ թևեր,
բայց թռչել չի կարողանում: Նշանակում ե, նրա թևերը
կորցրել են իրենց ամբողջ նշանակությունը: Յեվ այդ
շնորհիվ այն հանգամանքի, վոր յերբ մարդիկ ընտանեցրել
են նրան, նրանից ձվեր ստանալու համար թույլ չեն տվել,
վոր նա թռչելով հեռանա զանազան կողմեր, այլ պահել
են վանդակի մեջ և հարկադրել են ձվեր ածել նրան իրենց
մոտ: Պահվելով վանդակի մեջ, նա գուրկ ե յեղել թևերը
գործ ածելու հնարավորությունից. թևերը մատնվել են
անգործության և զրա հետևանքով դարերի և հազարա-
մյակների ընթացքում հետզհետե թուլացել, հետադիմել
են ճիշտ այնպես, ինչպես թուլացել, հետադիմել են և
մեր ընտանի թռչունների՝ հավերի, սագերի, հնդկահավե-
րի, բազերի թևերը:

Երամը բոժոժից դուրս գալուց հետո յերկար չի
ապրում. նրա կյանքն այդ շրջանում տևում ե ընդամենը
յերեք - չորս որ: Իր կյանքի այս շրջանում նա միայն
մտածում ե ձվեր ածելու մասին. նա այնպես ե կրճատվում
այդ հոգսով, վոր վոչ մի այլ բանով այլ ևս չի հետաքրք-
րվում: Այն շատակեր վորդը, վոր շարունակ խժռելով
եր զբաղված, այժմ կերի մասին բոլորովին չի մտածում:
Աժում ե մի քանի հարյուր ձու և հանդիստ կերպով
մեռնում:

Ահա այսպես ե ընթանում շերամի ամբողջ կյանքը:

Երամի ձվերը մարդիկ պահում են ամբողջ ձմեռը
հով տեղում մինչև գարունը և յերբ թիթեռին տերևում ե,
նրանց արթնացնում են և ստանում նրանցից վորդեր և
բոժոժներ: Նշանակում ե, տարվա ընթացքում ստանում
են միայն մի բերք: Սակայն վորձերը ցույց են տվել,
վոր կարելի յե ստանալ յերկու և մինչև անգամ յերեք

բերք, այն է մեկը գարնանը, մյուսը ամռանը և մեկն էր աշնանը:

Տարեկան յերկու և յերեք բերք ստանալու առաջին փորձն Անդրկովկասում կատարվել է միայն 1932 թվին և տվել է բավական հաջող հետևանքներ: Այսպես որինակ, Գուրթայիսի շրջանում ամառային բերքը տվել է նախատեսնված քանակության 116 տոկոսը, Գյուղչայի շրջանում՝ 105 տոկոսը և այլն: Իբրև առաջին փորձ Անդրկովկասում, նա ի հարկե կատարվել է վոչ լայն ծավալով, բայց փորձի հաջողությունը գրավական է, վոր հետագայում նա պիտի ընդունի մասսայական բնույթ: Այդ գեպքում կասկածից դուրս է միանգամայն, վոր շերամապահությունը կդառնա մի չափազանց ձեռնտու զբաղմունք և հնարավորություն կաա կազմակերպելու շերամապահական հատուկ խորհանդեսություններ ու կորոնտեսություններ: Մի հանգամանք, վոր շերամապահության զարգացման համար հանդիսանում է գլխավոր նախապայմաններից մեկը:

ՇԵՐԱՄԻ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շերամն ունի մի շարք հիվանդություններ, վորոնցից ամենազխրավորները համարվում են պեբրինը, Ֆլաշբրիան, կրասրիան և մուսկարսինը:

Պեբրինը խիստ վարակիչ հիվանդություն է, որպեսզի կերպով տարածվում է և մեծ ավերածություններ կատարում վորդերի մեջ. նրանով հիվանդ վորդը կորցնում է ախորժակը, քիչ է ուտում, թուլանում է, համարյա դադարում շարժումներ կատարելուց և ծածկվում բողբոջի վ սև կետերով: Հիվանդների մեծ մասը մեռնում է: Անցյալ տարվա կեսերին այդ հիվանդությունը շատ լայն

տարածում էր ստացել Ֆրանսիայում և հակայական վաստեր էր հասցրել շերամապահության: Մի քանի նահանգներում, վորտեղ շերամապահությունը բնակչության գրեթե լիակամ զբաղմունքն էր կազմում, այդ հիվանդությունը, ժողովրդական մեծ աղետի կերպարանը էր ստացել: Վաստերը համուռ էլին հարյուրավոր միլիոն ֆրանկի. ժողովուրդը հուսահատության մեջ էր ընկել: Հիվանդության դեմ պայքարելը դարձել էր կառավարության գլխավոր մտահոգություններից մեկը: Գիտնականների մի խումբը գրավելով այդ հիվանդության ուսումնասիրությանը պարզում է, վոր հիվանդության պատճառ հանդիսանում են միկրոբները, վորոնք այս կամ այն ճանապարհով մտնելով վորդի մարմնի մեջ՝ թունավորում են նրան ու սպանում: Պարզվում է նաև այն, վոր այդ հիվանդությունը ժառանգական է, այսինքն՝ յեթե ծնողները հիվանդ են, ապա հիվանդ պիտի լինեն նաև նրանցից առաջացած գավակները: Յերը պարզվում են այս խնդիրները, այնուհետև գտնվում է և հիվանդության տարածման դեմ կռվելու արմատական ճանապարհը: Պետք է այնպես անել, վոր արթնացող ձվերն առաջացած լինեն առողջ ծնողներից: Բայց ինչպես Ֆրանսիացի ականավոր գիտնական Լուի Գասսյորը գրա համար առաջարկում է հետևյալ պարզ միջոցը: Յերը շերամի թիթեռները դուրս են գալիս բոժոժներից, նրանցից պետք է անմիջապես գույգեր կազմել, մտցնելով ամեն մի գույգի մեջ մի արու և մի եգ և ապա գետեղել գույգերին առանձին-առանձին քսակների մեջ: Յերը քսակների մեջ եղերը ձվեր ածեն, այնուհետև պետք է թիթեռների գույգը տրորել ջրի մեջ և դիտել միկրոսկոպով, յեթե նկատվեցին միկրոբներ, նշանակում է, ձվերը ևս վարակված են, ուրեմն նրանցից դուրս յեկող վորդերը պետք է հիվանդանան, գրա համար այդ

պիսի թիթեռների ձվերը պետք է անմիջապես փոխնչացնել, իսկ յիժե միկրոթներ չնկատվեն, այդ դեպքում նրանց ձվերը պիտի հավաքել, պահել և նրանցից ստանալ փոքրեր Գործադրելով այս միջոցը՝ շատ կարճ ժամանակում կարողանում են շերամապահությունը կրկին վերականգնել: Քանի փոքր ձվերի այսպիսի հետադադարությունը փոքրիկ տնտեսութայունների ույժերից վեր է, դրա համար ել հան հատուկ հիմնարկութայուններ, փորտեղ կատարում են այդ քննութայունը և ստանում առողջ ձվեր կամ ինչպես ասում են, առողջ գրեն: Մեզ մոտ պետական որենքներով արգելվում է չքննված գրենի գործածությունը: Պետք է արթնացնել միայն այն սերմերը, փորոնց տուփերի վրա կա պետական կնիք:

Ֆլաուրիան նույնպես բավական փառնափոր հիվանդութայուն է: Այդ հիվանդութայունը յերևան է գալիս փորդի վերջին հասակում և ցախ բարձրանալիս: Հիվանդ փորդը կորցնում է ախորժակը և դադարում է ուտելուց. նրա ծերերը սկսում է փափկել. այդպիսի փորդը դանդաղ շարժումներով քաշվում է դարակների յեղրները և կամ բարձրանում է ցախը և այստեղ մեռնում: Մեռած փորդը փափկում է և փտելով սեանում և սկսում դարչանոտութայուն տարածել: Ֆլաուրիան չափազանց վարակիչ է. հաճախ 24 ժամվա ընթացքում ամբողջ շերամատան փորդերը վարակվում, մեռնում են:

Հիվանդութայան տարածմանը խիստ նպաստում են շերամատան վատ ողը, փոշոտ, թրջված և տաքացած տերևները և մանափանդ փորդերի խտութայունը: Այս իսկ պատճառով հենց փոքր Ֆլաուրիայի նշաններ յերևան, պետք է անմիջապես հիվանդներին հեռացնել, փոխնչացնել այրելով՝ կամ հողի մեջ թաղելով, առողջներին նոսրացնել, շերամատան ողը մաքուր պահել 12—24 ժամ խուսափել

վերակրելուց. կերակրելու դեպքում ել պիտի տալ վոչ թե թարմ, այլ մոտ մի որ առաջ քաղած տերևներ, փորոնք փորոջ չափով չորացած են լինում: Այդ խնամքը պիտի շարունակել այնքան, մինչև փոքր նրանք ցախ բարձրանան:

Բացի այս բոլորից, պետք է առհասարակ շերամապահները իրար շերամատուն չհաճախեն: Այն շերամատունը, փորտեղ յերևացել է Ֆլաուրիա հիվանդութայունը, պիտի քլոր դադով ախտահանել և 3—4 տարի շարունակ այնտեղ չպիտի շերամ պահել, փորովհետև հիվանդութայան միկրոթները սովորաբար 2—3 տարի իրենց վարակը տարածելու ընդունակութայունը չեն կորցնում:

Ռեդնացավ կամ կրաարիա հիվանդութայունն առհասարակ առաջ է գալիս շերամատան ողի ուժեղ հոսանքից: Հիվանդ փորդն սխորժակը չի կորցնում, շարունակում է ուտել և յերբեմն նույնիսկ պատրաստում է բոժոժ: Հաճախ այդպիսի բոժոժների ծայրերը սև գույն են ունենում, փորովհետև հիվանդ փորդը մեռնում է բոժոժի մեջ և ապա կազմալուծվելով կեղտոտում բոժոժը: Ռեդնացավն այնքան էլ սուր վարակիչ բնույթ չունի, բայց յերևան յեկած դեպքում անմիջապես պետք է գատել հիվանդներին և փոխնչացնել այրելով կամ թաղելով:

Կրախս կամ մուսկարսին կոչվող հիվանդութայան ժամանակ փորդը մեռնում է, քարի պես պնդանում և հաճախ կրի գույն ընդունում: Այս հիվանդութայունը վարակվում է փորդն իր կյանքի բոլոր շրջաններում, յեթե վարակվում է հասունացած ժամանակ՝ կարող է բոժոժ հյուսել, բայց այդ դեպքում մեռնում է բոժոժի մեջ և դարձյալ քարի պես պնդանում: Կրախտով փորդերը վարակվում են տերևի միջոցով, փորի վրա լինում են կրախտի միկրոթները: Կրախտի տարածման առաջն առնելու համար լավ կլինի ամեն որ շերամատանը այրել մի թեյի գդալ ծծումը:

Օճմբային գազը վրաս չհասցնելով վորդերին՝ ախա առաւել առնում ե ողբ և տերևները և դրանով ապահովում վորդերին: այդ հիվանդութիւնից:

Պետք ե ասել, վոր շերամի հիվանդութիւններն առհասարակ անբուժելի յեն. դրա համար ել նրանց յերևան գալու դեպքում պետք ե ձեռք առնել միայն նախազգուշական միջոցներ և այդպիսով առողջներին ազատել վարակումից:

Շ Ե Ր Ա Մ Ի Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ը

Շերամի հայրենիքը Չինաստանն ե: Այստեղ հազարավոր տարիներ առաջ չինացիներն ընտանեցնելով նրան՝ ոգտվել են նրա բոժոժներից՝ պատրաստելով նրանից նախ մետաքսե թել և ապա թանկարժեք գործվածքներ: Գարերի ընթացքում նրանք այդ գործվածքները ծովով ու ցամաքով արտահանել են գանազան յերկրներ և վաճառել բարձր գներով: Շերամապահութիւնը յերկար ժամանակ չինացիների համար յեկամտի մեծ աղբյուր եր, դրա համար ել չինական որենքներով խիստ կերպով արդելված եր շերամապահութիւն գազանիքը սոյորեցնել ոտար յերկրացիներին: Որենքը խախտոյներին անմիջապես յենթարկում եյին մահապատժի:

Սակայն չինացիներից մետաքսե գործվածքներ դնող յերկրները ձգտում եյին ամեն կերպ ձեռք բերել այդ դաղտնիքը: Այդ ձգտումը շատ ուժեղ եր մանավանդ հին հռոմայեցիների մեջ, վորոնք մետաքսե գործվածքների համար վոչինչ չեյին խնայում: Բայց ի՛նչպես, վերտեղից կարող եյին նրանք ձեռք բերել շերամը և ի՛նչպես պիտի ստանային նրանից մետաքսը:

Հնարը գտնվում ե: Մեզնից մոտավորապես 1300 տարի առաջ յերկու վարդապետներ, վորոնք յերկար ժամանակ ապրել եյին Չինաստանում և կարողացել եյին այնտեղ լավ ծանոթանալ շերամապահութիւն հետ, հանձն են առնում գնալ Չինաստան և բերել այնտեղից շերամի ձվեր: Վարդապետները մեծ դժվարութիւններ հաղթահարելով՝ կարողանում են տեղ հասնել և ձեռք բերել անհրաժեշտ քանակութիւնը շերամի ձվեր: Բայց այդքանից դեռ բավական չեր: Հարկավոր եր այդ ձվերը գուրս հանել Չինաստանի սահմաններից: Մի բան, վոր կապված եր շատ մեծ վտանգի հետ, վորովհետև յեթե սահմանապահ չինացիները գտնեյին նրանց մոտ շերամի ձվեր, նրանց անմիջապես կարող եյին սպանել:

Վարդապետները գիմում են խորամանկ միջոցներանք պատրաստում են իրենց համար բամբուկից ձեռնափայտեր և լցնում նրանց մեջ գտնվող դատարկ տարածութիւնները շերամի ձվերով: Ահա այս ձեով անվտանգ կերպով նրանք անցնում են չինական սահմանը և ազատ մեծ դժվարութիւններով վերադառնում Կոստանդինուպոլիս քաղաքը: Այստեղ մեծ պատվով ընդունում ե նրանց այն ժամանակվա Հռոմեյական կայսր Հուստենիանոսը և շերամապահութիւնը պարագելու համար իր պալատում տալիս ե նրանց ամեն տեսակի հարմարութիւններ:

Չինաստանից տեղափոխված շերամի ձվերից գուրս են գալիս առաջին շերամները և ձվեր ածում: Այս ձվերից ել գուրս են գալիս նոր շերամներ և այդպիսով մի քանի տարվա ընթացքում շերամների թիվը գնալով շատանում ե: Իրանից հետո կայսրը պալատում պատրաստել ե տալիս մի փոքրիկ գործարան, վորտեղ վարդապետները պալատական կանանց հետ միասին սկսում են

շերամի բոժոժներէյ թել ստանալ և գործվածքներ պատ-
րաստել:

Այդպիսով հիմք է դրվում Յեվրոպայում շերամա-
պահութեան: Այնուհետև շերամապահութեանը տարած-
վում է Իտալիայում և Ֆրանսիայում, ապա մուտք է գոր-
ծում և այլ յերկրներ, ի միջի այլոց նաև Անգրիոյի: Այս բոլոր յերկրներում դարերի ընթացքում իրար հաջոր-
դող անթիվ անհամար շերամները, բոլորն էլ իրենց ծա-
գունն են առել այն ձևերից, վոր մեր հիշած վարդապետ-
ները բամբուկից շինած իրենց ձեռնափայտերի մեջ գո-
ղունի կերպով փախցրել են Չինաստանից:

ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒՅՈՒՆ

Մետաքսագործութեան համար անհրաժեշտ թելը ստա-
նում են բոժոժներէյ: Յերը շերամը թիթեռ դառնալուց
հետո ծակում է բոժոժը, վերջինիս թելը կարավում, փը-
չանում է, դրա համար էլ լավ թել ստանալու համար
պետք է այնպես անել, վոր բոժոժը չծակվի: Բայց ինչ-
պես: Շատ պարզ ձևով: Պետք է բոժոժի մեջ գտնված
հարմնյակին մեռցնել: Այդպես էլ անում են: Բոժոժներն
ածում են յեռացող ջրի մեջ և վորոշ ժամանակ պահում
այնտեղ, իսկ մեծ գործարաններում բոժոժները յենթա-
կում են կամ տաք զոլորշիների և կամ չոր ու տաքացրած
ողի ազդեցութեան: Յերկու դեպքում էլ հարմնյակները
մեռնում են բոժոժների մեջ:

Այնուհետև այդպիսի բոժոժներէյ թել ստանալու հա-
մար բոժոժներն ածում են տաք ջրի մեջ. այստեղ թե-
լերը միմյանց հետ միացնող սոսնձանման նյութը լուծ-
վում է և թելերը սկսում են անջատվել մեկը մյուսից:
Այդ ժամանակ գտնում են թելերի ծայրերը և վերջին-

ներս քաշելով՝ սկսում են թելը փաթաթել կոճի վրա: Սա-
կայն բոժոժների թելերը խիստ բարակ են, նրանց մեկ-մեկ
քաշելը կապված է մեծ դժվարութեանների հետ, դրա հա-
մար էլ չորս կամ հինգ հատ թել միասին են քաշում և
նրանց կապուկն անց կացնելով ապակու կամ լավ հղը-
ված մետաղի մեջ բաց արած անցքերով՝ փաթաթում են
թմբուկի և կամ անվի վրա, վորոնք պտտվում են իրենց
առանցքի շուրջը:

Այդ գործողութեան ընթացքում բոժոժները գանգում
են, իհարկե, տաք ջրի մեջ: Արևելքում, նույնպես և Յեվ-
րոպայի մի քանի յերկրներում թել քաշելու մեքենաներն
այնքան պարզ են, վոր ամեն մի յերեխա կարող է նրանց
վրա աշխատել, բայց դրանց հետ միասին շատ անգերում
գործ են անում և խիստ կատարելագործված բարդ մե-
քենաներ:

Թելը քաշելուց և թմբուկների ու անիվների վրա
փաթաթելուց հետո սկսում են թելը յենթարկել գործա-
րանային մշակման: Ամենից առաջ անհրաժեշտ է թելը
վերջնականապես մաքրել նրա վրա նստած սոսնձանման
նյութից: Տաք ջրի մեջ յեղած ժամանակ նա լավ դեռ չեք
մաքրվել: Դրա համար թելը յեփում են յեռացող ջրի մեջ
դրանից հետո թելը, ճիշտ է, մաքրվում է, բայց վոչ այն-
պես, ինչպես վոր պետք է: Լավ մաքրելու համար թելը
յենթարկում են վորոշ թթուների ազդեցութեան: Սակայն
կա և մի այլ միջոց, վոր բավական տարածված է և կոչ-
վում է ինֆնազսումն:

Ինքնագոտման միջոցով թելը մաքրելու համար կեղ-
տոտ կամ անմաքուր թելերն ածում են սաղնաջրով լըց-
ված մեծ տաշտերի կամ ավազանների մեջ և պինդ ծած-
կում: Այդտեղ տեղի յե ունենում մի խմորման գործո-
ղութեան, վորի հետևանքով անմաքրութեանների մեծ

մասը հեռանում է թելերից: Տաշակերի և ալագանների մեջ
թելերը պահում են մի քանի շարաթ: Իրանից հետո թե-
լերը կատարելապես մաքրելու համար յենթարկում են և
մի քանի այլ գործողութայունների: Վերջը ստացվում է
թանգարժեք թել:

Այսպես ստացված թելերը թեպետ բոլորովին մաքր-
ված են լինում, բայց այնքան են խճճված լինում մի-
նյանց հետ, վոր հասարակ միջոցներով լանհնարին և նը-
րանց բաց անել: Իրա համար կան հատուկ և վերին աս-
տիճանի բարդ ու սրամիտ կաղմություն ունեցող մեքե-
նաներ, վորոնք շատ հեշտ կերպով բաց են անում թելե-
րի հանգույցները:

Թելերը բացելուց և կծկելուց հետո ամեն բան պատ-
տաստ է համարվում. այժմ կարելի չե արդեն այդ թելե-
րից գործվածքներ պատրաստել:

Գործվածքները պատրաստում են թե պարզ անայնա-
գործական յեղանակներով՝ հասարակ գործիքների միջոցով
և թե գործարաններում՝ բարդ մեքենաներով:

Մետաքսի գործվածքները շատ պինդ են և դիմանում
են բավական յերկար ժամանակ: Սակայն պետք է ասենք,
վոր կապիտալիստական յերկրներում գործարանատերերը
շատ փող վաստակելու համար յերբեմն գիմում են կեդ-
ժիքների. թելերը մաքրելու ժամանակ նրանք թելերի վրա
ածում են զանազան տեսակի մետաղային աղերի լուծույթ-
ներ, վորոնք ծծվելով թելերի մեջ՝ նրանց փայլ և գրավիչ
տեսք են հաղորդում, բայց և բավական ծանրացնում են
նրանց: Այդպիսի թելերից պատրաստված գործվածքները
թեպետ և գեղեցիկ են, բայց շատ չեն դիմանում և հեշ-
տությամբ փչանում, պատռվում են:

Թ Թ Ե Ն Ի

Թթենիները լինում են սև և սպիտակ: Ծանոթանանք
նրանց հետ առանձին-առանձին:

Սև թթենու հայրենիքը համարվում է հարավ-արև-
մույան Ասիան և Պարսկաստանը, բայց այժմ տարածված
է Յեվրոպայի հարավային մասի բոլոր յերկրներում: Նրա
տերևները մեծ են և կոշտ, պտուղները խոշոր, հյութալի
և թթվաշքողցրահամ: Այս պտուղները սկզբում կանաչ
են լինում, ապա կարմրում են և վերջն ել սևանում: Ծա-
ռը հասնում է 6-ից մինչև 10 մետր բարձրության:

Սպիտակ թթենու հայրենիքը Չինաստանն է, վորտեղ
մշակվում է նա ամենահին ժամանակներից սկսած: Յեվ-
րոպա բերվել է տասներկույերորդ դարում, բայց այժմ
սև թթենու նման տարածված է Յեվրոպայի հարավային
մասի բոլոր յերկրներում: Նրա տերևները նուրբ են ու
քնքույշ և ունեն զանազան ձևեր, բայց չնայած իրենց
տարբեր ձևերին, բոլոր տերևներն ել ունեն ատամնավոր
յեզրեր: Պտուղները սկզբում կանաչ են լինում, բայց հե-
տո հեռացնեալ սպիտակում են և ստանում փոքր ինչ դեղ-
նավուն յերանգ: Վորովհետև սպիտակ թթենու տերևները
ավելի նուրբ են, և ավելի լավ կեր են համարվում շե-
րամների համար, քան սև թթենու տերևները, դրա հա-
մար ել շերամապահությամբ պարապող յերկրներում թթե-
նու այդ տեսակն ավելի շատ է մշակվում:

Թթենիները բազմացնում են յերեք յեղանակով՝ սեր-
մերով, վրստերով և անդալիս անելով:

Սերմ ստանալու համար հավաքում են յերիտասարդ,
ուժեղ և փայլի թթենու լավ հասած պտուղները, ամում
մի տաշախ մեջ և պահում 1—2 օր. և այդ նրա համար,
վոր սերմերը պատող հյութալի մասերը փափկեն: Այնու-

հետև նրանց վրա շուր են ածում և ձեռքով արորում: Այդ ժամանակ սերմերից բաժանված հյուսթալի մասերը և խակ սերմերը բարձրանում են ջրի յերեսը, իսկ հասած և լավ սերմերը նստում են ջրի տակը: Ջրի յերեսին լողացող մասերը դեն են ածում և նորից արորում սերմերը:

Այդ գործողութունը մի քանի անգամ կրկնելուց հետո, վերջը ստանում են մաքուր և լավ հատկութուն ունեցող սերմեր: Ստացված սերմերը ածում են մի քսակի մեջ և պահում չոր և մաքուր ող ունեցող մի տեղում մինչև առաջիկա գարունը: Թթենու սերմերը մի տարուց ավել պահել չի կարելի, վորովհետև նրանք մի տարուց հետո կորցնում են իրենց ծլելու ընդունակութունը:

Սերմերը ցանում են ապրիլ ամսվա ընթացքում և կամ մայիսի սկզբներին՝ նայած տեղական կլիմայական պայմաններին: Ցանելուց առաջ հողը հերկում, փխրացնում են և առատ կերպով պարարտացնում գոմաղբով, ապա մարզեր շինում և ցանում կամ շարքերով և կամ շող տալով: Ցանքը կատարելուց հետո շուտ-շուտ ջրում են, վոր հողը խոնավ մնա: Սովորաբար 8—10 օրից հետո սերմերը ծլում են: Յերը ծիլերն արձակում են 4—5 տերև, նրանց նոսրացնում են այնպես, վոր նրանց արանքներում մնա մոտ 5-ական սանտիմետր տարածութուններ: Հետևյալ գարնանը նման տունկերը կարելի յե սածիլ անել, անկելով նրանց լավ մշակած և պարարտացրած հողում միմյանցից մոտ կես մետր հեռավորության վրա: Յերրորդ տարին այդ տունկերը կարելի յե արդեն տեղափոխել իրենց մշտական վայրը:

Վոստերով բազմացնելու համար դեկտեմբերին կրտրում են դալար վոստերից 40—50 սանտիմետր յերկարությամբ մասեր, փոքրիկ խրձեր կապում, դնում փոսի մեջ և ծածկում հողով: Գարնանն այդ վոստերը հանում

են և տնկում նախապես պատրաստած մարզերում՝ Թաղելով հողի մեջ 20—25 սանտիմետր խորությամբ:

Անդալիս անելու համար գարնանը կտրում են թթենու բունը գետնից 40—50 սանտիմետր բարձրությամբ: Կարած բնից շուտով դուրս են գալիս նոր ընձյուղներ, վորից հետո թթենու շուրջը հողը լավ փափկեցնում, պարարտացնում են և ընձյուղները ծուելով թաղում են նրանց միջին մասերը հողի մեջ և ամրացնում փայտե կարթերով: Ընձյուղների ծայրերի մոտ տնկում են փայտե հենարաններ, վորպեսզի նրանց ազատ ծայրերը ջցված լինեն դեպի վեր: Հողի մեջ գանվող մասերից շուտով դուրս են գալիս արմատներ: Հետևյալ տարին արմատներ արձակած այդ ընձյուղները կարելի յե կարել մայր բույսից և ապա տեղափոխել իրենց մշտական տեղերը:

Թթենիները տնկում են կամ արտերի և ճանապարհների յեզրերին և կամ հատուկ տարածութունների վրա: Վերջին դեպքում ստանում են թթաստաններ:

Թթենիներն աղնվացնելու համար կատարում են պատվաստ: Երամապահները պիտի ունենան թե վայրի և թե պատվաստած թթենիներ: Վայրի թթենու տերևներով կերակրում են վորդերին փոքր հասակում, նրանց կյանքի առաջին և յերկրորդ շրջանում, իսկ մնացած ժամանակները կարելի յե կերակրել պատվաստած թթենիների տերևներով: Պատվաստած թթենու տերևներն ավելի քիչ սննդարար են, քան վայրի թթենու տերևները, բայց վաղովհետև պատվաստած թթենին սոստ տերևներ և տալիս, դրա համար ել թթենիների մեծ մասը սովորաբար պետք և պատվաստել:

Պատվաստ կատարում են զանազան յեղանակներով: Ամենատարածված յեղանակն աչքերով պատվաստելն և: Այս յեղանակով պատվաստելու համար մարտ ամսում ազ-

հետև նրանց վրա շուր են ածում և ձեռքով արտորում: Այդ ժամանակ սերմերից բաժանված հյուսթալի մասերը և խակ սերմերը բարձրանում են ջրի յերեսը, իսկ հասած և լավ սերմերը նստում են ջրի տակը: Զրի յերեսին լողացող մասերը դեն են ածում և նորից արորում սերմերը:

Այդ գործողութունը մի քանի անգամ կրկնելուց հետո, վերջը ստանում են մաքուր և լավ հատկութուն ունեցող սերմեր: Ստացված սերմերը ածում են մի քսակի մեջ և պահում չոր և մաքուր ող ունեցող մի տեղում մինչև առաջիկա գարունը: Թթենու սերմերը մի տարուց ավել պահել չի կարելի, վորովհետև նրանք մի տարուց հետո կորցնում են իրենց ծլելու ընդունակութունը:

Սերմերը ցանում են ապրիլ ամսվա ընթացքում և կամ մայիսի սկզբներին՝ նայած տեղական կլիմայական պայմաններին: Ցանելուց առաջ հողը հերկում, փխրացնում են և առատ կերպով պարարտացնում գոմաղբով, ապա մարգեր շինում և ցանում կամ շարքերով և կամ շաղ տալով: Ցանքը կատարելուց հետո շուտ-շուտ ջրում են, վոր հողը խոնավ մնա: Սովորաբար 8—10 որից հետո սերմերը ծլում են: Յերը ծիլերն արձակում են 4—5 անբե, նրանց նոսրացնում են ախպես, վոր նրանց արանքներում մնա մոտ 5-ական սանտիմետր տարածութուններ: Հետեյալ գարնանը նման առնկերը կարելի յե սածիլ անել, անկելով նրանց լավ մշակած և պարարտացրած հողում միմյանցից մոտ կես մետր հեռավորության վրա: Յերրորդ տարին այդ առնկերը կարելի յե արդեն տեղափոխել իրենց մշտական վայրը:

Վոստերով բազմացնելու համար ղեկտեմբերին կրտրում են դալար վոստերից 40—50 սանտիմետր յերկարությամբ մասեր, փոքրիկ խրձեր կապում, դնում փոսի մեջ և ծածկում հողով: Գարնանն այդ վոստերը հանում

են և անկում նախապես պատրաստած մարգերում՝ թաղելով հողի մեջ 20—25 սանտիմետր խորությամբ:

Անդալիս անելու համար գարնանը կտրում են թթենու բունը գետնից 40—50 սանտիմետր բարձրությամբ: Կարած բնից շուտով դուրս են գալիս նոր ընձյուղներ, վորից հետո թթենու շուրջը հողը լավ փափկեցնում, պարարտացնում են և ընձյուղները ծռելով թաղում են նրանց միջին մասերը հողի մեջ և ամրացնում փայտե կարթերով: Ընձյուղների ծայրերի մոտ անկում են փայտե հենարաններ, վորպեսզի նրանց ազատ ծայրերը չցցված լինեն դեպի վեր: Հողի մեջ գտնվող մասերից շուտով դուրս են գալիս արմատներ: Հետեյալ տարին արմատներ արձակած այդ ընձյուղները կարելի յե կտրել մայր բույսից և ապա տեղափոխել իրենց մշտական տեղերը:

Թթենիները անկում են կամ արտերի և ճանապարհների յեզրերին և կամ հատուկ տարածութունների վրա: Վերջին գեպքում ստանում են թթաստաններ:

Թթենիներն աղնվացնելու համար կատարում են պատվաստ: Շերամապահները պիտի ունենան թե վայրի և թե պատվաստած թթենիներ: Վայրի թթենու տերևներով կերակրում են վորդերին վոքը հասակում, նրանց կյանքի առաջին և յերկրորդ շրջանում, իսկ մնացած ժամանակները կարելի յե կերակրել պատվաստած թթենիների տերևներով: Պատվաստած թթենու տերևներն ավելի քիչ աննդարար են, քան վայրի թթենու տերևները, բայց վորովհետև պատվաստած թթենին առատ տերևներ և տալիս, դրա համար էլ թթենիների մեծ մասը սովորաբար պեպ և պատվաստել:

Պատվաստ կատարում են գանազան յեղանակներով: Ամենատարածված յեղանակն աչքերով պատվաստելն է: Այս յեղանակով պատվաստելու համար մարտ ամսում ազ-

նիվ ծառից կտրում են կես մետր յերկարությամբ ճյուղեր և պահում նկուղներում՝ չոր ավազի մեջ թաղած: Այս ճյուղերը մինչև մայիս մնում են առանց բողբոջելու: Մայիսի սկզբներին սուր դանակով կտրում են նրանցից աչքերը կամ բողբոջները վահանի ձևով և այնպես, վոր նրանց հետ վերցվեն և աչքերի վոստարմատները, այսինքն աչքերը ներսի կողմից վոստի բնափայտի հետ միադնոյ մասերը: Այնուհետև պատվաստելիք ծառի կեղևի վրա պնում են 1 տառի ձև ունեցող ճեղքեր և բացելով ճեղքերի յեզրերը պնում են աչքերը ճեղքերի մեջ և ապա պինդ կապում թթենու կեղևով, թելով և կամ ուֆֆիով: Տասն և հինգ որից հետո յեթե պատվաստը բռնում և և աչքը բողբոջում, կապը պիտի քիչ թուլացնել, վոր նա ապատ կերպով կարողանա աճել, դորդանալ: Մի ծառի վրա կարելի չե կատարել մի քանի այդպիսի պատվաստներ և յեթե նրանք բոլորն ել բռնեն, պետք Ե պահել ամենաուժեղը, իսկ մնացածները վոչնչացնել:

Պատվաստ կարելի չե անել և ազնիվ ծառի վոստը վայրի ծառի վոստի վրա ամրացնելով, դրա համար պետք Ե շեղ կերպով կտրել ազնիվ ծառից մի դալար վոստ և ապա բնարելով վայրի ծառի վրա մի համապատասխան վոստ՝ կտրել նույն ձևով և վրան դնելով կապել: Կապելու ժամանակ պիտի այնպես անել, վոր մեկի կեղևը նրստի մյուսի կեղևի և բնափայտն ել մյուսի բնափայտի վրա:

Թթենուց առատ տերև ստանալու համար նրան սոփորաբար ետում են: Առաջին տարին ետում են նրա գագաթը մոտ մեկ և կես մետր բարձրությամբ, վորից հետո թթենին տալիս Ե նոր ընձյուղներ: Այս ընձյուղներից պահում են միայն գագաթի մոտ յեղածները, իսկ մյուսները վոչնչացնում են:

Յերկրորդ տարին գագաթի մոտ յեղած ճյուղերից յերկուսի կամ յերեքի ծայրերը կտրում են 10—15 սան-

տիմետր բարձրությամբ, իսկ մնացած ճյուղերը բոլորովին վոչնչացնում: Յերրորդ տարին նախորդ տարվա կտրված ճյուղերի վրա թողնում են դարձյալ 10—15 սանտիմետր յերկարությամբ մասեր և վոչնչացնում մյուսները: Այսպիսով տարեց տարի ծառի գլուխը մեծացնում, յայնացնում են:

Թթենիները պահանջում են հոգատար խնամք: Նրանց ամենաառաքածված հիվանդությունն արմատի փտումն Ե: Այս հիվանդությունը վարակիչ Ե և տարածվում Ե արմատների միջոցով: Յերր ծառերը խիտ են լինում, այդ հիվանդությունն արագ կերպով տարածվում Ե և մեծ ափերածություն կատարում նրանց շարքերում: Հիվանդության պատճառ հանդիսանում Ե մի տեսակի սուճիկ, վոր հաստաավելով արմատների վրա, ծծում Ե նրանց հյութերը և մեռցնում: Իրան մեծ մասամբ զսն են դնում մամուղ թթենիները, վորոնց արմատները թույլ լինելու պատճառով չեն կարողանում դիմադրել հիվանդության:

Հիվանդությունը անբուժելի չե, դրա համար ել պետք Ե ձեռք առնել միայն նախադասական միջոցներ: Այդպիսի միջոցներ հանդիսանում են նախ ծառի տակի հողը լավ մշակելը և պարարտացնելը, վորոնց շնորհիվ ծառը ուժեղանում Ե և կարողանում Ե դիմադրել հիվանդության, ապա հիվանդությունը նկատելուն պես պետք Ե հիվանդ ծառերն արմատահան շանել և անմիջապես այրել և յերրորդ՝ թթենիների տակը շատ չպիտի ջրել, վորովհետև առատ խոնավությունը նպաստում Ե այդ հիվանդության առաջացման և տարածման:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆԴՐԿՈՎ-
ԿԱՍՈՒՄ

Շերամապահության զարգացման համար ամենից առաջ պետք է ուժեղացնել կերի բազան, այսինքն պիտի ընդարձակել թթենիների տնկարանների տարածությունը: Այդ ուղղությամբ Անդրկովկասի զանազան վայրերում կատարվել և կատարվում են մի շարք լուրջ ձեռնարկումներ: Թփավոր թթենիների գրաված տարածությունը հետզհետե շատացնելով՝ 1933 թվի վերջին պիտի հասցնեն 19900 հեկտարի՝ 393 միլիոն թթենիներով, վորոնք պիտի տան շերամապահության 361 հազար տոնն տերևաբերը:

Բացի թփավոր թթենիներից, մինչև 1933 թվի վերջը պետք է տեղի ունենան և թթենիների մարգագետնային ցանքեր 434 հեկտար տարածության վրա: Ամեն մի հեկտարից շահագործման առաջին տարին պիտի ստացվի մոտ 18 տոնն, յերկրորդ տարին՝ 28 և յերրորդ տարին՝ 34 տոնն տերև: Այս հաշվով 1933 թվի վերջին թթենիների մարգագետնային ցանքերից պիտի ստացվի 12 հազար տոնն տերև:

Յեթե այս բոլորի վրա ավելացնենք և այն, վոր շերամապահները պիտի ստանան գոյություն ունեցող բարձրաբուն ծառերից, այդ դեպքում տերևաբերքի քանակությունը 1933 թվի վերջին կհասնի մոտավորապես 700 հազար տոննի, այսինքն մի քանակություն, վոր կարող է կերակրել մոտ 600 հազար տուփ գրենից կամ ձվերից առաջացող թրթուռների:

Կերի բազայի զարգացման հետ միասին հոգ են տանում և լավորակ գրենի քանակության շատացման մասին:

Այդպիսի գրեն պատրաստելու համար իրար յետևից կառուցվում են նոր գործարաններ: Մինչև 1933 թվի վերջը Անդրկովկասի զանազան վայրերում պիտի կառուցվեն 19 նոր գրենի գործարաններ, վորոնք պիտի տան 570 հազար տուփ արտադրանք: Հին գործարանների հետ միասին, այդ թվին Անդրկովկասի գործարանները պիտի տան 782 հազար տուփ գրեն, մինչդեռ պլանով մեր շերամապահության համար անհրաժեշտ և ունենալ ամենաշատը 600 հազար տուփ: Նշանակում է, մեր գործարանները վոչ միայն լուրի կերպով կկարողանան բավարարել մեր պահանջները, այլ և հնարավորություն կտան մեզ գրեն արտահանելու և հարևան յերկրները:

Գրեն պատրաստելուց հետո պետք է հոգ տանել և գրենը նպատակահարմար ձևով արթնացնելու մասին: Այս ուղղությամբ ևս բավական մեծ աշխատանք է կատարվում: Համաձայն համապատասխան մարմինների վորոշման, մինչև 1933 թվի վերջը շերամապահներին տրվող ամբողջ գրենը պետք է նախապես արթնացրած լինի, գրա համար էլ բոլոր շերամապահական կենտրոններում շինվում են ինկուբատորներ, այսինքն այնպիսի հարմարություններ, վորոնց միջոցով արթնացվում են շերամի ձվերը:

Բացի այս բոլորից, Անդրկովկասյան հանրապետություններում կառուցված են 230 նոր չորանոցներ, վորտեղ աշխատանքները նորագույն կատարելագործված ձևով տարվելու պատճառով պիտի տան մետաքսագործության համար ավելի լավորակ բոժոժներ: Այդ նոր չորանոցները գոյություն ունեցածների հետ միասին հնարավորություն կունենան շերամապահության ամբողջ արտադրանքը չորացման յնթարկելու:

Այնուհետև մեծ ուշադրություն է զարձնվում նաև շերամապահների կազրեր պատրաստելու վրա: Դրա հա-

մար բացվում են հատուկ տեխնիկումներ և կազմակերպվում են ժամանակավոր կուրսեր այն հաշվով, Վոր յուրաքանչյուր տարի պատրաստվեն մոտ 500 վերակալ շերամապահներ:

Այդպես գրենի վորակը բարձրացնելով, նրա արժեքային յեղանակը կատարելագործելով և ապա թրթուռների կերակրումը և խնամքը լավացնելով՝ կարելի յե զգալի կերպով բարձրացնել բերքատվությունը: Յեթե 1928—29 թվին ամեն մի տուփից ստացվել է 28,3 կիրգրամ բոժոժ, ապա վերոհիշյալ միջոցառումները գործադրելով՝ 1933 թվի վերջին կարելի յե ստանալ 51,1 կիրգրամ, ասել է, 80 տոկոսով ավելի: Շնորհիվ այս բոլոր հանգամանքների, Անդրկովկասի շերամապահությունը 1933 թվին կտա յերկրին մոտ 30 հազար տոնն խոնավ բոժոժ. մի քանակություն, Վոր մոտ 5 անգամով ավելի յե 1928—29 թվի շերամապահության արտադրանքից:

ՇԵՐԱՍԱՊԱՀՈՒՅՅԱՆ ՀՈՒՍՈՒՅՅԻ ՄՇԱԿՈՒՍԸ

Բացի հումուլթի քանակությունն ավելացնելուց, մեծ ուշադրություն է դարձվում նաև այդ հումուլթը տեղում մշակելու վրա: Առաջները մետաքս կարժելու գործարաններ յեղել են գլխավորապես Ազրբեջանում: Վրաստանում յեղել են միայն շորս գործարաններ, Վորոնցից պատերազմի առաջին տարին գործելիս է յեղել միայն մեկը 52 թասով, իսկ Հայաստանում չի յեղել և Վոչ մի գործարան: Յեղած բոլոր գործարաններն էլ ունեցել են խիստ հնացած սարքավորումն: Ուրեմն, Մորհրդային խշխանությունը մետաքսի արդյունաբերությունը տեղում զարգացնելու համար պետք է մի կողմից փոխեր գոյություն ունեցող

գործարանների սարքավորումը և մյուս կողմից էլ պիտի կառուցեր նոր գործարաններ:

Այդպես էլ անում է նա:

1926 թվին Վրաստանում կառուցվում են մետաքս կարժելու յերեք նոր գործարաններ՝ 172 թասերով, Վորոնց սարքավորումը ստացված է Իտալիայից: Այնուհետև կառուցվում են Նուխու խոշոր գործարանը 600 թասերով, Ստեփանակերտի գործարանը 96 թասերով և Յերևանինը՝ 32 թասերով: Բայց զրանով ավարտված չի համարվում գործարանային շինարարությունը: Նախագծված է Անդրկովկասում մինչև 1933 թվի վերջը թասերի թիվը հասցնել 2432-ի, Վորից Վրաստանում պիտի լինի 652 թաս, Հայաստանում՝ 196 և Ազրբեջանում՝ 1581:

Բացի մետաքս կարժելուց, ուժեղ թափով զարգանում է նաև թել վորտելու գործը: Հեացհետև ավելանում են իլիկների թիվը. շուտով նրանց թիվը Անդրկովկասում պիտի հասնի 24000-ի, Վորից Ազրբեջանում 10000, Վրաստանում 14000: Իլիկների թվի շատացումն այնպիսի բնթացք պիտի ունենա, Վոր կարողանան բավարարել շերամապահության կարիքները տեղում:

Նման զարգացում նկատվում է և մետաքսագործության մեջ: Առաջներն այդ արհեստը Անդրկովկասում ուներ անայնպեղծական բնույթ: Ազրբեջանի ու Վրաստանի մի շարք բայաններում կային բավական թվով մարդիկ Վորոնց միտկ կամ գլխավոր զբաղմունքը մետաքսաթելից գործվածքներ պատրաստելն էր: Նրանք պատրաստում էին մեծ մասամբ թաշկինակներ, շարֆեր, զորզեր՝ միագույն կամ նախշավոր և վաճառքի հանում Անդրկովկասի զանազան մասերում: Գործվածքները պատրաստում էին նրանք կամ ձեռքով և կամ հասարակ գործիքներով: Մետաքսագործությունը մեզ մոտ այդ գրության մեջ մնում

ե մինչև 1922 թիվը, բայց զբանից հետո նրա մեջ առաջանում է մի խոշոր բեկումն:

Այդ թվականին Թիֆլիզում հիմք է դրվում մեխանիկական մետաքսագործության, առաջին անգամ գործի յեն դրվում 20 դազգյահներ, վորոնց թիվն արագ կերպով սկսում է աճել: 1929 թվին Թիֆլիսում աշխատում են արդեն յերկու գործարաններ մոտ 100 դազգյահներով: 1931 թվի հունվարին դազգյահների թիվը հասնում է 200-ի, իսկ նույն թվի վերջին՝ 300-ի:

Այնուհետև Գուլթախում հիմք է դրվում մետաքսամշակման մի խոշոր կոմբինատի, վորտեղ գործվածքային բաժինը պիտի ունենա 700 դազգյահ:

Այսպիսով մոտ տասը տարվա ընթացքում դազգյահների թիվը 20-ից հասնելու յե 1000-ի: Մետաքսագործությունն ուժեղ կերպով զարգանում է նաև Ադրբեջանում. այստեղ մինչև 1933 թվի վերջը աշխատող դազգյահների թիվը հասնելու յե 500-ի:

Շնորհիվ դազգյահների թվի ավելացման և նրանց կատարելագործության, մետաքսե գործվածքների արտադրանքը զարգանում է չափազանց ուժեղ կերպով:

1922 թվին վրաստանում պատրաստվել է ընդամենը 12.600 մետր մետաքսե գործվածքներ, իսկ 1933 թվին պիտի պատրաստվի 3.300.000 մետր: Նշանակում է, մոտ 260 անգամ ավելի: Սա աճման մի այնպիսի տեմպ է, վորի մասին կապիտալիստական յերկրները յերազել անգամ չեն կարող:

ԱՆՊԵՏՔ ՆՅՈՒԹԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Շերամապահության զարգացման հետ սերտ կերպով կապվում է և մի այլ խնդիր. այդ շերամապահության ժամանակ առաջացող անպետք նյութերի ոգտագործումն է:

Նախ և առաջ շերամապահության ժամանակ ստացվում են ահագին քանակությամբ թթենու տերևազուրկ ճյուղեր: Փորձերը ցույց են տվել, վոր այդ ճյուղերի կեղևը պարունակում է իր մեջ տեքստիլ արդյունաբերության համար բավականին արժեքավոր թելեր: Բացի դրանից, հայտնագործվել է նաև այդ թելերի ստացման աժան և հեշտ միջոցները: Թթենու կեղևաթելերից, կամ ինչպես ասում են այժմ թուլթիսելլիից տեքստիլ գործարաններում պատրաստվել են բավական լավորակ գործվածքներ: Այդ հանգամանքն ի նկատի առնելով՝ Միութենական կառավարությունը թուլթիսելլիի վերաբերմամբ ընդունել է մի շորոշում, վորի համաձայն, 1931 թվի հունիսի մեկից մինչև 1932 թվի հունիսի մեկը պետք է հանձնվեն տեքստիլ գործարաններին 16000 տոնն թուլթիսելլի: 1932 թվին այդ քանակություները պիտի հասնի 50000 տոննի, իսկ 1933 թվին՝ 100000 տոննի: Այնուհետև շերամապահության զարգացման հետ միասին պիտի աճի նաև թուլթիսելլիի քանակություները:

Բացի կեղևի ոգտագործումից, փորձեր են կատարվում ոգտագործելու և ճյուղերի բնափայտը: Կատարված փորձերը ցույց են տվել, վոր այդ բնափայտից կարելի յե պատրաստել թուղթ: Նշանակում է, թղթի արդյունաբերությունը հետզհետե աճող շերամապահությունից, մոտ ապագայում կարող է ստանալ բավական առատ հումույթ:

Այդ դեռ բավական չէ. այժմ աշխատում են ոգտագործել բոժոժների մեջ մեռցրած հարսնյակները և ապա թրթուռների արտաթորությունները: Այս արտաթորությունները շերամապահական մեծ անտեսությունների մեջ հսկայական չափերի յեն հասնում և կարող են գործածվել թե իբրև անասունների կեր և թե իբրև վերին աստիճանի ոգտապար պարարտանյութ:

Ինչ վերաբերում է մեզըրած հարսնյակներին, փորձե-
մինչև վերջին ժամանակներս կամ դեն են ամփել և կամ
լավագույն դեպքում արտահանվել են արտասահման, շատ
նպատակահարմար ձևով կարող են ոգտագործվել և մեզ
մտա: Բանն այն է, վոր նրանք պարունակում են իրենց
մեջ բավական առատ քանակությամբ յուզ: Իուրս հանե-
լով այդ յուզը՝ մենք կարող ենք ոգտագործել այն մեր
ոճառի արդյունաբերության մեջ: Յեթե աչքի տալով ու-
նենանք արդյունաբերության արագ զարգացումը՝ ապա
կարող ենք ասել, վոր ոճառի արդյունաբերությունը մոտ
ապագայում բավական առատ հումույթ պիտի առանա
այդ գծով:

Հարսնյակների յուզը հանելուց հետո մնացած մասե-
րը ևս կարող են ոգտագործվել իբրև պարարտանյութ:

Նշանակում է, շերամապահական տնտեսության մեջ
փոչինչ չի կորչում: Բայց այս բոլորը լավագույն ձևով
կարելի չե իրագործել միայն այն ժամանակ, յերբ շերա-
մապահական մանր տնտեսությունները միանալով միմյանց
հետ՝ կկազմեն խոշոր տնտեսություններ:

Ճ Ա Գ Ա Ր

ՎԱՅՐԻ ՃԱԳԱՐԸ

Ճագարը վայրենի դրության մեջ ապրում է Յեպրո-
պայի հարավային մասերում՝ բլրաշատ, ավազոտ և թփա-
ռատ տեղերում: Յերեկները սովորաբար անց և կացնում
նա իր բնի մեջ, իսկ զիշերները դուրս և գալիս կերակուր
վորոնելու: Բունը շինում է նա հողի տակ՝ յերկար ճյու-
ղավոր անցքերի ձևով. նման բուն շինելու համար ունի
նա մեծ ու ուժեղ ճիրաններ, փորոնցով հեշտությամբ
քանդում է հողը: Պերակրվում է բույսերով, վորոնց մեջ
ամենից շատ սիրում է կաղամբը և շաղգամբ, բայց սի-
րով ուտում է նաև դանազան տեսակի գաշտային բույ-
սեր: Չմեռը, յերբ վերջանում է նրա սովորական կերա-
կուրը, նա ստիպված բավականանում է ծառերի կեղևնե-
րով: Կրծելով ծառերի կեղևները՝ նա փչացնում է ծա-
ռերը և զբանով ահազին ֆրաս պատճառում անտառներին
և այգիներին:

Ունի բազմաթիվ թշնամիներ՝ նրան հալածում են
աղվեսը, գայլը, գիշատիչ թռչունները, բայց, ինչ խառ-
վոր ամենից շատ հալածում է նրան մարդը, նրա լավ
մորթու և համեղ մսի համար: Չնայած իր այդ բազմա-
թիվ թշնամիներին՝ նա իր բնակած յերկրում համարվում
է ամենատարածված կենդանիներից մեկը: Թշնամիներից
պաշտպանվում է նա իր գույնով, վոր նման լինելով հողի

գուշին՝ նրան աննկատելի յե դարձնում իր շրջապատի մեջ: Բացի գուշից, թշնամիներից պաշտպանվելու համար անի նա բավական սուր զգայարաններ. առանձնապես զարգացած են նրա տեսողութունը և լսողութունը: Շնորհիվ այդ զգայարանների՝ նա շատ շուտով իմանում է թշնամիների մոտենալը և ժամանակին կարողանում է ապաստան գտնել իր անմատչելի բնում: Սակայն այս բոորը չեյին կարող նրան փրկել իսպառ վոչնչացումից, յեթե չլինեք մի հանգամանք:

Այդ հանգամանքը նրա չափազանց արագ բազմացումն է: Եզ ձագարը տարվա մեջ կարող է 6—8 անգամ ձագեր հանել, յուրաքանչյուր անգամ միջին թվով վերցրած ութ ձագ: Այդ դեռ բավական չե, ձագերն իրենք ևս շատ արագ կերպով աճում, հասունանում են և իրենց հերթին կրկին ձագեր հանում: Տաք յերկրներում նրանք յձագ են հանում իրենց կյանքի հինգերորդ ամսում, իսկ ցուրտ յերկրներում՝ ութերորդ ամսում:

Մի դիտնական հաշվելով գտել է, վոր մի գուշգ ձագարից չորս տարում կարող է առաջանալ մոտ մի միլիոն յերեք հարյուր հազար ձագար: Արագ բազմացման նպաստում է և ախ, վոր մայր ձագարը շատ հոգատար խնամք է ցույց տալիս զեպի իր ձագերը: Սրանք ծնվում են կույր և միանգամայն անոգնական վիճակում, բայց մայրը պատրաստում է նրանց համար փափուկ և տաք բուն՝ հափաքելով նրա մեջ բուրդ և սղվամազ, վոր պոկում է մեծ ատամք իր փորի տակից: Մայրը շարունակ վինում է իր ձագերի մոտ և խնամում է նրանց մեծ հոգատարությամբ: Բունը թողնում է նա միայն այն ժամանակ, յերբ պեսք է դուրս գալ կեր վորոնելու համար: Ձագերը մոր հետ մնում են մինչև նոր ձագերի աշխարհ գալը:

Բազմանալով հսկայական չափերով՝ նրանք շատ տեղերում կատարյալ չարիք են դառնում բնակչության համար:

Ավատարվալում և նոր Զերանդիալում նրանք կարճ ժամանակում այնքան են բազմացել, վոր այժմ նրանց դեմ մաքառելու համար ամեն տարի միլիոններ են ծախսում: Մարդիկ նրանց դեմ պայքարում են բազմազան յեղանակներով, որինակ, թույն են արձակում նրանց բների մեջ, պահում են նրանց վոչնչացնելու համար զանազան տեսակի դիշատիչ կենդանիներ, մետաղալարերով պատում են իրենց բանջարանոցները և այգիները, բայց չնայած այդ բոլորին, ձագարների սուր ատամները կարողանում են շարունակել իրենց ավերիչ գործունեյությունը:

Մի ժամանակ, յերբ Ֆրանսիալում ձագարները սպառնալի չափեր եյին բնդունել, հանձարեղ դիտնական Պաստյորը վորձեր է կատարել նրանց վոչնչացնելու նպատակով արհեստական կերպով խուլերա հիվանդություն տարածել նրանց մեջ: Այդ միջոցը, ճիշտ է, մեծ արդյունքներ է տվել, բայց չի կարողացել նրանց բոլորովին վոչնչացնել: Հետագայում այդ միջոցին հաճախ զլմել են և ուրիշ յերկրներում:

Այժմ տեսնենք, թե ինչու յե նա կրժում ծառերի կեղևները:

Մեր ատամները զրսից պատած են մի շատ ամուր նյութով՝ եմալով, վորի տակ գտնվում է իսկական ատամանյութը, վերջինս մի փխրուն նյութ է, վոր հեշտությամբ մաշվում, քայքայվում է: Յերբ դիտում ենք ձագարի ծնոտների սուղևի կողմում գտնվող մեծ ատամները, տեսնում ենք, վոր եմալով պատած է նրանց միայն սուղևի յերեսը, իսկ յետևի յերեսը զուրկ է միանգամայն այդ նյութից: Ատամները բանեցնելու ժամանակ մի ծնոտի

ատամների եմալը բավում է շարունակ մյուս ծնոտի կրծող ատամների ատամանյութին և նրանք բրում, մաշում. սրանից ատամները սրվում են և ստանում սուր զուրի ձև: Սրվելու հետ միասին ատամները միաժամանակ կարճանում են, ճիշտ այնպես, ինչպես վոր շուտ-շուտ սրվող դանակները մաշվում են: Բայց ճագարի ատամները չեն փոքրանում, գրա պատճառն այն է, վոր նրա այդ ատամները շարունակ աճում, մեծանում են: Յեվ յեթե ճագարը կրճելով չմաշի իր ատամները, նրանք այնքան կվեժանան, վոր նա այլևս չէր կարող բացել բերանը: Ճագարի նման կրծող կենդանիներ ևս մուկը, նապաստակը սկյուռը և այլն:

Բայց վայրի ճագարը, այդ փասակար կրծողը, վորին ամեն տեղ հալածում են, ընտանիանալով դարձել է տրնտեսական արժեք ներկայացնող մի ընտանի կենդանի:

Մանսթանանք բնառնի ճագարի սված ոլուտների հետ:

ԸՆՏԱՆԻ ՃԱԳԱՐԻ ՏՎԱԾ ՈԳՈՒՏՆԵՐԸ

Ընտանի ճագարը շափաղանց ողտակար կենդանի յե: Նախ և առաջ նա տայիս է լավ մորթի, վորի պահանջը շատ մեծ է թե մեզ մոտ և թե արտասահմանում: 1926 թվին Ֆրանսիայում մշակման է յենթարկվել 34 միլիոն ճագարի մորթի: Ճագարի մորթին գնահատվում է այնտեղ մոտ յեքեր բուրլի, բայց մշակվելուց հետո նրա արժեքը շափաղանց բարձրանում է: Բանն այն է, վոր այժմ կարողանում են աղնվոցնել այդ մորթիները և տալ նրանց թանկարժեք մորթիների տեսք. այդ գործողությունն այնպիսի կատարելության են հասցրել, վոր ամենահմուտ մորթադեաներն անգամ զժվարանում են տարբերել նման մորթիներն իսկական թանկարժեք մորթիներ:

Ինչ: Մշակման յենթարկված լավ մո ըթինեղից պատրաստան են մուշտ սլներ, գլխարկներ, ոձիքներ իսկ վատ տեսակներից պատրաստում են տաք վոտնամաններ, գորգեր և այլն: Նման նպատակների համար մշակման են յենթարկում միայն ձմեռային մորթիները, վորով հետևամառային մորթիների մազերը համեմատաբար թե կարճ են և թե նոսր: Ամառային մորթիները գործ են ածում մեծ մասամբ վերարկուների տակը գնելու համար:



Այն բոլոր մորթիները, վորոնք մեր հիշած նպատակների համար պետքական լինել չեն կարող, մաքրում են մազերից և մշակման յենթարկելուց հետո ստանում լավ վորակի կաշի: Ծեր արու ճագարների մաշկից ստանում են շատ նուրբ կաշի, վոր գործ են ածում լավ տեսակի վոտնամանների համար: Մի հատ ճագարի կաշուց կարելի յե պատրաստել մի գույգ կանացի կոշիկներ: Ճագարի կաշուց պատրաստում են նաև այլ իրեր, որինակ, պա-

յուսակներ, փողամաններ, թղթապանակներ, ձեռնոցներ
և այլն:

Մորթիներից հեռացված մագերը ի զուր չեն կորչում,
նրանցից պատրաստում են թանկարժեք իրեր՝ դլխաբե-
րների և այլ առարկաների համար:

Ճագարի մի քանի ցեղեր տալիս են առատ և բարձր
փորակի աղվամազ: Ճագարի աղվամազից պատրաստված
գործվածքները շատ տաք են և թեթև:

Նման գործվածքներից կարված հագուստները մեծ
գործածություն ունեն սպորտի և ալիադիայի մեջ մաս-
նակցություն ունեցողների շրջանում: Բացի դրանից՝ այդ-
պիսի հագուստները բժիշկների կողմից հանձնարարվում են
բեկմատիղմ և թոքերի հիվանդություն ունեցողներին:

Ճագարը համարվում է և մտատու կենդանի: Քննու-
թյունը ցույց է տվել, վոր ճագարի միսն իր մեջ շատ ա-
վելի սննդարար նյութեր է պարունակում, քան հավի, փոշ-
խաբի, խոզի, հորթի միսը: Ավելին: Հետազոտությունները
հաստատել են, վոր նա շատ ավելի դյուրամարս է, քան
փորեկ այլ տեսակի միս: Այսպես որինակ, մարդ մարսում
է յեզան մսի մեջ յեզած սպիտակուցային նյութերի միայն
62 տոկոսը, իսկ ճագարի մսի սպիտակուցային նյութերի
92 տոկոսը:

Ահա այս է պատճառը, վոր հիվանդներին և հիվան-
դությունից ապաքինվողներին հանձնարարում են ամառ
ճագարի միս:

Ճագարները լավ կերակրելու դեպքում զգալի կեր-
պով չազանում են և տալիս առատ ճարպ: Այդ ճարպը
գործ է ածվում իբրև կերակրանյութ. բացի դրանից, նա
գործածություն է գտնում անուշահոտությունների և դե-
ղորայքի պատրաստության ժամանակ:

Ի զուր չի կորչում ճագարի մարմնի և վոչ մի մասը.
նրա կաշվի մնացորդներից, ախանջներից, վոսկրներից,
նույնպես և յեզունդներից պատրաստում են բարձր վա-
րակի սոսնձանյութ, վոր գործ է ածվում ատաղձագոր-
ծական նուրբ աշխատանքների ժամանակ:

Մորթելուց հետո ոգտագործում են և նրա փորուտի-
քի անպետք համարվող մասերը: Այս մասերը յեփելուց
հետո տալիս են հավերին և խոզերին:

Այն շրջաններում, ուր պարարտանյութի մեծ պա-
կասություն է զգացվում, ճագարների աղբը գործ է ած-
վում իբրև պարարտանյութ. նրանով պարարտացնում են
զլխավորապես բանջարանոցները:

Այս բոլորը պարզ կերպով ցույց է տալիս, վոր ճա-
գարը վերին աստիճանի ոգտակար կենդանի յե և արժա-
նի յե միանգամայն լուրջ ուշադրություն: Այժմ նա արն-
տեսական մեծ արժեք է ներկայացնում թե Յեփրոպայում
և թե Ամերիկայում: Այս յերկրներում բազմաթիվ բու-
ծարաններում հայտնի մասնագետներ զբաղված են այժմ
ճագարների նորանոր և ոգտակար ցեղեր առաջ բերելով:


ՃԱԳԱՐՆԵՐԻ ՑԵՆԵՐԸ

Մարդիկ առաջ են բերել ճագարների շատ ցեղեր:
Այդ ցեղերը կարելի յե բաժանել յերեք խմբի՝ միս և մոր-
թի տվողների, մորթի տվողների և աղմավազ տվողների:
Միս և մորթի տվողների մեջ հայտնի յեն Ֆլանդրները,
սպիտակ հսկաները և այլն, մորթի տվողների մեջ՝ ուու-
սական սպիտակ կզաքիսային ճագարը, լեհականը, հավան-
նան, շամոլայնը, շինշիլը և այլն, իսկ աղվամազ տվող-
ների մեջ՝ անգորականը:

Ֆլանդրներն իրենց տեսքով շատ նման են նապաստակին, ունեն բազմազան գույներ, գորշ, յերկաթագույն, սև, դեղին և կապտավուն: Ունեն յերկար իրան, ցից-ցից կանգնած ականջներ և ուժեղ մարմնակազմ: Մարմնի ծանրութիւնը հասնում է յերբեմն 9 կիլոգրամի, դրա համար ել տալիս են առատ միս: Մորթին շատ արժեքավոր է, մանավանդ յերկաթագորշ գույն ունեցողներինը:

Սպիտակ հսկաները նման են Ֆլանդրներին, բայց ունեն սպիտակ գույն: Տալիս են արժեքավոր մորթի և կաշի:

Ռուսական սպիտակ կգափսայիս ճագարը ընդհանրապես սպիտակ է, իսկ ականջները, պոչը և դունչը սև: Նոր ծնված ժամանակ այս ճագարը բոլորովին սպիտակ է լինում, բայց 3—5 շաբաթից հետո սկսում են մեր հի-



շատակած տեղերը գորշ գույն ընդունել և ապա հետզհետե մգել և վերջն ել սևանալ: Այս գունափոխութիւնը վերջանում է վեց ամսական հասակում: Արտասահմանում այս ճագարացեղը շատ է գնահատվում, դրա համար ել բազմացնում են խիստ մեծ չափերով: Նրա մորթին համարվում է լավագույնը. մորթու մազերը, ճիշտ է, փոքր

ինչ կարճ են, բայց դրա փոխարեն շատ խիտ են և ունեն մետաքսանման փափկութիւն: Միտը շատ համեղ է, նման է համի մսին, դրա համար ել Ֆրանսիացիք հաճախ անվանում են նրան հափաճագար: Բացի դրանից, նա շատ շուտ է հասունանում, սակավապետ է, դիմացկուն և բազմանում է շատ մեծ արագութեամբ: Միակ պակասութեանն այն է, վոր շատ փոքր է, կշռում է ընդամենը 2—2½ կիլո:


Լեհական նագարը համարվում է ամենափոքրը բոլոր ճագարացեղերի մեջ, ունի մաքուր սպիտակ գույն: Մորթին թանկարժեք է: Այս ճագարացեղն այնքան ել ձեռնառու չէ պահելու համար, վորովհետև շատ փոքր է և պահանջում է մեծ խնամք:

Շառպայնն առաջացել է Ֆրանսիայում: Նոր ծնված ժամանակ լինում է սև, բայց մեկ, մեկ և կես ամսից հետո՝ սկսում է հերափոխվել և հետզհետե ստանալ բաց արծաթի գույն, կարծես թէ ծերանում է: Գունափոխութեանը վերջանում է սարվա տար ժամանակը 6—7 ամսում. իսկ ցուրտ ժամանակը՝ 8—9 ամսում: Ունի շատ թանկարժեք մորթի և համեղ միս:

Շինեիլը նոր առաջացրած ճագարացեղ է, բայց առաջ կերպով տարածվում է ամեն տեղ: Հյուսիսային կովկասում, մանավանդ Պյատիգորսկի շրջանում բազմացվում է մեծ չափերով: Մոսկվայի մոտերքը պատրաստվում է մի իսկուսրան, վորանց պիտի լինեն տասը հազար ցեղական ճագար: Նրա առավելութիւնն այն է, վոր տալիս է փափուկ, խիտ մազերով և թանկարժեք մորթի:

Անգղիական ճագարացեղն ունի ձյունի նման սպիտակ գույն, տալիս է յերկար և մետաքսանման աղվամազ: Ազգամազի յերկարութիւնը վորոշ զեպքում հասնում է 30 սանտիմետրի, բայց անտեսական տեսակետից բավա-

բար ե միանգամայն, վոր նա հասնի 10 — 15 սանտի-
մետրի: Անգորական ճագարը սակավապես է, զիմացկուն
և արագ բազմացող: Մի ճագարը տարվա ընթացքում տա-
լիս է 200— 300 գրամ աղվամազ: Յեթե, ի նկատի ու-
նենանք, վոր աղվամազի կելոն այժմ գնահատվում է
50— 75 ռուբլի, ապա կասկածից դուրս պիտի համարել,
վոր այդ ճագարացեղի պահելը բավական ձեռնաու գործ:



է: Մեծ արժեք ունի և նրա մորթին: Խորհրդային Միու-
թյան մեջ այժմ շատ տեղերում են բազմացնում այդ ճա-
գարացեղը:

Մանրթանալով ճագարների զանազան ցեղերի հետ
բնականաբար հարց է ծագում: Ինչպիսի ճագարացեղ պի-
տի պահել առհասարակ: Այս հարցին անմիջապես պա-
տասխան տալ չի կարելի, վորովհետև դա կախված է այն
հանգամանքներից, թե ինչպիսի պայմաններում են ապ-
րելու ճագարները: Այդտեղ մեծ նշանակություն ունի կլի-
ման, բնակավայրի հարմարությունները, կերանյութերի
վորակը: Պետք է չժողանալ, վոր բոլոր նշանավոր ճագար-


րացեղերը առաջացել են Յեվրոպայում և հարմարված են
այնտեղի պայմաններին: Բացի դրանից, ճագարների ազ-
նիվ ցեղերը չափազանց քնքույշ են և հեշտությամբ չեն
ընտելանում կլիմայական և կենցաղային փոփոխություն-
ներին: Ամեն մի զգալի փոփոխություն կարող է պատճառ
դառնալ զանազան հիվանդությունների և նույն իսկ մահ-
վան, դրա համար էլ ճագարացեղերի ընտրությունը պետք
է կատարել մեծ զգուշությամբ: Այդպես պիտի վարվել
մանավանդ այն դեպքերում, յերբ կամենում են լուրջ
կերպով գրավել ճագարարուծությունը:

ՃԱԳԱՐԱՆՈՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ճագարներ պահելու համար ամենից առաջ պիտի
պատրաստել ճագարանոց: Ճագարանոց պատրաստում են
զանազան տեսակ: Ամենատարածվածը վանդակների ձևն
է, մանավանդ քաղաքներում: Շատերը ճագարներին պա-
հում են հին արկղներում կամ տակառներում: Բայց պի-
տի խմանալ, վոր այդպիսի պայմաններում ճագարները
չեն կարողանում կանոնավոր կերպով զարգանալ: Նրանք
թուլանում են, հյուժվում և յենթարկվում զանազան հի-
վանդությունների, թեպետ և խնամքն ու սնունդը միան-
դամայն բավարար են: Ազնվացեղ ճագարները պահելու և
որանցից մեծ արդյունք ստանալու համար պետք է շինել
յուրանց համար ընդարձակ և լուսավոր վանդակներ, վորոնք
պետք է պաշտպանված լինեն խոնավությունից, միջան-
յուրեք քամիներից և գիշատիչներից: Իրա հետ միասին
պետք է նրանք այնպես շինված լինեն, վոր հեշտ կեր-
պով հնարավոր լինի մաքրել կեղտոտությունները և կա-
տարել ախտահանություն: Նայած ճագարացեղի մեծու-
թյան, վանդակները պետք է ունենան տարբեր մեծու-

թյուն: Սոչոք տեսակի ճագարների համար վանդակի յերկարությունը պիտի լինի 100 սանտիմետր, լայնությունը՝ 65 սանտիմետր, բարձրությունը՝ 75 սանտիմետր, իսկ փոքրերի համար՝ յերկարությունը՝ 55 սանտիմետր, լայնությունը 50 և բարձրությունը՝ 60 սանտիմետր:

Գիտնականների դիտողությունները ցույց են տվել, Վոր ձին ամեն մի ժամում իր կենդանի քաշի ամեն մի կիլոգրամի զիմաց արտաշնչում է 5 գրամ ածխածին, իսկ ճագարը՝ մոտ 8 գրամ: Պարզ է, ուրեմն, Վոր ճագարի բնակատեղը պիտի լինի ընդարձակ և լավ հողմահարվող: Վանդակների համար հարմարագույն նյութը համարվում է ֆաները: Վերջինիս բացակայության դեպքում կարելի



յն գործածել և զանազան տեսակի փայտեղեն, բայց պետք է այնպես անել, Վոր վանդակի պատերի մեջ ձեղքեր չլինեն:

Առանձին ուշադրություն պիտի դարձնել վանդակի հատակի վրա: Հատակի լավագույն ձևը համարվում է կրկնակի հատակը: Պետք է չմոռանալ, Վոր ճագարի մեզնե

իրենից արձակում է շատ ուժեղ և անզուր հոտ և յեթե այդ մեզը վանդակից չհեռանա, ապա այդ դեպքում ապականված սղը շատ վատ կազդի ճագարի վրա և կարող է պատճառ դառնալ զանազան տեսակի հիվանդությունների: Ահա այդ մեզը վանդակից հեռացնելու համար է, Վոր հատակը կրկնակի յեն շինում: Վերջինս պիտի լինի ցանցավոր, Վորպեսզի մեզն անմիջապես անցնի ներքև, իսկ ներքևինը պիտի լինի փոքր ինչ թեք, Վոր մեզն այնտեղ կանգ չառնի և հոտի դեպի այն խողովակը, Վորտեղից պետք է նա հեռանա:

Վանդակի մեջ պետք է լինի և կերանոց ու ջրաման. սրանք պետք է այնպես շինված լինեն, Վոր կերը ցրիվ չանցնի կամ ջուրը չթափվի և ապա մաքուր մնան թե մեկը և թե մյուսը: Վանդակը պետք է ունենա և մեծ դուռ, Վորտեղով հնարավոր լինի վանդակի ներսը լավ մաքրել: Ճագարային անտեսություններում վանդակներին կից պիտի լինի և աղատ տարածություն, Վորպեսզի ճագարները կարողանան որվա ընթացքում մի Վորոշ ժամանակ ման գալ:

ՃԱԳԱՐՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Վոմանք կարծում են, թե ճագարներին կարելի չէ կերակրել անտեսության ավելցուկներով, ինչպես անում են խոզերին: Բայց այդպես կարծողները շատ են սխալվում, Վորովհետև ճագարները ամենակեր կենդանիներ չեն խոզերի և մկների նման. նրանք բուսակերներ են, այն ևս կարող են կերակրվել միայն լավորակ կերանյութերով: Վատ կերակուրն առաջ է բերում փորուռույցք, թունավորում և ապա մահ: Նրանք կերակրվում են թե կանաչ բույսերով, թե չոր նյութերով, որինակ, չոր խոտերով,

սերմերով և թե արմատապտուղներով: Ճագարի մարմինը շատ արագ և աշխատում և շատ շուտ և մարսում ընդունած կերակուրը, դրա համար ել նրան պետք է շուտ-շուտ կերակրել, ամենաքիչն օրական յերեք անգամ, այն է՝ մեկ առավոտյան, մեկ կեսօրին և մեկ ել յերեկոյան: Կերակրելու ժամանակ չպետք է մոռանալ մի հանգամանք: Մտունդը արվում է կենդանուն յերկու նպատակով. կամ նրա միայն գոյությունը պահպանելու համար և կամ դրա հետ միասին՝ նրանից զանազան պրոդուկտներ ստանալու համար: Յերք հարկավոր է կենդանուց ստանալ զանազան պրոդուկտներ, այդ գեպքում պետք է տալ առատ կերակուր: Առատ կերակուր պետք է տալ նաև այն գեպքում, յերբ կենդանին աճում, մեծանում է և կամ յերբ կերակրում է ճագերին: Իրա համար ել ճագեր խնամող մայր ճագարներին, ճագերին, նույնպես և միս ու աղվամաղ տվողներին պիտի ավելի լավ, հաճախակի և առատ կերպով կերակրել: Չպետք է մոռանալ, վոր յերբ ճագեր խնամող մայրերին վատ են կերակրում, ճագերը փոքր են մնում, լավ չեն զարգանում և այնուհետև ամենալավ խնամքն անգամ չի կարող արդյունքներ տալ:

Կերակրելու հետ միասին՝ պետք է ճագարներին տալ և խմելու ջուր: Ճագարներն օրական ամենաքիչը մի անգամ պետք է ջուր ընդունեն: Ջրի պակասությունը վատ ազդեցություն է ունենում նրանց առողջության վրա և հաճախ առաջ է բերում յերիկամների հիվանդություն: Յերբ կերակուրը չոր է, այդ գեպքում պետք է ավելացնել ջրի քանակությունը:

Ճագարի կերակրի մեջ պետք է հնարավորության սահմաններում մտցնել բազմազանություն: Որինակ, կանաչեղենով կերակրելու՝ դեպքում պիտի ամել կերի վրա թեփ, զանազան հատիկներ, բամբակի, կանեփի և կամ

կտավարի քուսպ: Նույնը պիտի անել նաև չոր խոտով և կամ արմատապտուղներով կերակրելու դեպքում: Բացի բազմազանություն մտցնելուց, մեկ-մեկ պետք է կերի վրա աղի ջուր ցանել. դա լավ ազդեցություն է ունենում մանավանդ մորթու վրա: Շատ լավ կլինի, յեթե մեկ-մեկ արվի նրանց ուտելու զանազան տեսակի հոտավետ խոտեր, սրինակ, սամիթ, մաղդանոս, անանուխ, անխոն, յեղեսպակ, կուարանջար, խոտափիկ, յեղինջ և այլն: Բայց յերբեք չպիտի տալ սոխ, սխտոր, վարունգ, վորոնք խիստ փստակար են նրանց համար: Կարտոֆիլը պիտի տալ յեփած վիճակում, հում կարտոֆիլով կերակրելու համար պետք է նրանց աստիճանաբար վարժեցնել:

Այս բոլորից հետո անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ, թե օրական ինչքան նյութ պիտի տալ հասունացած ճագարին: Ահա այդ չափերից մեկը. չոր խոտ՝ 30 գրամ, վարսակ՝ 35 գրամ, թեփ՝ 35 գրամ, սիսեո՝ 12 գրամ, արմատապտուղներ՝ 35 գրամ: Ինչ խոտք, վոր այս չափը կարելի չէ յենթարկել զանազան փոփոխությունների, որինակ, ամառը չոր խոտի և արմատապտուղների փոխարեն կարելի չէ տալ 150 գրամ կանաչ կեր:

ՃԱԳԱՐԻ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճագարն ունի բազմատեսակ հիվանդություններ՝ թե վարակիչ և թե վոչ վարակիչ, վորոնք բավական մեծ ախտորոշություններ ու վնասներ են պատճառում ճագարաբույժներին: Ճագարաբույժները յերբեք չպետք է մոռանան մի հայտնի ճշմարտություն, այն, վոր հագար անգամ ավելի հեշտ է վորոշ առողջապահական միջոցներ ձեռք առնելով կենդանիներին ազատ պահել հիվանդություններից, քան բժշկել հիվանդներին: Տվեցեք ճագար-

ներին ոգառատ, լուսավոր և միջանցուկ քամիներից ազատ ճագարանոց, մաքուր ու սննդարար կեր, դրա հետ միասին ցույց տվեք նրանց նկատմամբ հոգատար խնամք և նրանք ազատ կմնան հիվանդություններից, կանոնավոր կերպով կաճեն, կզարգանան և կբազմանան: Յեւ ընդհակառակը՝ յեթե պահեք նրանց վատ պայմաններում, նրանք իրենց շուտ-շուտ կրկնվող հիվանդություններով կձանձրացնեն և հաճախ կհասցնեն ձեզ հուսահատության գուռք:

Այս ընդհանուր դիտողությունից հետո մի քանի խոսք ասենք ճագարների մեջ շատ տարածված հիվանդությունների մասին:

Ճագարների ամենատարածված հիվանդություններն են՝ հարբուխը, կոկցիդիոզը և լուծը:

Հարբուխ ունեցող ճագարը փոշտում է և հաճախ թաթիկներով արորում քիթը. նրա քիթից հոսում է բուկզբում թափանցիկ լորձ, վոր հետո հետզհետե թանձրանում է և դառնում սպիտակավուն թարախ: Հարբուխը վարակիչ է և հեշտությամբ տարածվում է ամբողջ ճագարանոցում. այդ հիվանդության պատճառ հանդիսանում է մի փոքրիկ բացիլ, վոր շատ նման է մարդկային ինֆլուենցիա հիվանդության բացիլին: Հարբուխով վարակված ճագարը փոշտալու ժամանակ լորձի հետ միասին շաղ է սալիս և բացիլներին, վորոնք հեշտությամբ վարակում են մնացածներին:

Հիվանդության ժամանակ կենդանու բարեխառնությունը բարձրանում է, ախորժակը կորչում. կենդանին հետզհետե թուլանում է, հյուսվում և մի քանի սրից հետո մեռնում: Բուժման միջոց չկա: Ծիշտ է, հանձնարարում են կենդանու քիթը լվալ բորակի վրա լուծուկով, բայց դա շատ քիչ է ոգնում: Լավագուցինն այն է, վոր հիվանդությունը նկատելու դեպքում անմիջապես հեռաց-

նեն հիվանդին: Հարբուխով կարող են հիվանդանալ բայտը հասակի ճագարները:

Կոկցիդիոզը համարվում է ճագարների ամենավտանգավոր հիվանդությունը: Նրան գոհ են գնում հաճախ ճագարների հսկայական խմբեր մեկ և կես ամսականից մինչև չորս ամսական հասակը, մանավանդ տաք - յեղանակներին: Այս հիվանդությունն առաջ են բերում միաբջիջ մակարույժ կենդանիները, կոկցիդիաները, վորոնք բուժեն են գնում կենդանու աղիքներում կամ լյարդի մեջ, յերբեմն ել յերկու տեղում միաժամանակ: Վարակը տարածվում է կենդանու արաթորություններով և կամ սրանցով կեղտոտված կերի միջոցով: Յեթե ամեն սր մաքրվեն ճագարանոցները և կերն ել արվի ճագարներին կանոնավոր միճակում, հիվանդությունն արտոյ կերպով չի տարածվի: Ախտահանելու համար ճագարանոցները պետք է շաքաթը մի անգամ կրոճ սպիտակացնել:

Թա հարբուխով և թե կոկցիդիոզով հիվանդ ճագարների միսը կարելի չե ուտել, միայն ուտելու ժամանակ հարբուխով հիվանդի գլուխը և կոկցիդիոզով հիվանդի լյարդը պետք է փոշնչացնել:

Լուծ հիվանդությամբ տառապում են հաճախ ճագարներնա, առաջանում է կամ վատ տեսակի կերակրից և կամ կանաչ կերի առատ գործածությունից: Այս իսկ պատճառով ել լուծի դեպքում կանաչ կերը պիտի փոխարինել չոր կերով, պիտի տալ յեփած ջուր և կաղնու տերեւներ:

Բացի այդ հիվանդություններից, ճագարներն ունեն և այլ հիվանդություններ, որինակ, տուբերկուլոզ, ուղեղի բորբոքումն, թոքերի բորբոքումն, քոս, քաշալություն, գանդան տեսակի վտանգավոր վորդեր և այլն:

Ի նկատի առնելով ճագարների տված ոգուտները՝ Խորհրդային Միության մեջ այժմ շատ լուրջ ուշադրություն են դարձնում ճագարաբուծության վրա: Ինչպես հայանի յե, Միության մեջ կատարում են մորթիների ահագին մթերում, վորի մի մասը գործադրվում է յերկրի ներքին կարիքները վրա, իսկ մյուս մասն արտահանվում է արտասահման: Յեվ ահա, միճակադրությունը ցույց է տվել, վոր ճագարի մորթիները 1929-30 թվին կազմել են մթերված մորթիների 7 տոկոսը, իսկ 1931 թվին՝ 12 տոկոսը: Ինչ վերաբերվում է 1932 թվին, ապա պլանի համաձայն այս տարում ճագարի մորթիները պիտի կազմեն արդեն մթերման մոտ 30 տոկոսը, ասել է, ուղիղ յերկու և կես անգամ ավելի, քան նախորդ տարում:

Տեմպի արագությունը շատ պարզ է:

Նման չափով մթերում կատարելու համար անհրաժեշտ է, իհարկե, խիստ կերպով զարգացնել ճագարաբուծությունը: Մի բան, վոր այժմ կազմում է համապատասխան մարմինների հողածության ամենամեծ խնդիրներից մեկը: Իրա համար շատ տեղերում կազմակերպել և կազմակերպվում են բազմաթիվ խորհանտեսություններ, վորոնք պիտի զբաղվեն գլխավորապես ճագարաբուծությամբ:

Ճագարաբուծական անտեսություններ են կազմակերպվում և կորսնտեսություններում: Սույն գործարաններն ու հիմնարկությունները նույնպես պիտի ունենան իրենց սեփական ճագարաբուծարանները, վորոնք պիտի տան մեզ ի միջի այլոց առատ և լավ տեսակի միս:

Այս բոլոր ձեռնարկությունների հաջողության համար անհրաժեշտ նյութական ծախքերը հողալու համար

պետությունը վորոշել և ներդրումներ կատարել մոտ 30 միլիոն ռուբլու սահմաններում:

Բացի դրանից, ճագարաբուծության հաջողության համար անհրաժեշտ է ունենալ մասնագետների վորոշ կազմ: Այդ ուղղությունը ևս պետությունը կատարում է և պիտի շարունակի կատարել գործնական քայլեր: Նախատեսված է մինչև 1933 թիվը պատրաստել մոտ 25 հազար մասնագետ ճագարաբուծներ: Ճագարաբուծության վերջրած այս տեմպը պարզ կերպով ցույց է տալիս, վոր մոտ ապագայում ճագարը պիտի դառնա Խորհրդային Միության անտեսության մեջ կարևորագույն գործոններից մեկը: Վերջապես չմոռանանք ասել և մի բան. ճագարաբուծական անտեսությունների աշխատանքի բնույթի մեծ հնարավորություններ է տալիս պիտներական կազմակերպություններին լայն մասնակցություն ցույց տալու նրա մեջ և մենք այժմյանից կարող ենք ասել առանց վորևե կասկածի, վոր պիտներական կազմակերպությունները խանդավառությամբ կկատարեն իրենց պարտադեմությունը յերկրի սոցիալիստական շինարարության այս բնագավառում նույնպես:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

4

	յերես
1. Սոցա	5
2. Գեանանուշ (արախիս)	21
3. Կառուչուկ և գուտտապերչ	33

ՅԵՐԿՐՈՐԿ ՄԱՍ

1. Շերամ	59
2. Առգար	91

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



« Ազգային գրադարան



NL0143453

16792

113

10